

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>


E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Բ

Ս Կ Մ Ս Կ Մ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՐԱՓ

(Իրապատումներ)

«ԴԻՉԱԿ ՊԼՑՈՒՄ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2011

ԼԱՎ ՕՐԵՐԻ ՀՈՒՑՍՈՎ

Բանասկային թերթի խմբագիր Էի նշանակվել: Արմեն Հովհաննիսյանը, հորս հետ ընկերության արքով, մի օր եկել էր շնորհակալորելու:
Դժվար ժամանակներ էին, ինքը, կարծես, գրական ստապուրեզից մի կողմ բաշտված էր: Հրաժեշտին երեք-չորս բանաստեղծություն թողեց: Իր նման համեստ սասց. «Կկարդա»:

«Իսկ մուսանները չեն լռում» խորագիրը բանասկային թերթում Արմեն Հովհաննիսյանի այդ բանաստեղծություններով բացվեց:
Հետո եկավ նրա արձակի ժամանակը: Դարձյալ՝ «Մարտիկ»-ի էջերում:
Հետո գրեց հանրասկսական թերթում:

Այս գիրքն առնվում է, անհա, լրագրային այդ հրատարակումները: Բայց պահեք օրախոսիչի պատումներ չեն: Կվեյի ճիշտ՝ ստավկասպես օրախոսիչի չեն, թեև գրվել են օրվա միտմաներով:

Ծառն ինչպե՞ս է մի գիշերում ծաղկում:
Ահա այդպես էլ Արմեն Հովհաննիսյանն է հոգու կոտակումները մի պոռթկումով պատմել: Եվ էլի անցել էնարական բանաստեղծությանը, որ, փաստ է՝ ՄՍԵՂ: ԾՈՂԻՆ, դեռ գրվում են:

Լավ, թե վատ՝ սովորություն ունեւ՝ տարին մեկ անգամ կամ շատ անգամ կարդում եմ ծանոթ հեղինակների գործը: Վերջերս ձեռքս ստա Արմեն Հովհաննիսյանի «Հեռաստանների կամեջը» ժողովածուն:

Շուրջ 40 տարում նրա գործը որեւէ երանգ չի կորզրել:
Վկան նաև Արմեն Հովհաննիսյանի արձակ գիրն է, որ ուրիշ մեկի հետ ջլիտովելու չափ ինչնորայն ես ինքնակա է:

Ինչու՞ է տալագրվում այս գիրքը:
Կարծում եմ, որպեսզի մարդ կարդա ես իրեն ՄԱՐԴ. գիտակցի՝ իր ԺԱՄԱՆԱԿԻ մեջ: Կկարդա՞ն, կզգա՞ն՝ դա սղոյեն հեղինակի խնդիրը չէ:

Եթե ոչ այսօր, սպա վաղն անայսաման մեկը թերթերում է այս սխտոր-լուսավոր-ազնվացնող շարքը ես երանի է ստելու մեզ, որ կրողն ու կերտողն ենք եղել այդ ԿՅԱՆՔԻ:

Եվ նրա ԺԱՄԱՆԱԿԻ իմաստալիորվելու է, ինչպես Արմեն Հովհաննիսյանն է իր ԺԱՄԱՆԱԿԻ իմաստալիորել նախնյաց նվիրումի պայծառ հուշերով, որ իր համար անզգալից հայտնվել են ներկայում: Որպեսզի լավ օրերի հույսով բողբոս մեր ԺԱՄԱՆԱԿԻ՛՛ չմոխեմ, այլ կրենք մեր բաժին ստատակամբը:

Վահրամ Աթանեսյան

Հովհաննիսյան Արմեն
Հ 854 Քարտի: Իրատարումներ /Արմեն Հովհաննիսյան: Խմբ.՝ Վ.Աթանեսյան.
- Ստեփանակերտ: Դիզակ պրուս, 2011. - 80 էջ:

ՀՏԳ. 891.981 - 3 Հովհաննիսյան
Գ.ՄԳ. 84 Հ - 4

ISBN 978-99941-2-519-7

©Հովհաննիսյան Արմեն, 2011

ՆԱՄԱԿՆԵՐ ԳՅՈՒԴԻՑ

Վերջերս գյուղից նամակներ եմ ստանում «Գուն-Կիխոտ» ստորագրությամբ: Չարմանալին ոչ այնքան դրանց բովանդակությունն է, որքան այդ տարօրինակ ստորագրությունը: Կասկած չունեմ, որ այն կեղծանուն է, որի տակ թաքնվում է ինչ-որ մեկը՝ հավանաբար նպատակ ունենալով չնստնել իր իսկական անուն-ազգանունը: Ինչքան հայտնի է՝ Արցախում ոչ ոք իր երեխային այդ անվամբ չի կնքել ու չի էլ կնքի: Ինչեւէ, իր գործն է, Տերն իր հետ: Կարելորն այն է, որ այդ նամակներն ինձ հուզում են իրենց անկեղծությամբ, աննիջականությամբ ու ճշմարտությամբ: Դրանք համեմատված են նաև մի այնպիսի հումորով, որ խածելուց ոչ թե ցսվ, այլ մի հաճելի մրմուռ են պատճառում ես ստիպում մտածել ինչ-ինչ բաների մասին: Հեղինակը դրանք, անձնական բնույթով հանդերձ, միաժամանակ համարում է «բաց նամակներ» ես գտնում, որ անգամ ես կարող եմ դրանք հրատարակել: Եվ այսպես...

Նամակ առաջին

Հարգելի բարեկամ, անունդ էլ մոռացել եմ, ուստի, խնդրում եմ քո ներողամտությունը՝ հույս ունենալով, որ առաջին իսկ նամակիս պատասխանում այն կբաշխես ինձ: Ցանկալի է, իհարկե, բայց հոգ չէ, հակառակ դեպքում կշարունակեմ դիմել այնպես, ինչպես սկսել եմ այս նամակը: Դրանից ոչինչ չի սուժի, պարզապես՝ կարող է տարօրինակ թվալ, թե ինչ գործ ունեւմ քեզ հետ ես ինչու եմ խցկվում քո կյանքի մեջ: Բանը նրանում է, որ ես հետեում եմ քեզ, ծանոթ եմ քո «Գյուղական Էսթիզներին»: Տեղյակ եմ նաև, որ դրանց համար անգամ մրցանակ ես շահել: Բարով վայելեա: Երեւի այսբանից հետո էլ կցանկանայիր իմանալ կարծիքս «Էսթիզների» մասին: Ինչու չէ՞ խնդրում եմ միայն հավակնտության մեջ չմեղադրես ինձ: Քո էսթիզներն ընդամենը ընթերցվում են, հասկանում եմ նա՞ ընդամենը... ես անգամ ուշադրություն են հրավիրում քո ստորագրության վրա: Ինձ դուր է գալիս, որ դու այն հարգում ես: Ափսոսում եմ միայն, որ դու ընդամենը խայծում ես, ոչ թե կծում, ինչպես պատանության տարիներին մի օր մեր Բողար շունն այնպես կծեց քո ազդրից, ջիներն այնքան խրեց ջլերիդ մեջ, որ տատղ մի ամիս շարունակ լոբու հատիկներ դնելով շան ժանկերի տեղը՝ հազիվ հասցրեց բուժել քեզ: Երեսի հիշում ես, որ կատարու-

թյան դեմ էլ արևկում արին՝ ենթադրելով, թե մեր Բողարը կարող է կատաղած լինել...

Իմիջիպայոց, չգիտեմ՝ բուժման այդ միջոցի մասին այսօր որևէ մեկը պատկերացում ունի՞, թե՞ տասող այդ գաղտնիքն իր հետ տարավ Էն աշխարհը: Ողորմի՛ նրան:

Սակայն այս ամենը մի կողմ թողնենք՝ անցնենք բուն նյութին: Ջգում եմ, որ գյուղական թեման ծանոթ է քեզ, հուզում է, բայց ես պատկերացնելով, որ այն նման է անձայր ու անհատակ ծովի, թվում է, թե դու լողում ես մակերեսին: Խի՛ստ եմ վնաս չունի: Ախր ներկայիս գյուղատնտեսությունը, գյուղ ու գյուղացին խնդիրներ ու հոգսեր ունեն: Անթիվ են դրանց ստորգետնյա խոյթ ու խորշերը: Չեմ կարծում, թե դրանք ավելի պարզ ու խորությամբ պատկերացնելուդ չի օգնի գյուղնախարարի հայտնի հեռուտահարցազրույցը, եթե լսել ես: Ասեմ՝ ինձ շատ դուր է եկել, երեսում է՝ մարդը մտավորական է, մտածել գիտե, բայց մի այնպիսի բեռ է վերցնում ուսերին՝ վախենամ՝ չդիմանա...

Գյուղնախարարը գտնում է, որ գյուղատնտեսության ներկայիս անախիթար վիճակը բարելավելու համար պետք է սկսել՝ անտեսությունների խոշորացումից: Կարծես չգիտե, որ նախկինում, ախր, այդ անտեսությունները խոշոր էին, հարուստ: Գիտե ես ցավով էլ նշում է, թե ոնց քանդեցին, բարաստակ արին, փոշեցրին: Այսինքն, հիմա մնում է ամեն ինչ սկսել զրոյից: Դե, դու ինչ հասկանում ես, որ դժվար է լինելու, անասելի դժվար... Մտացվում է շենք ու շնորհքով շինած տունդ բանդեն, հողահատակ անեն, եղած չեղածը տանեն՝ տակին բան չթողնելով, ես սկսես նույն տունը նորից կառուցել: Կկառուցե՞ս, ինչպես չէ: Միջոցներ՝ որստեղի՛ց: Իսկ բանդողը գնա առոգ-փառոգ քե՛ք անի ու մեկը ջինի, ձեռքը գարկի մոռթին, ասի՝ ախպեր, էլ ոնց է, որ ստամոքսի խանգարում չես ունենում, ախր, կերածդ աղի ու լեղի է... Է՛հ, լավ է՛, հետքը բշտ՞ղն ով է, հեռու չգնանք, դառնանք մեր դարդ ու ցավին...

Երեկ վերեններից մի բանի հոգի էին եկել գյուղ: Այլոց թվում ինձ էլ կանչեցին համայնապետարան: Ներս մտնելուն պես նրանք գրեթե գրոհեցին վրաս:

Մի ասա՝ տեսնենք՝ ինչո՞ւ հողի հարկը, տուրքերը, վարկդ չես մարում:

Մտածեցի՝ ինչ ասեմ, որ լավ լինի: Ժամանակ շահելու նպատակով խոսքս կտուրը գցեցի:

Ներեցեք, բայց ձեր մեջ ո՞վ է մեծավորը:

Մեկը թե՛

Ես... բայց ի՞նչ նշանակություն ունի, պարտքերդ պիտի տա՞ս, թե ոչ...

Որստեղի՛ց...

Ինչպե՞ս թե: Վար ու ցանք չե՞ս արել...

Վարել եմ, ցանել ու... չեմ հնձել: Երաշտը՝ մի կողմից, կրծողները՝ մյուս...

Ուրեմն՝ ի՞նչ...

Գիտե՞ք ինչ, ընկեր մեծավոր, ասում եմ, մեր գյուղում մի Աննի-բար կար, ողորմի հոգուն, նման դեպքերում ասում էր՝ մեռնես օրենքին, օրենքից չես փախչի, կունենանք՝ կտանք:

«Մեծավորները» նայեցին իրար երեսի ու ծիծաղեցին: Կատակը՝ կատակ, ամա դե էս անգամ լավ պրծա: Ասում եմ՝ «Էս անգամ», որովհետև պարտքից պրծումն չի լինի, մինչեւ տակից դուրս չգաս: Պարտքը նման է շան հաչոցի, կհաչի այնքան, մինչեւ չհաչելը... Հոյս ունեմ՝ էս տարի ձեներ կկարի: Հրե՛ն, արտերս լավ թիսկալել են, կարծես սանրած լինեն: Էլ ինչից է՛ նրանից, որ իմ սերմացուն տեղական էր ու սեփական: Ժամանակին ցանել էի, տեղումներն էլ, օրհնյալ լինի Աստված, ժամանակին էին: Էլ վախ չունեմ: Ամա դե ասում եմ, երկյուղով նայում երկնքին՝ վա՛յ թե Էն անտերը... Երեսի կռահում ես, որ խոսքս կարկուտի մասին է: Տերը մի արասցե, թե չեկավ՝ պարտքի հերը կանիծեմ... Ավելորդ չհամարեմ ու նաեւ նկատել տամ, որ իմ արտերի հարեամությամբ Հրայրի, Բենիկի, Մարտիկի ու այլոց արտերը լղար են, տեղ-տեղ՝ բոսակ: Հոգուս մեղք չանեմ՝ ցավում եմ, տակ եմ տալիս, գլուխ, ու հանգում էն մտքին, թե դա հավանաբար սերմացուից էր: Բանը նրանում է, որ անցյալ տարի մկնանման կրծողները սունաններով հացահատիկ էին փսացրել: Որպես բերքի կորստի հատուցում՝ պետությունը մի-մի պարկ սերմացու էր բաժանել: Ես այդ սերմացուն չցանեցի, ուրիշները ցանեցին, ես՝ անհա արպունները...

Խելքի պտուկներ՝, երբ եք գլխի ընկնելու, որ սրտասահմաններից ներմուծած սերմնացուն մեր հողերը դժկամությամբ են ընդունում: Գրանից բացի էլ՝ նրանք սովոր չեն ողորմության...

Էսպիսի բանե՛ր, հարգելի բարեկամ, գլուխ էլ ցավեցնում եմ: Բան չկա, կցավի, կցավի, ու ցավը մի հետք կթողնի... Էն էի ուզում ասել՝ պարտքերս մարելու մի ուրիշ հոյս էլ ունեմ՝ խաղողը: Գրանից տասնմեկ արիս ունեմ, ամեն մեկը ութսուն մետր երկարությամբ, հազար հարյուր վազ: Վազից՝ միջինը երեք կիլոգրամ, թե հաշվենք՝ մի տոննայից ավել: Հաշվարկ է էլի, անում եմ, թեպետ ճտերն աշնանն են հաշվում: Կարծում եմ՝ հուսախար չեմ լինի: Ժամանակին փխրեցրել եմ, Էտել, կորակապն արել, ամա դեռ չեմ ոռոգել: Ասում եմ՝ հերթը գա, ջուր կտանք, կոռոգես, բայց թե հերթս երբ է գալու՝ հայտնի չէ: Իմ հաշվով՝ անցել է: Գիտե՞ս ինչ, մեր գյուղում հիմա նորագույն հասպվում է՝ ԽՕԲ: Վերձանե՛մ,

թե՞ պետք չէ: Կհասկանաս, չեմ կարծում, թե հայոց լեզվին չես տիրապետում... Թե ջուրը տան, ոռոգեմ՝ բարձր բերք կստանան: Մնում է այժմվանից մտածեմ սրկուսների համար թունաբույժի կատներ ձեռք բերելու մասին: Ինձ պետք կլինի մի տասը հազար դրամ: Հավանաբար, պարտք անեմ, բան չկա, պարտքի վրա՝ պարտք: Մեկ է, տալու եմ, չե՞, իհարկե՞՝ աշնանը... Երբ ճտերը հաշվեմ: Հոյս ունեմ՝ լակ ձվեր չեն լինի... Առայժմ՝ այսքանը:

**Հարգանքներով՝
Դոն-Կիխոտ**

Նամակ երկրորդ

Հարգելի բարեկամ, ստացա առաջին նամակիս պատասխանը: Չես կարող պատկերացնել, թե ինչքան եմ շոյված նվաստիս նկատմամբ քո ուշադրությունից: Ինչ էլ լինի՝ մեր մանկության եւ պատանության մտերմությունից մի բան մնացել է մեզը, ինչպես աշակերտական մեր դասագրքերում մնացած անմոռուկների ջորացած թերթիկների՝ տակավին պահպանվող բուրմունք: Ուրախ եմ, որ քո «Էսիզների» մասին իմ դիտողություններից չես նեղացել, քո ասելով՝ նույնիսկ, «գոհունակությամբ» ես ընտրվել: Մի բանի անգամ կարդացի հումորով թրթռացող նամակդ, եւ չտեսնված հրճվանք պատճառեց ինձ մանավանդ անունդ՝ Սանչո: Սանչո Պանսա: Այ թե նուկաուտ էր հա՛, ա՛յ թե ինչպիսի ծաղրատերն ես եղել: Ուրեմն, եթե ես Դոն-Կիխոտն եմ եղել, դու էլ որոշել ես հանդես գալ որպես Սանչո: Ես, իրոք, Դոն-Կիխոտն եմ, դա իմ իսկական անունն է: Բայց դու ինչո՞ւ ես թաքնվում Սանչոյի թիկունքում... Ինչե՛տ, ընդունե՛նք, որ դու Սանչոն ես, ես՝ Դոն-Կիխոտը, ես... մեր հաշիվը դարձավ մեկ-գրո՞՝ հոգուտ Սանչոյի:

Եվ այսպես, սիրելի Սանչո, ես նոր հասկացա, թե ինչպես այլես չպետք է գրես կամ այսուհետեւ ինչպես կարելի է գրել, երբ հանկարծ տեսա մոշե ցանկապատից վեր խոյացող ծաղկած սաղորենին: Ճերմակ, կաթնաթյուր ծաղիկների բուք էր ցանկապատի վրա, բվվում էր սաղորենին մեղունների պարսից ու կարծես ձյան փաթիլներ էին տեղում մոշի մուգ կանաչ տերեւների, ուր խոցոտվում են սպակեփայլ ու սուր փշերից: Սաղորենու բունը չէր երեւում, կորել էր մոշուտի մեջ եւ միայն գմբեթաձեւ, ճերմակափառ գլուխն էր, որպես մի հսկայական ծաղկեփունջ, դրել ցանկապատի վրա: Ինչքան էլ մոշուտը փորձում է խեղդել նրան, այնուամենայնիվ՝ բռնկել է ծաղկունքով՝ հաշվի չառնելով ոչ մի անակնկալ, նույնիսկ՝ վաղ գարնանային ցուրտ ու անգամ ուշացած ձյունը: Գիտե՛, որ ինչ էլ լինի՝ կպողաբերի ու թե մարդու ձեռքն էլ չհասնի իրեն, մոշու մագիլների

ու սուր փշերի վրայով՝ դեղին, արեւահամ գնդերով կաթուկ կտա մացառի մեջ, միայն թե պահպանի ինքնությունը, բնության արարածի իր տեսակը... Ես այս չէի կարում սաղորենուց, թեպես մտածում էի Արեւիկի հետ առաջիկա հանդիպման մասին, երբ հանկարծ, տարօրինակ բան, մութովս անցավ զուգահեռ անցկացնել սաղորենու եւ Արեւիկի միջեւ, թե ինչ կապ ունեն իրար հետ՝ ինչպ էլ դժվար թե կարողանամ բացատրել...

Ցանկապատի վրայից նայեցի տան բակին: Ջրի ծորակի տակ Արեւիկը դույն էր ողորդում, որ տանի կովը կթի: Բակի թթենուց կապած հորթուկը զինքն ուտում էր, փորձում կտայն արձակել, ու չէր հաջողվում: Պարանը հարում էր հորթի վիզը, ու ցավից մզգում էր՝ դժկամությամբ նայելով Արեւիկի կողմը, չսպասուրիկ ոտերը երեխայի նման գետնին դոփելով: Միրուն հորթ է, ճակատին՝ նորալուսին, ներսից տաք շունչ էր փչում նրբագեղ տունգերից: Մայր մտնող արեւի վերջին շողերը ոսկուն էին տալիս տանիքին, թթենու բաց կանաչ սաղարթների վրա, հորթի բարակ լանջին, բակի սալահատակին, հուրիբառում լուսամուտների մաքրամաքուր ու թափանցիկ ապակիներում:

Արեւիկի տեսքը ներքին լարվածություն էր պարունակում: Թուխ, ածխազույն, կարճ կտրած մազափունջը կախվել էր ճակատն ի վար ու ծածկել մտախոհ դեմքը: Արեւիկը, տակավին այն դեռահասը, որ բաւներեք տարեկան էլ չկար, երբ այրիացավ, դարձավ երկու մանկահասակ աղջիկների եղերամայր: Այն ժամանակ աղջիկներից ավագը՝ Անուշը, հագիվ ջուր, կրտսերը՝ Սրբուհին, մեկ տարեկան էր: Անուշը, իսկապես անուշ աղջիկ, տասներեք տարու մեջ, երեսը լուսնի նման բոլորած, ինչպես հայտնի երգում է սոված, նրբաբիթ, շուրթերն ուռուցիկ, աչքերը՝ բաց կապույտ՝ բանց կեսօրվա երկինք, մարմինը՝ լիքը-լիքը, որ ասես մի նախասնձեղի առողջությամբ է բուրում: Սրբուհին՝ հոր նման պուճուր-մուճուր, շիկահեր, թախճուտ աչքերով, որ թվում է, թե այդ թախիծը մթնաշաղի նման հիմնովին բնակվելու է նրա խելացի աչքերում ու մտամփոփ հայացքի մեջ: Ամուսինը՝ Հովիկը, դե էն Հովիկը, որի մասին Ավոն ասում էր՝ Էդ պուճուրին մուղայիղ կացեք, մեր հաղթանակի կեսը թշնամու նկատմամբ նա է շահելու, ոտխի տանկերի դեմ տեղադրած իր հազարավոր հակատանկային ականներով, հենց էն Հովիկը, նույն ինքը՝ Հովհաննես Սողոմոնյանը, գոհ գնաց իր իսկ տեղադրած ականները գերծելիս, ինձուններեքի սպորիկ բաւներեքին, այսինքն՝ եղեւնի օրվա նախօրյակին:

Միրելի Սանչո, առիթը եկավ եւ չեմ կարող զուգել վրդովմունքս, թե ինչու Հովիկի անունը ոչ մի տեղ չի հիշատակվում: Պարզեւեր են տրվում ողջերին ու մեռածներին՝ հետամահու թե կենդանի, իսկ

նրա մասին՝ ոչ մի խոսք: Մինչդեռ ստում ենք՝ ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել: Բայց Հովհիկը... մի՞թե Ավոյի խոսքերը նրա մասին ոչինչ չարժեն... Էլ չեմ խոսում Արեւիկի եղբոր՝ Արտակի մասին, որ նույնպես հերոսաբար զոհվեց Մարզիկուն գրավելիս, հենց այնտեղ, ուր ընկավ լեգենդար Ավոն: Արտակն էլ զոհվեց՝ որք թողնելով մանկամասակ, ջուխտակ տղաներին ու միամորիկ սոջկան: Մի՞թե որեւէ մեկի մտքով չի անցնում, լինի հրամանատար, թե մարտական ընկեր, որ նրանց հիշատակի օգտին որեւէ բան մտածի...

Սիրելի Սանչո, ես աննկատելի հեռացա ցանկապատից՝ երկար մտորելով Արեւիկի մասին: Ըստիւմ-ստիւմ հարս էր, ամուսինը՝ գլխավերելը, թիկունքին՝ սկետորն ու կետրայրը: Երջանկության բանալիները գրայանում էին, եւ ինքն էլ տեղովը մեկ սեր էր բուրում: Տունն արդեն ճանաչում էր իրեն, ձեռքն էլ գիտեր մառանի տեղը եւ ձեռքն այդ իր դրոշմն էր թողնում տաշտ ու խոնչայի վրա, ժպիտը՝ թոնրից համաձայն հացերին: Տան ներսում օրորոց էր գնում ու գալիս ու մանկան բույր էին շնչում տան պատերը, քունջ ու պոճախ: Տան տանիքից վեր, բարձր-բարձր ու կապույտ-թափանցիկ էր երկինքը, որ մի օր սեւակնեց, որոտաց, փուլ եկավ տան ու տանիքի վրա: Սկետորը չդիմացավ որդու կորստին, նվաղեց, մարեց-մարմրեց: Կետրայրը հանկարծակի, ասես կայծակնահար եղավ ոտքի վրա՝ ինչպես ծառերն են կանգնած մահանում: Կետրայրը՝ Կրոնց Գիրիշը, որին «Կես կոլխոզ» փոթ անունն էին տվել, որ իբր կոլտնտեսության եկամուտների կեսն ինքն էր բերում: Ուրիշ բան որ չասեք՝ տարեկան 100 տոննա խաղող էր արտադրում, չհաշված, որ հրաշալի որմնապիղ էր, հմուտ հացագործ: Տոն ու հանդիսավոր օրերին նրան էին ամբիոն տրամադրում, խոսելում էլ մի հատ էր, սաք-սաք, տեղը-տեղին, եւ խոսքն էլ՝ իր բռնած գործի պես վարակիչ: Գոնե սպրեր ու թիկունք լինէր Արեւիկին, տակը տակ թողեց, գլուխը՝ գլուխ ու ամեն ինչ՝ Արեւիկի վզին:

Հիմա Արեւիկը գիտե գոմի հուրը: Հանդից դարձող նախրի մեջ անախալ ջոկում է իր կովի բառաչը, որ առաջինն է մտնում գյուղ, շտապելով, վազոյով հորթի վրա, որ նոր է ծնել: Հիշում է՝ ոնց էր կետրայրը ցախավել կապում, որի կունթոռնը թողել էր գոմի մի բունջում, իր մշտական տեղը: Մի օր ձեռքը առավ, երկար տնտղեց շոռոմոռ տալով, փորձեց ինքն էլ կապել ու առաջին փորձը վատ չտառցվեց: Գիտե եղան ու պարանի տեղը, կետրայրը ցակատը գոմի որ գերանի տակ էր խոթում, որ աչքի առաջ լինի, կիթից առաջ հորթին մատրի որ կեռից էր կապում: Սովորել էր հնձած խոտից կիպ անել, կրել, կիպերը կիտել գոմի տանիքի տակ, որ անձրեւ ու ձյուն չթակի, փթի, փչանա, ու երբ ձմռանն օրական մի կիպ է իջեց-

նում, տանում ախոռ, ցվցվելիս խոտի միջից խամրած խնձորեծաղկի բույրից ցնդում է գոմի տհաճ հուրը: Ընտելացել է հող մշակելուն, գիտե վազի լեզուն, էտը, կորակապը, անդալիս անելը, շարը ետ տալն ու բջատելը: Միայն թե իր բաժին երկու հեկտար հողը, սեփականաշնորհումից հետո, մի երկու տարի օգտագործեց, առաջին տարին՝ որպես խոտահար, երկրորդ տարին՝ ցորեն ցանեց, որ երաշտի բաժին դարձավ: Տեսավ, որ ուժը չի պատում՝ սերմացու էր պետք, դիզվառելիք, հերկի, հնձի վարձ ու վճար, տվեց վարձակալության՝ տարեկան չորս հարյուր կիլոգրամ հացահատիկի պայմանով: Հոգնում է, շատ է հոգնում, եփել-թափել կա, լվացք ու խմոր անել, սպա գնալ դպրոց՝ հավաք-տեղակ անելու, մինչեւ դասերն սկսելը: Ամբողջ օրը վազ է, հայրենի հող կոչվող այս հողի համար ընկած ամուսնու հայրենիքը, օջախն ու սունն այդպես է պահում, տուն, որ միաժամանակ թանգարան է դարձել՝ պատերից կախված մեծադիր նկարներով, սեւ շրջանակների մեջ, որ լուռ ու խորհրդավոր, բազմանշանակ հայացքներով, անձեն-անձպտուն խոսում են իր հետ, խորհուրդներ տալիս, խոսք ու իրատ, հետո անտեղ-մեղավոր ժպտում, կարծես ասելիս լինեն՝ Արեւիկ ջան, ինչ արած, մի նեղամա, դիմացիր, դեմ կաց: Դեմ չկենա, չդիմանա՝ ինչ պիտի անի, լուծն ընկել է վզին, պիտի ձգի, բաշի: Մի դիմանալ է մնում, ուրիշ ի՞նչ՝ տառապանքի ուղիներով տանել իր բեռը, պահել-պահպանել որբեայրու կանացի իր տեսակը...

Սանչո ջան, այսպիսի բաներ, Սանչո:
Առայժմ:

**Բարի մտղթանգներով՝
Դոն -Կիխոտ**

Նառնակ երրորդ

Սիրելի Սանչո:

Այս անգամ, սիս, թե ինչի մասին:

Երեք օր առաջ Ջինայի ունգամիջից սղուն կաթում էր, հոնգամեջը ետ չէր գնում, ու Գրիշան պատճառը գիտեր: Կինը սրտինը թափել էր գլխին, մարդը թթուն խմել էր ձեն ու ծպուտ չէր հանում: Մտածել էր, թե մեր Ջինախոսն է էլի՝ մայիսյան երկինք, որոտաց՝ իմացիր, որ կարկուտ էլ կտեղա: Տղա ես՝ մի կարպետ առ գլխիդ: Փորձել էր կատակով մեղմել կնոջ զայրույթը՝ կատակը չէր անցել: Ասել էր.

-Ջինախոս, որ ձի ունենամ, որտեղի՞ց կապեմ:

Ջինախոսն թե.

-Դու ձի չես ունենալու, բունը էշն է: Բայց թե ձի ունեցար՝ լեզվիցդ կկապեմ:

Գրիշան լախալախ ծիծաղել էր ու ծիծաղից ուտերը ցնցվել էին:
-Արա, իմ արտից արյուն է կաթում, դու խնդումնորում ես: Ասացիր՝
երեւ էնկտար աշնանացան ես արել, կեսը՝ ցորեն, կեսը՝ գարի, Չի-
նախոս, ամսվազն՝ 4 տոննա... Դե հիմա ինձ տուր՝ բեզ տամ: Բե-
րածը էս չի՞, երկու տոննա: Հեկտարից քանի՞ ցենտներ է անում,
հաշվել էս, նախկին համբավավոր բրիգադավար... որ ասում էի՝
ձիդ պահիր, էլի: Անսվա թոշակս էն գլխից խլում էիր, թե վարի հա-
մար դիզվառելիք պիտի գնեմ, մայիսի թոշակն էլ, թե՛ հնձավարձ
պիտի տամ: Գոնե խարջածդ ետ բերեիր...

Երեւ օր առաջ Չինայի ունգամիջից աղուն կաթում էր, դանակ
տայիր՝ արյուն չէր կաթի: Իսկ Գրիշան համբերությամբ սպասում
էր «երկնքի» բացվելուն: Երբեմն խոսք էր գցում՝ Աստված ավածը
շատ չհամարի: Ասում էր իբր ինքն իր համար, բայց՝ ի ականջ կնոջ:
Մտածում էր՝ պակասը թթից կլրացնի: Բայց դե թթի առաջին
թափն էլ քանին տարավ: Կինը նախազգուշացրել էր, ստելով՝ թա-
փենք: Գրիշան թե՛ վաղը: Ինչ աներ, նախիրն արուտի տանելու իր
հերթն էր:

-Արա, Լենինն ի՞նչ է ասել...
-Լենինը հնարել է, - Գրիշան նորից էր կատակել, - իբր Էսօրվա
գործը վաղվան չեն թողի:
-Դե, հիմա բո՛ւ էն քաշած ցորտ-ցորտ արտից մի բաժակ խմիր,
վրան էլ մի կանաչ ու շաղը վրան վարունգ հուպ տուր...
-Ի շահ, խուվա՛յ...
Թթի երկրորդ թափից օղի թորեց ու կնոջը չասաց՝ քանի լիտր:
Քանիսը կար:

Աստծո տվածը չեն հաշվում: Ինքը՝ խմիչքի մոտ մարդ, եկող-գ-
նացողն էլ՝ դրան տեղյակ: Չի հերիքի, հրեն խաղողը հասնում է:
Անցյալ տարի երեւ տոննա չէ՞ր, թորեց, օղին՝ օղի, գինին՝ գինի: Էս
տարի երեւ... էլի՞ նախնական հաշվարկ. թույլ մի ժպիտ կարծեց
մագակալած դեմքից, երբ վերջին մտքի վրա հիշեց կնոջը...

Երեւ օր առաջ Չինայի ունգամիջից աղուն կաթում էր, հունգամե-
ջը ետ-ետ չէր գնում: Բայց այդ օրվա իրիկնամուտին, երբ Գրիշան
անասունը հանդից բերել, տեղափակ էր արել, կաթով լի դույն
առած, մտավ նախաարահ, կինը դիմավորեց նրան՝ մեղմ մի
ժպիտ խաղացնելով դեմքին:

-Արա, գիտես չէ՞, որ հունիսի 29-ը երեխաների ծնված օրն է...
-Ըհր...
-Ի՞նչ...
-Հե՛չ... «երկինք» բացվում է...
-Ի՞նչ երկինք...
-Չինախոս, երկնքի հետ գործ չունես, դու ասելիքդ ասա: Ինձա-

նից ի՞նչ է կախված:
-Պատրաստվել է պետք:
-Գինին, օղին՝ ինձնից, մնացածը ձեր գործն է...

Երեխաները թոռներն են, Արցախյան գոյամարտում նահա-
տակված որդունը՝ Արտակինը: Երկվորյակ երկու տղա՝ Կարեն ու
Արեն, միամորիկ առջիկ Կարինե: 1992 թվականին, Մարզկուռի
գրողից առաջ եկել էր տուն՝ երկվորյակների ծնունդը նշելու:
Որոշեց նրանց ծննդին միացնել նաև հազիվ վեց ամսական աղ-
կա ծնունդը /երեխաները նույն ամսում էին ծնվել/: Եկել էր ըն-
կերների հետ, զինավառ ու զինվորական հագուստի մեջ: Ավտո-
մասները կախել էին արահի սյունից, բեֆ արել մինչև կեսգիշեր:
Առավոտյան, գնալուց առաջ, դարձել էր հորը.

-Հարությունյան /այդպես էր դիմում նրան/, դե, ես գնացի, երե-
խաներին... Էն ասելն էր, որ չասաց: Թուխ ու բաղակ բեղը եզրող
վերին շուրթը սեղմեց աստամներով, արահի սյունից իջեցրեց ավ-
տոմատը, գցեց ուտով ու գնաց: Էդ գնալն էր, երեկոյան դեմ՝ ետ բե-
րին, ու... հայրը փյվեց ցինկե դագաղի վրա: Մարզկուռն գրավված
էր... Որդու մահը երկրորդ ողբերգությունն էր. նրանից առաջ զոհ-
վել էր փեսան՝ Հովիկը՝ ականից՝ ականազերծման ժամանակ, որ-
բեապրի թողնելով կնոջը՝ Արեհիկին, ու որք՝ իր երկու «ձյունանուշ-
իկներին»՝ Անուշին ու Սրբուհուն: Աչքի սեռն ու սպիտակը մնաց
Արարատը: Փառք ասածու, կռվեց, հաղթեց ու մնաց ողջ, որ ձեռքի
մեկը՝ Արտակի, մյուսը՝ Արեհիկի տան վրա պահի, հորն էլ տեղն
ընկած տեղը օգնի ու միաժամանակ շվաքի տակ պահի նաև իր
չորս արու-արիներին:

Անցել է ութ տարի՝ առանց Արտակի՝ բերդաշենցի 75-ամյա
Գրիշա Հարությունյանը յոթ անգամ նշեց իր ութ թոռների ծնուն-
դը, ութերորդը նշելուց առաջ առավոտյան անեցիներին պատվի-
րեց պատրաստ լինել երեկոյան ու ինքը նախիրը տարավ հանդ:
Ինչ աներ՝ իր հերթի վերջին օրն էր: Նախիրը արեց Սնդուտի ձորն
ի վար, ինքը նստեց ձորալանջի մի ցից ժայռի վրա, որ տավարն աչ-
քի առաջ ունենա ու սուզվեց մտորումների մեջ: Կիսանիրի մեջ էր,
թե ինչ, թվաց ունկերի մեջ՝ հնչեց հարազատ ու պաղատագին մի
ձայն.

-Հարությունյան... երեխաներին...
Ապա ձորից սարքանջն ի վեր մյուս եկող գեպիտուն առավ այդ
թանկ ձայնը ու տարավ հեռու-հեռուները: Չորում մնաց խուլ ու
խորհրդավոր մի լռություն եւ այդ լռության մեջ ինքը՝ փոճուկից
ցնցվող ուտերով: Բայց ոչ այն ուտերով, որ ցնցվում էին իր լախ-
ալա ծիծաղի ժամանակ...

Երեկոյան, տուն դառնալուց, տանն արդեն ասեն ինչ պատ-

բաստ էր: Երեխաների սեղանն առանձին էր, ավելի ճոխ ու մեծ, քան մեծերինը: Երբ համախմբվել էին սեղանի շուրջ, քաղաքից ժամանած աներձագին Գրիշան ասաց.

-Դե, դեկավարիր... գիտեմ, փխրուն ես... բայց դե տամեղ չեմ կարողանում, երբ խոսելիս աչքերդ լճանում են...

Տղամարդ ես, չե՞:

... Օննոյան օր էր, կերուխում, երգ, երաժշտություն ու պար: Պարում էին Գրիշայի ութ թոռները, գույզ հարսների ու աղջկա հետ միասին: Պարում էին, ո՛նց էին պարում, ասես հավերժական մի պար՝ ի հեճուկա դաժան ճակատագրի: Գրիշան ձեռքը դրեց կնոջ ձեռքին ու ականջին շնչաց.

-Զինափղա...

-Արա, հի՛նչա...

-«Հինչան» դու ես, համ էլ՝ ես «արա» չեմ:

-Արա չես, բա ի՛նչ ես, քեֆիդ ինչո՞ւ է դիպում.

Գիտե՞ս, թե Արան ով է...

-Զգիտեմ: Ես հո քեզ նման արարատյան դիցաբանության գիտակ չեմ...

-Որ չգիտես, մի խանգարի, թող մի տեսնեմ, թե էս երեխաները ոնց են գծություններ անում,- ասաց ու դարձավ պարախմբին, աչքերում՝ ոչ այն է ինտոյության, ոչ այն է՝ արցունքի փայլ: Գրիշան թե.

-Աղջի, կեր է՛, կեր, ծլանգվել ես, սեղանից օգտվիր. Դատարկ պարկը ուրիշ վրա չի կարող կանգնել:

Մինչդեռ Արենն անընդհատ կանչում էր.

-Դեղո, հե՛ դեղո, եկ մեզ հետ պարիր:

-Դեղոն քե մատաղ, Արեն, դեղոն հանդում է պարում, որ մարդ չտեսնի...

-Խի՞, դեղո, վատ ես պարում, դրա համա՛ր...

-Հա՛...հա՛...հա՛...

Հարեան Բորիկն ասաց.

-Չեմ հասկանում, թե էս գեղեցիկ ընտանիքի համերաշխության զարդանիւն ինչո՞ւն է. Արտակի կնոջ՝ Սվետայի մեծ արտի ու հոգու հավատարմության ու համբերության, Արարատի կնոջ՝ Կատյայի նրբանկատության, թե՛ որբեայրի Արեւիկի անսահման նվիրվածության. երեւի այդ ամենի միասնության մեջ,- եզրափակում է նա:

Այնուամենայնիվ, սխալ չէր լինի ասել նաեւ.

-Ցավի ու այդ ցավի հետ մաքառող Զինայի ու Գրիշայի անպատ հումորի մեջ:

Եվ ի՛նչ... Օննոյան օր էր:

Մ՛նամ՝

Քո «Դոն-Կիխոտ»

Նամակ չորրորդ

Հարգելի բարեկամ, սիրելի Սանչո, վերջապես ստացա երկրորդ նամակիս պատասխանը, որին սպասում էի անհամբեր: Երեւի երրորդ նամակս էլ ստացած կլինես: Բանը դրանում չէ: Չարմանալին այն է, թե ինչու ես նեղացել ինձանից: Մի քիչ կաթ ու մածոն ու մի քիչ էլ պանիր էի ուղարկել՝ դրա համար, իբր «դիպել» եմ ինքնասիրությանը: Ինչ մի մեծ բան է սրածս, ախպեր, ինչ մի վիրավորվելու առի՞թ...

Հատ չե՛ս հայար: Սոցիալական բո վիճակում քեզ օգնելու խնդիր չունեի: Հնարավոր է՝ վատ չես ապրում, բայց հազիվ թե... բո վատ ու լավ ապրուստը մտքովս չէր էլ անցնում, այսինքն՝ ինչպե՛ս թե չէր անցնում: Պարզապես սրտուզելիք էր՝ ուղարկեցի: Ընկերներ ենք, չե՞: Հանկարծ ինչ-ինչ բաներ չանցնեն մտքովդ... Քեզնից պակաս հպարտը չեմ: Հակառակ դեպքում, գիտե՛ս ինչ: Լսել եմ՝ նամակներս սպազրում ես: Որպես իմ ուղարկած «յոդ ու բրինձի» փոխհատուցում՝ էդ թերթից մի-մի համար ուղարկիր ինձ: Իմիջիպյոց, էդ որ նամակներս սպազրում ես, բան-ման կտա՛ն, թե չէ: Ինձ համար չեմ ասում է՛... Ի սեր Աստծո, խոր-խոր տեղեր չընկնես, գիտեմ՝ նամակներիս դիմաց ոչ դու մի գրոշի օգուտ ունես, ոչ ես: Խի կարծում ես տեղյակ չե՛մ էդ թերթի վիճակին...

Դե, մի թերթ, որ սառը տարի առաջ մեր գյուղում հարյուր բաժանորդ ուներ, հիմա մեկն էլ չունի, վիճակն ինչպիսի՞ն կլինի...

Տեղը եկավ՝ մատնեմ: Սանչո, մտքովս մի տարօրինակ բան անցավ, ի՛նչ կլինե՞ր վեր կենսա գաս, տեղափոխվես գյուղ: Գիտե՛ս ինչ՝ իրար մոտ կլինենք, նամակ-բան գրելու հարկ էլ չի լինի: Քեզ համար հողամաս կվերցնենք, մի հարմար տեղ, տնից-բանից էլ ձեռաց կսարքենք, առայժմ՝ մի «վրեմյանկա» էլի, կողքին՝ գոմ, մի կով ու մի էջ էլ կառնենք, ի՛նչ կա որ: Հետո գործը գործ ցույց կտա: Հաջողություն լինի՝ տան ու տնտեսության տեր կդառնաս: Անա դե հանկարծ մտքովդ չանցնի էդ ամենը մենակ ինձ վրա վերցնեմ... Միասին կանենք՝ մաշկդ հո բոշ չի: Գիտեմ չե՛, քեզ՝ անող-թողող մարդ ես: Իսկ իմ մասին... հանկարծ խելքիդ չիջի՝ թե որ անունս Դոն-Կիխոտ է, էն թափառական ասպետն եմ, էն արկածախնդիրը, էն «տխուր պատկերի Ասպետը», գլուխը՝ ասպետական «ցնորանտություններով» լիբր... Թեպետ, այնուամենայնիվ, նա հանձարեղ «խելագար» էր, մարդու լավագույն տեսակը: Համոզվելու համար խորհուրդ կտայի փորձես Սերվանտեսի էդ ստեղծագործության տակը մտնել: Չեմ կարծում՝ չես մտել, տակ էլ տվել ու... երբեք էլ տակից դուրս չես գա:

Հա, էլի, Սանչո, գյուղ գայիր, ի՛նչ մի վատ բան կլինե՞ր: Ախր ի՛նչ

ունենա, է, էդ քաղաքում, ինչ ես կորցրել, ինչ գտնեա: Գյուղ գայիր, ինձ համար չեմ ստում՝ բո օգտին: Առաջինը՝ տնտեսական, Էկոլոգիական տեսակետից, երկրորդը՝ իմանալով, որ դու սկի էլ Սանտոն չես, իզուր էլ քամակն ես անցել, ոչ թե «Գյուղական Էսիզներ» կգրեիր՝ մանր-մունր բաներ, այլ... լեզուս չի էլ պատում ասեմ՝ վեպեր: Չէ՛ որ, պարզ խոսենք, դու ոչ Տոլստոյ ես, ոչ էլ Շոլոխով, թեպետ կասկած չունեն՝ ձորքիդ ու շնորհիդ: Մեծամիտ էլ չես՝ վերելից նայես, արհամարհես, չհարմարվես գյուղական կյանքին-կենցաղին, նիստ ու կացի: Երեսակայում եմ, թե ինչ համով-հոտով բաներ կգրեիր: Մտքովդ չանցնի՝ չեղած, չիներո, չմտածված բաներ եմ ստում: Ետեքս ինչ թաքցնեմ՝ մեկ-մեկ իմ մտքով էլ է անցնում... Հանկարծ խելքիդ փչեց՝ վեր կացար եկար ու... Գյուղն էլ՝ սահմանափակ: Ինչ է, սիրտդ ահ ընկա՞ր: Բա մենք ո՞նց ենք անում, մեզ մայր չի բերե՞լ: Հրե՛ն սահմանը բթներիս տակ, մատդ մեկնես՝ թուրքի աչքը կխորթես:

Բարձր-բարձր սարալանջի մեր տան բակից տափաստանի կողմը նայելիս, մանավանդ գիշերը՝ սահմանը լույսերով ողող, թվում է՝ Աստված չարած, Բնուելից ոչ թե արկ, պարսատիկով էլ բար նետեն՝ կհասնի: Ամա դե, իմը՝ չէ... Տեր նորընծայի տանը կուտեն: Թող փորձեն...

Սիրելի Սանտո, վերն արված խորհրդածություններս մի կողմ թողնենք, անցնենք հետեյալին: Վերջերս մի այնպիսի մեղք եմ գործել, որի համար նույնիսկ արդարադատության աստվածուհի Ֆեմիդան ինձ չի ների՝ ուր մնաց թե՛ դու: Փորձեմ բացատրվել՝ բոլորովին էլ ոչ որպես քաղաքացի կամ ապաշխարհանք /օգուս չի/ ես ոչ էլ խիղճս հանգստացնելու միտում ունեմ: Մեկ է՝ սանջելու է ինձ: Ահա թե ինչումն էր բանը: Նորիկին գիտես՝ իմ հարեանին: Եկավ թե՛ ցախը կարել վերջացրել եմ, գնանք տեղափոխենք: Ասում էր ինտրելու պես, խեղճ-խեղճ, բաշվելով, մի տեսակ անհարմար զգալով: Ի՞նչ անեք խեղճը՝ ձեռքը բռնող չունի, ում ոտքը գնար: Սարի պես թիկունք երկու տղաները՝ Սելսոնն ու Վիլսոնը, մատուղ գնացին Արցախյան ազատամարտին: Շիկաեղ ու սիրուն աղջիկը՝ լուսնի նման բոլորած՝ հրետակոծության գոհ: Այդ-ֆանը հերիք չէր՝ դեռ տունն էլ խիստ վնասված: Ու՛մ էր ինչ արել, բար հո չէր կծել ու նետել երկինք, որ Աստված նեղանար...

Մի խոսքով: Չախ թեստակիս՝ սրտիս մոտ, մի անողորմ ծակոց կար, մրսելուց, թե ինչից՝ ողողակի սպանում էր: Սպանե՛ր-վերջացնե՛ր... Չկարողացա ձեռք հասցնել հարեանին: Մեքենան փողոցում, ինքը՝ կողքին թեստակի ու շվար: Սպասում էր: Որտեղից որտեղ հայտնվեցին մեր Բենիկի երկու տղաները, որոնց հայրը նույնպես զոհվել էր մեր ազատամարտում: Տղաներ էլ ասում եմ

ի՞նչ տղաներ, արքունիքն դեռ չհասած, աղվամազը երեսներին: Իմանալով՝ բանն ինչումն է, վազեցին տուն, մի-մի եղան ասած վերադարձան, բարձրացան բեռնաստարի թափք ու թե՛ Նորիկ սպա, բչիր: Նորիկն անխոս գլուխն օրորեց, որ կնշանակեր՝ Աստված, բա տրանք մեղք չե՛ն, ճարահասոյալ մտավ մեքենայի խցիկը, ու գնացին:

Էն որ ասում են՝ ցավը տվին սարին, սարը չտարավ, տվին մարդուն՝ մարդը տարավ, էդ հենց Նորիկի մասին է ասված: Մարդը ոչ գիշերը բուն ունի, ոչ ցերեկը՝ հանգիստ: Մեկը լինելը, ասի՝ էդ ինչի՞ վրա ես, տնաշեն, աչքերդ բաց են մնացել, ցամաքիդ ծակովն ես արել, ախր ուսողդ ով է, ո՞վ ... Տանդ շենից մինչեւ Ալի խոթ ցանկապատել ես, մեջն արտ արել, ես ի՞նչ արտ, ասես հովի բերանն ընկած հարսների պես հերանց են գնում: Արա, արտն էլ կցանկապատե՛ն, ո՞վ է տեսել՝ ոչ ճոնդ ունի, ոչ պուճախ: Ամա ասում ենք է՛, բա ի՞նչ անի, Էժ ու ճխար մունի, տավարի կոխան դառնա՞: Գրանք էլ էնքան շատացել են՝ հանդ ու անդատուն չեն հերիքում: Մեռակ իրենը թե հաշվես, հաշվը կկորցնես՝ էլ խոշոր, էլ մանր, էլ հար ու ճիվ, բաղ ու հնդուհավ, խոզերի հաշվառքն էլ՝ հեչ, բաց թողնես՝ արտերը մի օրում տակնուվրա կանեն:

Ասում են՝ Նորիկի պառը պառ չի, կոշտ է, կոպիտ, թամահն էլ՝ շատ. Աշխարհը կողած բերի՝ աչքը չի կշտանա: Ասում են, էլի, հո ասելով չի: Նախանձում են՝ ուրիշ ոչինչ: Նախանձն ինչ իմանա, որ սերը ներս է անում, սպիտակը՝ դուրս, գլուխը կախ՝ իր բանուգործին: Մի օր տանը նստի՝ սիրտը կպայթի: Ցավը ներս անող մարդուն հասկանալը հեշտ չի, ներսում ճաք է տալիս, ո՛չ նյարդ է մնում, ո՛չ ջիւ: Գիշեր ու տիվ պիտի բանի, ծեգից ուղի վրա, աշխարհից ու ցավից վերացած, ուշքն ու միտքը հանդում մնացող հորթ ու գառան հետեից, վար ու ցանցի, արտ ու խոտհարգի, տավարը պահելու իր հերթի, որ տանում-անում է Սմիդուի ձորն ի վար ու մինչեւ ժամածնեք էդ արանքում երեք իշաբեռ փայտ անում ու բերում, վերջին բեռը՝ նախրի տետից, ինքն էլ հարյուր անգամ գլխաբանակը հաշվելով, հարյուր անգամ էլ սխալվելով, կասկածը սրտում՝ հանդում հո տավար չի մնացել: Աստված չանի, տիրոջն ի՞նչ պատասխան պիտի տա: Հեռ դառնաս ասես՝ տո նախանձ շան որդի, դու Նորիկի ինչը կդառնաս, նրա մի օրվա արածը դու մի ամսում էլ չես անի, շունջը կփչես: Էն բոռ աչքիդ առաջ չէ՛ր, որ երկու օրում տկկոր ռամայի վրա մի ամբողջ բեռնաստար հավաքեց, անիվից ու անվազողերից սկսած, բուֆերից, մոտորից, մոստից, խցիկից, դեկից, արգելակման սխառնով, թափով, վերջին ամրակ ու պտուտակով, խլացուցիչով վերջացրած՝ ասես «Կամազ»-ի գործարանի կոնվեյերից հենց նոր իջած, յուղը վրան, բոլորովին մի նոր բեռնա-

տար ավտոմեքենա: Էն դու չէի՞ր, որ վիզդ փոկ արած, բկիցդ բռնած, աղաչանք էիր անում, որ գա հարած խոտը տեղափոխի: Աչքիդ առաջ չէ՞ր, որ բո մի շաքարթվա հարած խոտը մի թափե՞լ էլ չարավ: Էշի տեղ էիր դրել քեզ, չնկատելուն էիր տալիս, թե ինչու Նորիկը ծիծաղում էր քթի տակ, որ կնշանակելը՝ Էդ չե՛ս ընդամենը, մեջքդ կկտարես՝ հարեիր Էնքան, որ խոտը նիստայուց հետո բարձած մեքենան կարգին տեսք ունենար, սագեր, որ չասեն՝ սա Նորիկի բռնած գործ չի...

Է՛հ, Սանչո, չերկարացնես, առանց Էն էլ գլուխ տարա, համը հանեցի: Ուղիղ կեսն է գիշերվա, բայց օձը կծածին բուն կգա՝ ինձ չի գա: Չախ թեւատակիս ծակոցը ջհանդամը, խղճիս խայթն է, որ հանգիստ չի տալիս: Նորիկը երեխաների օգնությամբ ցախը բերել-թափել էր: Կանչեց իրիկնահացի՝ զննացի, ասացի՝ լավ չեմ գգում, հավատաց, թեպետ վատ գգալս չէր պատճառը՝ ինչ երեսով գնացի... Նստելու Էինք սեղանի շուրջը: Բաժակները լցնելու էր, մեկը՝ ինձ, մյուսը՝ իրեն: Բաժակ բաժակի չէիմք խփելու... որդիների կորստից հետո, Էս էլ քանի տարի, բաժակ չի խփում, լուռ ու մունջ տանում է շուրթերին, Էդ արանքում տնքոցի պես մրմնջում՝ « Էն խոխոցը հիշատակի...»: Խոսքը փղձուկ է դառնում կոկորդում, բեղերի մեջ հայտնված արցունքը, Էն իմած օդու դառն շիթերի պես, որ տեղահան Էին արել ներսի ցավը, լցրել աչքերը, կկայթեն Էս աշխարհի անմխիթար խիղճ ու խղճատանքի վրա...

Է՛հ, Սանչո՛, Սանչո՛...

Մնամ բո՛ **Գոն-Կիխոտ**

Նամակ հինգերորդ

Միրելի Սանչո, հարգելի բարեկամ. Այս անգամ, առանց սպասելու նախորդ նամակիս պատասխանիդ, գրում եմ հետեւյալը: Էս աշխարհը որ Էդպես տեսնում եմ, ինձ հանգիստ չի տալիս: Երեւի հարցնես՝ բայց ի՞նչ ունես, Է՛, աշխարհի հետ, հերն էլ անիծած, դու նրա ծուռն ու թերին շակողը չես, քեզնից ի՞նչ է կախված, բո ուժն ինչի՞ կպատի, անունդ Գոն-Կիխոտ Է՛ թե հողմադացի հե՛տ կովես... Էլ մի ասա, ասում ես, թողնու՛մ: Ախր իմ կռիվն Էն աշխարհի հետ չի. Աշխարհ որ ասում եմ՝ հասկացիր մեր գյուղը, ուրիշ աշխարհների հետ ի՞նչ գործ ունեմ, թող իրենց ճասնիով էլ գնան, ուզում են՝ թեկուզ իրար միս ուտեն...

Բայց այստեղ, ախր, ես իմ միսն եմ ուտում, Է՛, չես հասկանում:

Գե պատմեն լսիր: Ընդհանրապես, հազվադեպ եմ գյուղամեջ գնում՝ Էդքան ժամանակ ինձ որտեղի՞ց: Աչք էլ չունեմ այնտեղ պարսպ-սարսպ ցեղացողներին տեսնելու: Հատկապես՝ ջահել-ջի-

վաններին: Տարեցների դեմ խոսք չունեմ, թող որքան ուզում են պատի տակ նստարան մաշեն, անցած-գնացած օրերի հուշերի պատասխանների մեջ իրար տան ու առնեն, դրանից ոչ օգուտ կա, ոչ վնաս: Հա, Էն էի ուզում ստել՝ ծխախոտս վերջացել էր, գնացի դրա հետեւից: Մեր գյուղում էլ հո գիտես, մի խանութ չէ, մի բանիսը, կարծես՝ տասը թե տասներկուսը՝ մեծ ու փոքր շինխմաչներում, իրար դեմ-դիմաց, շուրջկալ: Չախէլ-ջիվաններն էլ սաղ օրը դրանց առաջ, խոսք-խոսք ասում են, խոսում, ինչի մասին՝ չես հասկանում: Ուրդ կախ գցես ու ականջ անես՝ ոչ մի նյութ չես բաղի: Մի խոսքով՝ չարսու թե չարչոս բազար: Գե ինձ ընդամենը ծխախոտ էր պետք, Էն էլ՝ «Գվին», ուրիշ «մակնիշի» չեմ բաշում: Գրա գինը բաղաբուն, գիտես, հարյուր բաշատն դրամ է, շատ-շատ՝ հարյուր վաթսուն: Մեզ մոտ մեկում հարյուր վաթսուն է, մյուսում՝ հարյուր յոթանասուն, Էն մեկում՝ հարյուր ութսուն: Երկու հարյուրով էր ծախող կա: Մեկը լինի ասի՝ խելքի պտուկ, եթե կողքինդ հարյուր վաթսունով է տալիս, դու ի՞նչ ես մտածում, Էդ ո՞ր խելապակասը հարեասիդ Էժանդ կթողնի, բո թանկն առնի, մանավանդ՝ բոլորն էլ մի գիբիլ են...

Ցավը, սակայն, դրա մեջ չէ, թողնենք մի կողմ: Ծխախոտն առել ու դուրս էի գալիս խանութից, մտածեցի՝ ոտքս կախ գցեմ, տեսնեմ՝ Էդ ջահելներն ինչ են բրդում: Ի՞նչ էլ ջահելներ Էին՝ կարգին հագուստ-կապուստով, բոլով-բուսաթով, պատերազմից հետո աճած սերունդ, բաղաբավարի, ասես հենց բաղաբից են հայտնվել այստեղ: Ասում էին, խոսում, տաք-տաք էլ վիճում աշխարհի բան ու գործից, շինամեջը շինած աշխարհի կենտրոն, ինչ իմանամ՝ Եվրոպայի քաղաքային խորհրդարանական հավաք... Մեկը, ինչ մեկը, Է՛, Միսնաց Աթանի թոռը, շան լակոտն էլ Էնքան սիրուն. Երկու աչք փոխ առնես ու նայես...

Հա, Էն էլի, Աթանի թոռ Վովան ոչ տարավ, ոչ ես բերեց ու թե՛ Արա, չէ Է, չէ՛, որոշել եմ ու վերջ, գնում եմ Ռոսաստան: Էստեղ ինչ կա Է՛.. գնացողը մի քանի ամիս անց տան ու մեքենայի տեր է դառնում, դեռ մի բան էլ ավել՝ ետ գցածից ուղարկում ծնողներին: Բորիկը երբ էր որ գնաց, Էն օրը բանի հարյուր դոլար էր ուղարկել մորը: Մեկը կողքից, կարծես, ինչ կարծել, մեր փեսա Արտաշի տղա Արայիկը թե՛

Է՛, Վովկա, ամա գնացիր հա՛, հրե՛ն ռուսաստաններից էլ մերոնց բշում են: Բա չե՛ս լսել՝ Կրասնադարից...

Վովկան ջողեց Արայիկը խոսքն ավարտի, կացնի պես խոսքը կարեց.

Ի՞նչ ես ուզում Է՛, մնամ ի՞նչ անեմ, Էստեղ սպրոտս չկա, անելիք չունեմ, գործ չկա...

Արայիկն էլ կարծես հենց այնպես, կծու.

Գործը ստեղծում են, հետո անում... Էստեղ բաշիր չանողը Էստեղ սկի էլ բաշիր չի անի:

Ի՞նչ ես կարծում, սիրելի իմ Սանչո, Վովան սասածից ե՛տ կանգնեց. ո՛չ, գնաց, հոր ետ գցածն էլ սռավ ու գնաց: Ափսո՛ւ. Էն փողով, որով գնաց, կարելի էր երե՛ք կով առնել, երե՛քից էլ մի տարում՝ երե՛ք հորթ, էդ չե՛զ վեց: Հաջորդ տարում էլ... ին՛չո՞ հաշվիր, թե քա՛նիսը: Է՛հ, ինչ ուզում ես արա, ամա թե գյուղը մաշկը բոշ մարդու տեղ չի, Արայիկի տեղ է, արայիկների, Արայիկի հոր՝ Արտաշի տեղ է, արտաշների՝... գյուղում սարելն ախր հավա ուտել չի. Օր ու գիշեր պիտի անես, գիշերը՝ ցերեկ: Անողը կանի, օրինակի համար՝ Արտաշը, Արտաշ էլ ասում են, հո, ազնավոր չի՝ վաթսունն անց, մի կաշի է, մի ոսկոր, ամա դե իրենից եռանդ ու կորով է հոսում՝ ինչպես Բախշունց ցախրիզը...

Էն տարին՝ արանից մի քանի տարի սռաջ, տավարը պահելու իմ ու Արտաշի հերթն էր: Դիլլաբանց բաղի ձորի բողազն ի վար նախիրը բաց էինք թողել արոտի: Բաղ էլ ասում են որ հիմա բաղ չի, Էն սռաջներում էր, պասպենակյան ժամանակներում: Կեսօրահացի էինք նստել ձորից վեր թումբի մոխրենու տակ, որ տավարն աչքի սռաջ ունենանք: Ձորի բողազում մի փոքրիկ բացատ կար, շուրջը՝ մոշուտ ու մացառ: Արտաշը նայեց բացատի կողմն ու թե՛ Դոն Կիխոտ, հրե՛ն Էն բացատում բոստան են անելու: Ասացի՝ տեսե՛ք, հլա մի տեսե՛ք, Էն բոստանն ու՛մն է... Պահ, պահ, պահ, Էն ի՛նչ վարունգի թաղեր են, ի՛նչ վարունգ՝ շաղը վրան, ցուրտ-ցուրտ, մի շղարշ ուտես մի բաժակ թթօղու վրա, հենց համարես թե՛ օղի չեր իմացող, գլխին քար գցեցիր... Արտաշն ասաց՝ ծաղր արա, ձեռ սռ, հլա կոտանես, դու սաղ՝ ես էլ սաղ...

Անցավ մի աշուն, մի ձմեռ ու մի գարուն: Էդ արանքում Արտաշն իր բանուգործին էր, ես՝ իմ: Անռանը, էթե չես սխալվում՝ հողիսի կեսերին, մի օր Արտաշը թե՛ Դոն Կիխոտ, վաղը, էթե ժամանակ ունենաս, կգաս Դիլլաբանց բաղի ձորի բողազը: Հասկացա՛ւ աղվեսը պոչից էր երեւում... Գնացի: Բոստանի մուտքին մտավ թես ու տարավ հողիկ: Ձեռաց շինած իշոտնուկ «սեղանի» վրա լոյիկեր՝ կարմիր-կարմիր, կանաչ-կանաչ վարունգ, թարմ կանաչի ու կանաչ տխ, խաշած կարտոֆիլ, հաց ու պանիր, մի շիշ օղի, կողբին՝ երկու բաժակ: Նստեցրեց իշոտնուկ «պթոռի», ինչ ասում էր՝ գլուխս կախ անում էի: Բաժակները լցրեց՝ մեկն ինձ, մյուսն իրեն: Լուռ ու մունջ իմեցինք, բայց զգում էի, որ այդ լռությունը պիտի պայթի: Եվ ինչ՝ շաղը վրան մի վարունգ միջից կիսեց, լափունք մեկնեց ինձ՝ աչքը խորամանկ կկոցելով ու թե՛ Դոն Կիխոտ, Էս Էն վարունգն է՛, Էն խիչարս... հուպ տուր գնա: Տվինք իրար ու բարձր-

բարձր ծիծաղեցինք, ի՛նչ ծիծաղ, բուռակի նման բունգաստում էինք, ու մեր այդ խրխիկնչ-ծիծաղի արձագանքը հնչում էր Էրկան քարի քերձերում:

Սիրելի իմ Սանչո, կատակը՝ կատակ, ամա մտքովդ չանցնի՝ Էս ինչ մանրուկների մեջ եմ բաշում չե՛զ: Երեսակայել չես կարող, թե ինչ դժոխբային գործ էր կատարել Արտաշը, Էն մոշ ու մացառից հետք էլ չի մնացել: Ցակաստի բերանն է տվել, բունգ ու քահի, եսեւտ արել, ինչպես ին՛քն էր ասում՝ մինչեւ Վրնգեն խազը: Հետո, երբ բունգը վերից վերջին անգամ վար էր բերել, զնգացել էր մի երկար ու սաղ քարի, շուրջը՝ թաց ու ցեխ: Մի կերպ կրնկահան է սրել քարը ու... մնացել շշնած, ջու՛ր, մի՛թե, չի կարող պատահել, քա ասում են՝ Աստված չկա... Խաբարն ընկավ գյուղը՝ քա չե՛ք ասի՝ Արտաշն սղբյուր է հայտնաբերել: Չարմացան, ուրախացան, նախանձեցին: Միայն Միրզիբեգանց Մուբանը գիտեր, որ այդ կողմերում ջուր կա: Մի ժամանակ երկար փնտրել էր, որոնել՝ ապարդյուն: Մի՛թե պասպի պատմածն անիրական ավանդություն էր, ըստ որի Դիլլաբանց բաղից վեր՝ մի հինգ հարյուր ոտնաչափի վրա, ժամանակին մի վարար ցախրիզ կար, ո՛վ իմանա՛ որ դարում, կարող է եւ հեթանոսական ժամանակներում: Տախաստանի խաշնարած ցեղերը սար բարձրանալիս կանգ էին առնում այդտեղ, վրաններ խփում ու մնում մոտ մի ամիս, անբարիշ պահելով իրենց, նեղություն էին տալիս տեղացիներին: Ինչ անեն, ինչ չանեն՝ որոշեցին կորացնել սղբյուրը, որ ջուրը գետնի տակ տա ու կորչի... Էդ օրվանից ջրի հետքն էլ կորավ, խաշնարածներն էլ այլես չերեսացին մեր կողմերում:

Արտաշը ջրին ընթացք տվեց՝ գետնատակ հենասպտերի վրայից մի քանի սաղ քար էլ կրնկահան անելով, եւ տեսավ, որ այդ հենասպտերը գնալով խորանում են հողի ընդերքը, ներսը՝ մույթ, հունն էլ՝ նեղ, որով հնարավոր չէր գնալ դեպի ակունքը, շարունակելն անիմաստ էր: Եվ իսկապես միտք ջունեղ՝ սովորող չարչարանք. Չորը կա, Աստված տվել էր ու վերջ: Դիմացը քսան տունանոց ջրամբար շինեց: Բոստանի ցանկապատը ետ տարավ, շրջակայքի հողերից նոր տարածքներ կալմեջ առավ, նորից ցանկապատեց, գրեթե հազար-հազար հինգ հարյուր մետր երկարությամբ ու խաղողի այգի հիմնադրեց: Էդ անձայր ցանկապատի համար քանի՛-քանի Էշաբեռ ցախ կլինի բերած Պեգյու սարի լանջերից՝ Տերը կիմանա:

Խաղողի տիպային այգի՝ մի հեկտարի չափ, երկու տարեկան էլ չկա, տնկիները՝ խնորո՞նու տեսակ, բռնել են արդեն, պիտի կտռե՛լ հողից ու շոշ են տալիս, ինչպես ին՛քը՝ Արտաշը, որ այդպես հար-հավիտյան կառչած էլ մնալու է ստես աշխարհում ոչ մի տեղ

Նմանը չունեցող այդ հողակտորին... Երրորդ տարում արդեն բերք է տալու: Իսկ մինչ այդ՝ այգու միջշարային տարածքներն օգտագործում է լոբու, պոմիդորի, սոխի, կարտոֆիլի, վարունգ ու պղպեղի, էլ ինչ սսես՝ ինչերի տակ: Ինչ ուզում ես ցանի, էդ ջրի տակ Աստված մեկը հազար է անելու: Էս է Արտաշի տեսակը, բայց նաեւ էդ չի միայն: Միջից քանի-քանի կես է դառնում, մի կեսը՝ Չոլեն բարում, մյուսը՝ սեփականաշնորհված իր հողերի վրա ու ցանքի, հնձի ու խտահարքի, աշնան թաց ու թոնին, ամռան տապի ու ձմռան բքերի մեջ: Եվ դեռ էդքանից հետո էլ Աստու ոչ մի օր, ոչ մի ժամաժենքի դատարկ տուն չի դառնում, օրական արած փայտը աջ ու ձախ հակ տված իր անկեզու ուլախին, հորթի համար հակերի արանքում կանաչ խոտ, ինքն էլ մեջը փափուկ նստած, հոգնած-դարձ, կարծես մի բուռ, կեպին գլխին, մթնոտում հագիվ երեսացող, աշխարհից վերացած, չես էլ ջոկում՝ էդ գլուխը կեսրու տա՞կ է, ուսերի վրա՞, թե կեպիի հետ ինչ-որ հեռու հեռավոր մի տեղ...

Բա՞, Էսպիսի բանե՞ր, Սանչո: Հոյ լա՛ Էսպես կասեր Էս տուն-տունիկի հայտնի հեքիաթասացը: Բայց իմ ասածը հեքիաթ չէ, իրականություն՝ իրականից էլ իրական: Առայժմ:

Բարին ընդ գեզ:

Հարգանքներով՝ Դոն Կիխոտ

Նամակ վեցերորդ

Սիրելի Սանչո:

Վստահ եմ՝ որչ ու առողջ ես: Դրա համար էլ որպիսությունդ չեմ հարցնում: Բայց ահա, թե ինչի մասին եմ ուզում հարցնել գեզ. Որ ասում են, երկուշաբթին ծանր օր է՝ հավատա: Թե այդպես չես կարծում՝ խնդրեմ:

Ես դիմում եմ Աննային:

Արտաշն էլի՞ ամանց հաց ու ջուր է գնում հանդ...

Չէ՛ Է՛, բարձր ու զանգակ ծիծաղում է, ու ծիծաղը կավե կուլայից թափվող ջրի պես բլթ բլթում է: Էն քանի օրն էր. իբր խռով էր ու նեղացած, կարծում էր՝ չգիտեի, որ բոստանում կարտոֆիլ էր քանդում, խորովում-ուտում: Արտաշը սոված մնա՞ր, ծիծաղի միջից ծոր է տալիս Աննան, ես թվում է, թե էդ ծիծաղի բլթբլթոցը վերջ չալիսի ունենա:

Բա էդ ո՞նց եղավ, որ հաշտվեց...

Արա, մեր հայր թոռ ու արեւ մարդ է, մեկ տեսար՝ անձրեւ, մեկ էլ՝ արեւ: Հիմա հաց ու ջուր է տանում՝ հերիք չէ, հետն էլ՝ մի շիշ օղի:

Էն օղու՞ց...

Հա՛, Էն էլի...

Իսկ «Էն օղու» պատմությունն այսպես էր, Արտաշը բոստանից եկել էր, էշին երկու հակ արած փայտ, հակերի միջեւ՝ կանաչ խոտ, ինքը՝ մեջը նստած, հյա ծնկներին էլ մի քանի երկար ձող: Աննան թե.

Արա, թամահո կարվի է՛, թամահո, էշին չես խղճում՝ հերիք չի, քե՞զ էլ չես մեղք գալիս...

Արտաշը ձեն ու ծպտուն չէր հանել, լուռ ու մունջ գրկի ձողերը ջրկխկոցով թափել էր բակի սալահատակին, իջել, խոտը տարել գոմի ախոռ, եկել փայտը թափել օղեթորման կայթասյի մոտ, որի տակ կրակը այլայլում էր այնպես, որ նայողին կթվար, թե իրենից խոտոդ կա...

Արտաշն էդ օրը մի քիչ օրով էր եկել, մտածել էր՝ գնամ մի տեսնեմ, թե Արայիկը թթի առաջին թափից ինչքան օղի է թորել, մի քան դուրս է եկե՛լ, թե՛ չէ: Մոտեցավ, կրակից քիչ հեռու դրված դուլի կափարիչը ետ տարավ, ու հանկարծ օձ տեսածի պես ընկրկեց.

Էս արաղն ինչու է պղտոր...

Արայիկը՝ որդին, թե՛

Շատ էր թունդ՝ 90 աստիճանի: Մի քիչ սառը ջուր խստնեցի, որ իմվի...

Ղալաթ ես արել: Արաղը փչացրել ես: Աչքդ հանեմ, հա՛, աչքդ...

Արա, լեզուդ պսպանծվի, էդ ի՞նչ սասցիր, գրեթե ծկլթաց կիւնը, ու Արտաշը մնաց սառած, հանկարծ հիշելով, որ որդու աչքի մեկը չկա. Կորցրել էր ականի պայթյունից... Թվաց՝ ջուր մաղեցին գլխին, սառը, սառնեցնող ջուր: Աշխարհը գլխին շուռ եկավ, աչքերը մթնեցին, ու ուրեքը հագիվ քորշ տալով՝ կորեց բակն ու փվեց տան հակառակ պատի տակ քանի՞ տարվա ընկած գերանին:

Երեկոյան տուն չմտավ, չնստեց իրիկնահացի: Գերանի վրա ննջեց, մնաց ու երբ ծեզին արթնացավ՝ վրան շաղ էր: Ուսերը թափ տվեց, սարսափ: Ծեզը ծեզին էլը հանեց գոմից, կապը բռնած, առանց հաց ու ջրի գնաց բոստանը: Բոստանը՝ Զինհագի աղբյուրից ներքեւ, Դիլլաբանց բաղի ձորի բողազում: Էլը օրից տվեց բոստանից վեր՝ բացատում, փալանն իջեցրեց, մեջքի վրա գցեց գետնին, որ սրեալի, ինքն իջավ բոստան ու մտավ բարակապ հոլիկը, մեկնվեց ինքնաշեն թախտին եւ, չգիտես ինչու՝ տնքաց: Հոլիկը նոր էր շինել: Հինը ծորտածածակ էր, ուր մի անգամ օձի շվվոց լսելով ու նրանից ազատվելու համար՝ հոլիկը հրո ճարակ դարձրեց, համոզված լինելով՝ օձն էլ հետը...

Զեռքը քանի չէր գնում: Թախտին ընկած՝ տեղը տեղ չէր տալիս, մոխամոխաստում էր, աչքերի պեծը խամրել էր, այտերի պտուկները ներքին ապրամից՝ հուրիրատում, ինքն իրեն տալիս էր ու առնում՝ էդ ինչպե՞ս եղավ, որ այդ պահին չհիշեց, թե մադարի աչքի մեկը

չկա... Լեզուն պսպանծվեր, Աննան ճիշտ սասաց, դա դեռ բիչ էր՝ փայտը պիտի առնէր ու տար գլխիս... Ծանր ու մռայլ խոհերը վանելու համար փորձեց լավ-լավ բաներ մտածել. Հուննն ավարտել էր երկու հեկտարի վրա, մեկը՝ ցորեն, մյուսը՝ գարի: Ցորենի հեկտարից՝ ութ ցենտներ, այսինքն՝ 800կգ, գարուց՝ 12 կամ մի տոննա երկու հարյուր...

Քիչ էր, բայց Աստված եղածը շատ չհամարի: Հողին ի՞նչ է տվել, որ ստանա. Ոչ պարարտացում, ոչ սնուցում, այս էլ քանի տարի տա՛ւր, տասներկու: Էդքանից հետո դեռ դժգոհում էլ ենք նրանից, մերը չեննի՞... պակասը կլրացնենք օդուց, գինուց: Կարծես անցյալ տարի Արայիկը թթից հարյուր լիտր արտոլ բաշեց, երկու տոննա խաղողից՝ 300... Էս տարի՝ չէ-չէ, մի ութսուն լիտր արտոլ, անցյալ տարվանից՝ ոչ պակաս գինի:

Ձեռքը տարաւ, կոշտ ու կոպիտ արտոլ շոյեց ճակատը, ստեւ՝ սրբեց ունգամիջի մռայլը, ու դեմքը հետզհետե պայծառացավ, բարակ շորթերի վրա ժպիտ հայտնվեց, հիշելով, թե ինչպես մի շաբաթ առաջ աղջիկը՝ Աիդան, լուռն շահեց՝ 500 հազար դրամ: Էդ փողով փեսան գնաց ու Նոր շենից մի կով գնեց 110 հազարով, երկու անասկան հորթն էլ տակին: Մնացած փողերով՝ այլուր, շաբարավազ, շաբար, ձեթ, երեխաների համար՝ շոր ու շիրթ: Մի խոսքով՝ մի ամբողջ տարվա պաշար:

Էլ ի՞նչ ես ուզում, Հայրապետյան Արտաշ: Եվ դեռ ասում էիր՝ կոլխոզը քանդեցին, մեր տներն էլ՝ հետը: Եղած-չեղածը թալանեցին-փոշիացրին, հա՛, հա՛, Էդպես էր, բա Էդպես չէ՞ր... Տունդ չքանդվե՛ր, Կիրովի անվան կոլխոզ, տարեկան 2000 հա աշնանացան էինք անում, տոննաներով ուղարկենի տալիս, ստանում 4000 տոննա ցորեն, ի՞նչ ցորեն, 500 հեկտար այգուց՝ 7000 տոննա խաղող, 2000 տոննա կաթ, 350 տոննա միս, 3.5 միլիոն հատ ձու, տունդ չքանդվե՛ր հա՛, որ քանդվեց: Ցակատը դրին այգիների վզին ու մորթեցին: Մնաց մատների վրա հաշված մի քանի հեկտար, Էն էլ սեփականաշնորհեցին, մարդը՝ 8-10 արիս: Ի՞նչ անեի, թե հարյուր մետրանոց: Ախր ես ու Աննան երեք հեկտար էինք մշակում, տարեկան 35-40 տոննա խաղող էինք հանձնում Էն անտեր տերությանը, որ հիսի չկա...

Արտաշը տակ էր տալիս, գլուխ ու էլի Էն նույն մտքին էր, թե ինչու Արայիկին... Մարդ Աստծո, վեր կաց մտիր բոստան, ախր ուրի վրա չորանում է. Սոխի մարգերը կծողում են, լոբին ձեռից գնաց, կարտոֆիլի ցողունները՝ թառամում, թռնոշկում են: Վարունգի թաղերը լեզուները հանած կախ են ընկել հողի կոռճների վրա: Դոմի թաղերը ելել են չարարն ի վեր ու, բերանները բաց, մի կաթիլ անձրեւ են աղերսում: Իսկ երկինքը՝ բաց կապտավուն, ուր

արեւի շիկացած գունդը պլոպլոթում է, ինչպես եռացող ջուրը եռտանու վրա: Չէ, աչքս ձախին չեմ խփի, հավես չկա: Էս անտեր երկուշաբթին ծանր օր է... մեջքը կոտրել է պետք: Օրն իրեն էլ մաշեց, ինձ էլ: Վեր կենամ գնամ, Աննայի հետ հաշտվեմ, Արայիկի հետ էլ, համ էլ... տավարը գարու ժամանակն է, կովերն ո՛վ կթի, Աննա՛ն: Արա, հարսին կթողնե՛ս, որ կով կթի: Էդ մատաղաշը մեղք չի՞... Հրե՛ն Հակոբ եկել ու երեւի կես ճանապարհին սպասում է, որ առնեմ էջի վրա ու տանեմ տուն...

Դիլլաբանց բաղի ձորի բողազում նստեց իրիկնամուժը: Բոստանը մթնոճումս աղոտացավ, ու լոբու սարիները երեսացին սովերների պես: Շիկացած օրվա տապը մնաց մարգերի մեջ, եւ օդը դարձավ խեղճուկ: Արտաշը՝ մթնոճումս հագիվ երեսացող ուրվապատկեր, ելավ բոստանից ու դուռը կանաց փակեց: Էջի օջինգն արձակեց, փալաւը բաշեց մեջքին ու առաջն արեց: Խույ ու համր կենդանին առաջին անգամ բայում էր ականջները ցից, թեթեւ ու ստանց բեռի:

Ես Աննայից հարցնում եմ.

-Արտաշն էլի՞ առանց հաց ու ջուր է գնում...

-Չէ՛... Է՛, ծոր է տալիս, սպա՛ր բարձր ու գիլ-գանգակ ծիծաղում: Ծիծաղը՝ այնպես վարակիչ, կավե կոլայից թափվող ջրի պես բլթբլթում է, եւ թվում է, թե Էդ բլթ բլթոցը վերջ չի ունենա...

Այս էլ այսպես, սիրելի Սանչո: Առայժմ:

Մնամ բո՛ւ Դոն Կիխոտ:

Նստակ յոթերորդ

Սիրելի Սանչո:

Բարի օր բեգ: Եվ սիս թե ինչ, վերջերս մտքովս այնպիսի բաներ են անցնում, այնպիսի տարօրինակ բաներ, որոնց մի տեսակ դժվարանում եմ հաղորդակից անել բեգ: Նայում եմ արբունեցի հասնող տղայիս ու մտածում. Ի՞նչ պսակվելու ժամանակն է ես... ինչպիսի՞ հարս կունենամ ես:

Իսկ եթե հարս ունենայի՝ անունը Սոնա կլինե՛ր անպայման: Այդ անունը ինձ անչափ դուր է գալիս, անասելի սիրելի է ինձ համար, որովհետեւ այն իմ տատի անունն էր, այն էլ ինչպիսի՞ տատի, ինչպիսի՞ Սոնա... Հարյուր տարին, իր հարյուր տարվա մենայնջան մեջ եւ իր հարյուր տարվա ամենեւի հետ, ծալեց, դրեց տակը ու մի օր էլ ասաց.

-Թոռս, անուշս,- իսկ թոռը բառասուն տարեկան էր, սրանից հետո ինչքան ասյրեմ՝ բո հարսի խաթեր, որ պիտի գա...

Դրանից հետո նա ծալեց եւս չորս տարի:

Եթե ես հարս ունենայի՝ անունը անպայման Սոնա կլիներ. դժվար ապրուստի այս անձի ծիրի մեջ ինձ ուրիշ հարս ձեռ չէր տա: Սոնան, անշուշտ, գեղեցիկ կլիներ. բարդու պես սլացիկ, թխավուն դեմքով ու սեւորակ աչքերով, որոնց սքանչելի գեղեցկության մեջ նստած կլիներ մշտնջենական մի հոգս՝ պարտոված խելացի ու անապառ համբերությամբ: Սոնան լանջն ի վար ծիսացող թուխ ու հաստ ծամ կունենար: Ոչ թե նրա համար, որ երբ խելքը գլխին չպահեր, սկեսուրը ձեռքովը տար, այլ գորովանքով առնելը ավի մեջ, համբուրելը ու տանելը դեպի ծոցը... Իսկ Սոնան խելքը չի նեղ չէր կարող: Եթե իմ ուզած Սոնան է, նախ՝ իր եղունգները չէր ներկի, մանավանդ՝ դրանք երկար չէր պահի, որոնց տակ կեղտ նստի, ավելորդ հոգս պատճառի, ժամանակ իսկ, առանց այն էլ ժամանակը շատ սուղ է: Գլուխը կկորցնելը դժվար ապրուստի այս անձի ծիրի մեջ...

Սոնայի նշանդրեցին ոսկի մատանի ու ոսկե ականջօղեր կտանեի, ոսկեշոթա վզնոց՝ ոսկեմույլ խաչով, որ երբ գցեր վզովը՝ խաչը ճառագեր կրծքի վրա, ոչ թե որպես զարդ, այլ որպես այն խաչը, որի վրա ակամայից խաչվում են... Սոնան գոհ ու առիւնճնող ժպիտով կընդուներ իմ նվերները, բայց հարս զարուց հետո՝ կհաներ, կղներ զարդատուփի մեջ, կպահեր ապահով մի տեղ, մտածելով թող մնան, չեն խանգարի... Հետագայում հագիվ կհիշեր դրանց մասին, եթե պատահմամբ ժամանակ ունենար դառնալու իր պահուստներին...

Բայց Սոնան ժամանակ որտեղի՞ց կունենար. հարսանիքից անմիջապես հետո, հաջորդ օրը, հարսանեկան շորերը կհաներ, կծալեր-կղներ սնդուկում, տնային խալաթ կհագներ, հաստ ծամը կօղակեր գլխի շուրջ՝ գլխաշորի տակ, կավլեր բակը աչք ածելով ինչն ինչ տեղ է... կմտներ զոմ, որ մաքրված կլիներ ու ցախավելը դրված անկյունում: Գոմի տհաճ հոտից դեմքը կծամածոներ, անհամարձակ առաջ կգնար. ոտնաձայնից զոմի վերին անկյունում սե ու սիրուն հորթուկը վեր կկենար, կմզգար վանդակի միջից՝ օտարոտի նայելով հարսին: Հարսը մի պահ ետ կբաշվեր, ապա ժպտալով կմոտենար, ձեռքը ճաղերի արանքով կտաներ, նախ երկշոտ, ապա համարձակ կշոյեր հորթի գլուխն ու խելքը աչքերը եւ դեռ չմանալով՝ ինչ է հորթի անունը՝ ինքը նոր անուն կղներ՝ Յիկ Անրա...

Սոնայի համար այնպիսի հագուստ կպատվիրեի, ինչպիսին հնում հագնում էր իմ տատը, գլխին պալի ու ճակատանոց, որից մինչեւ հոնքերն էին հասնում արծաթե տասանոցները: Բայց հիմա այդպիսի դերձակ որտեղի՞ց: Գե, ինչ արած, թող ինձ հնաճո համարեն ու հնադավան, մինչդեռ Սոնան ջահելուց տատի պահվածք

կունենար ու կմնար նրա վարք ու բարեհիմ... Ինձ կթվար՝ զոմից դուրս կգար ու անմիջապես կբարձրանար տուն, ավելը թողնելով սանդուղի տակ: Սակայն, նա կգնար դեպի խոզանոց, դռնակը ետ կտաներ ու կնայեր ներսը: Մերունը պատկած կլիներ թաց հատակին, ու տասնմեկ խոճկորները, ամեն մեկն իր բաժին պտուկն առած, ազանությամբ կծծեին՝ հրելով ու ցնցելով մերունի մարմինը: Այստեղ պիտի հիասթափվեր, մտածելով՝ խոզանոց էլ պիտի մաքրեմ:

Մինչդեռ, հակառակ իմ ենթադրության, կորոշեր՝ խոզանոց էլ կմաքրի, զոմ էլ ես այդ մտքի վրա կգնա ու կհայտնվի շան՝ Լորդի բնի մոտ: Վախվորած ետ կընկրկի, տեսնելով՝ շունը չի հաչում, վրա չի պրծնում, մի սկանչը ցից, մյուսը՝ կախ, նայում է իրեն խելացի ու խոնարհաբար, շիսկ կանի, կմոտենա, որ շան գլուխն էլ շոյի, բայց հանկարծ շոտ կգա, կբարձրանա տուն ու կվերադառնա մի կտոր հացով՝ շան համար: Շունը հացը ձեռքից կառնել, կուտեր՝ նայելով իրեն որպես յուրայինի:

Սկեսուրը հարսին բան ու գործի չէր դնի, կթողնի իր կամքին, որոշ ժամանակ, զուցե՝ անորոշ: Հետեւից կնայի՝ ռաից-գլուխ չափելով, ակնդեա հետեւելով, մտածելով՝ ինչ հագուստ-կոպուստով է եկել՝ «հորանց շորերը» փոխել-թողել է հորանց տա՛նը, թե՛... Տակ կտա, գլուխ կտա, մինչեւ կպարզի ու կհամոզվի, որ մեր տան շորերն է հագին, հետո գլուխը կախ ինքն էլ կզբաղվի իր գործով: Սկեսուրը այդ «ստուգարբը» աննկատ չէր մնա, հարսը կնկատի ու չնկատելուն կտա, ջնաւածելով՝ մի-տարի հարսնություն արա, հետո՝ շնություն...

Սոնան տաշտակը կղներ ծորակի տակ, կեարայրի շորերը կթափեր մեջը, Էն շորերը, որ հագնում էր ու գնում զոմ՝ տավարի տակը մաքրելու, աղբը դուրս-տանել-թափելու, անասունին ջուր ու խոտ տալու: Կեարայրի այդ շորերի զոմահոտը ջրահան կաներ, հետո վրան եռացրած ջուր կածեր, կվար, կոյրեր, մեկ-մեկ կմզեր, թառ կտար լվացքի պարանին, արեւոտի, ջորանա, ջորանալուց կհավաքեր, կարդուկեր պնայես, ասես կեարայրը դրանք պիտի հագներ ու էլի ոչ թե զոմ գնալու, այլ՝ տոնախմբության: Սկեսուրը շորերն առանձին կվանար, մի բանի անգամ ջուր կտար, կմզեր-թառ կտար, ջորանալուց՝ կհավաքեր, կարդուկեր այնպիսի հոգատարությամբ ու խնամքով, որ երբ սկեսուրը հագներ, կթվար, թե ինքը ոչ թե սկեսուր է, այլ՝ հարս: Սկեսուրը ինքն իրեն, բայց հարսի հասցեին կշշնջա, մորդ կաթը բեզ հալալ, էդ ինչ ծիծ է, որ ծծել էս...

Սոնան, տունը հավաք-տեղաց անելուց հետո, կանցներ խոհանոց, կեփեր-կթխեր, սփռոցը կփոներ սեղանին, ձեռքի սփով կհար-

թեր, սեղան կզգեր, շերտիկը կառներ ձեռքը, պնակները կլցներ, մեկը կդներ կեսրայրի առաջ, մյուսը՝ սկեսրայր: Վերջինս կհասժպիտ նայելով հարսի հեզանագ շարժումներին, կմտածեր՝ շերտին էլ է ձեռքն առել, ինձ էլ ի՞նչ մնաց... սակայն խեթ չէր նայի ու չէր էլ կարծի, թե էդ շերտի առնելն էն շերտի առնելն է...

Օրերը կանցնեն հերթով, կանցնի մեղրամիսը, ու մի օր էլ հոգու մեջ կարթնանա հորանց տան կարոտը, կհիշի հորը, մորը, եղբորը ու նրա կնոջը, եղբոր երեխաներին... Երեսկահաստում՝ վարդագույն ու ամոթխած մի ժպիտ, կդառնա սկեսրոջը.

-Այա...

-Վո՛ւ՛, քոռանա՛ւ, էդ ի՞նչ ասացիր, այա՛, որտեղի՞ց իմացար, թե էս օջախում էդպես է ընդունված... Դե, մեկ էլ ասա...

-Այա...

-Աջան, ի՞նչ բոյիդ մատաղ, մի քաշվիր, ասա...

Հարսը հազիվ երկյուղած կշշնջա.

-Ասում եմ՝ գնամ հորանց տուն ու էլի ետ գամ...

-Էդ ի՞նչ հարցնելու բան է, ջանս, բեզ նման հարսի համար հորանց տան ճանապարհը միշտ էլ բաց է...

Սոնան կզնար հորանց, բայց էդ գնալը կասված կլիներ ոչ այնքան արտում կուտակված հորանց կարոտի հետ, որքան վերջին օրերին իրեն անհանգստացնող այն անհասկանալի տագնապի, որ առաջ էր բերել խլրտոցը կրծքի տակ ու սրտխառնուր... Կյանքում ոչ մի անգամ նման բան չէր պատահել իր հետ: Կզնար մոր հետ, ոչ, ավելի շուտ՝ եղբոր կնոջ մոտ բացատրվելու, որովհետև նրա հետ հարմար կլիներ կիսվելը:

Հորանց տնից կվերադառնար պայծառացած, տագնապը լռեցրած, քանի որ եղբոր կինը համբուրել էր իրեն անզուսպ հրճվանքով ու... հասկացրել, թե ինչն ինչոց է...

Հարսի մեջ կատարվող փոփոխությունն աննկատ չէր մնա սկեսրոջ աչքից եւ գուցե էդ բանը նախ սկեսուրն էր նկատել, երբ հարսի ձեռքից բեռնաբեռով առել էր ցախավելը, արգելել գոմ ու խոզանոց մտնել, անատունի տակ մաքրել, երկար ու բարակ լվացք, տուն-տեղակ անել:

Սոնայի ֆայլն օրեցօր կծանրանար, ինչ-որ հանդիսավոր մի ֆայլ, իսկ աչքերում՝ մոտալուտ մայրության հաճելի մտահոգություն: Կեսրայրի մոտով անցնելիս՝ աչքերը կխոնարհեր, կխուսափեր նրա հայացքից: Մի օր էլ սկեսուրը ֆաղթահունչ աչք-ունքով անելով՝ կդիմի սոյախն.

-Տար, որդիս, հարսին ամեն առավոտ կանուխ տար Հաղասարի բացատները, ֆայլե՛ք մարգագետիններով, հազարանուն ծաղիկների բուրմունքների մեջ: Տար նրան մայրամուտներից առաջ,

շուտ եկե՛ք Մեծ ու Փոքր նահատակներով, որ գիշերները հանգիստ բնե՛ք, որ երագներն էլ լինեն բարի ու անխառն: Իսկ մի օր էլ իմ հարկի տակ կինչի մանկան այն ճիշդ, որ ինձ կթվար, թե այդ իմ նահապապի ճիշն է՛ այնպես ու այնքան նման տոհմականչի...

Բա՛, իմ սիրելի Սանչո, այդպիսի բանե՛ր:

Դե ինչ, մնամ քո՛ Դուն Կիխոտ:

Նամակ ութերորդ

Իմ սիրելի Սանչո,

Ողջո՛ւն... Իմ այս հերթական նամակը կվերնագրեի՝ «Անցյալ կորուսյալ»: Սա մեր մանկության մի ընկերոջ հետ հանդիպման մասին է, անակնկալ մի հանդիպում, որից հետո ես երկար մորմոքում էի... Եվ այսպես, ես ու Միշան դեմ առ դեմ ելանք՝ ճանապարհի կեռամնում, ճամփի ծնկածալի տակ գտնվող իր տնից հազիվ մի քանի ֆայլի վրա: Ցատկեց էշի վրայից, ու, կապը ձեռքն առնելով, թե.

-Հրմ, բարե...

-Էդ ինչի՞՞ հանկարծ իջար ավանակից:

-Մի տեսակ անհարմար գզացի...

-Ինչ է՛ Բրիստոսը ձիո՞վ մտավ Երուսաղեմ...

-Բրիստոսի ժամանակ ձի կա՞ր, կատակի տվեց, սպա, Էդ ու՞ր՝ ծեզր-ծեզին...

-Իջնեմ ծխախոտի... թե շտապ տեղ չես գնում, սպասիր, գալիս եմ:

Ետդարձին Միշան տեղում էր:

Գնացինք արեւին ընդառաջ, որ դեռ նոր էր ծագում՝ իր ոսկե-դեղին փայլերի մեջ առնելով հայրենի բնաշխարհն ու մեզ: Գնում էինք լուռ ու մունջ, խոր իրկված ինքներս մեր մեջ: Ինչն ինչի մասին էր մտածում՝ հայտնի չէ: Ես՝ «Մանկություն իմ ոսկեժամ, մանկություն իմ, որ անցար...»: մանկության պատի տակ եմ, Միշայի հորանց տան պատի տակ: Հացի մի փշուր, Աստծո տված մանանայի նման, բռան մեջ, մյուս ձեռքով պահում էր գիրքն ու արտասանում, դեմ ընկած տեղն էլ՝ աչք ածելով գրքին. «Ձյուն է գալիս փաթիլ-փաթիլ, հետն էլ՝ անձրեւ կաթիլ-կաթիլ...»: Եվ, իսկապես, ձյուն էր գալիս, խոշոր, աստղանման փաթիլներով նստում մեր ուտերին, պատի ճեղքերում, բակի սալահատակին, թոնրի ու ցախանոցի վրա: Իսկ երկնից սակախ ձյունն այդ ցանցկեն ճերմակ, թափանցիկ ու մաքրամաքոր վարագույրից անդին մեզ անհայտ աշխարհ էր ես... Տատը դեռ հորթն էր փնտրում դաշտի միջին...

-Էդ որտե՞ղ ես, Է...

-Հը...,-սթափվում եմ,-մանկության պատի տակ...

-Ո՛ւ՛մ ես կորցրել այնտեղ:

-Քեզ:

Միշան ծիծաղում է լախ-լախ, ներս ընկած ուսերը ցնցելով. Ասես ուզում էր վրայից թոթափել իր վաթսուներկու տարիների բեռը:

-Դե, հիմա էլ մանկության պատի տակ եմ, էլի, միայն թե պատը փոփ է գալիս ու մեզ տակովն անում...

-Առանց այլաբանությունների, ախպեր, առանց այլաբանությունների... Ես բո մաթեմատիկայի գրավորներն էի արտագրում, դո՛ւ իմ գրականության...

-Հա, էդպես էր, բայց ինձ ոչ իմ մաթեմատիկան պետք եկավ, ոչ էլ՝ բո գրականությունը... Ա չու, բզեց էջին:

«Ա չուն» մեզ հասցրեց «Ուխնիխատեղ»: Այստեղ, սովորություն կար՝ մարդ թե անասուն՝ մի պահ կանգ են առնում, կարծես բնագորրեն, շունչ են փաշում, գուցե եւ՝ աղոթում, որտեղից էլ՝ «Ուխնիխատեղ»: Միշան կապը գցեց էջի գլխով ու բաց թողեց: Քիչ անց խուլ ու համր արարածն անհետացավ ցափի բոլորում: Ընթացքին մացառ էջի վրայից ձգեց խորթինն ու փաշեց իր վրա: Նստեցինք հողի մի-մի ճմբի: Մեր դիմաց՝ Չինհագի տարածքը, ուր տասը տարի առաջ կոլտնտեսության խաղողի փարթամ ու ընդհարձակ այգիներն էին, որ հասնում էին մինչեւ Էրկան ֆար, մինչեւ Վտածեն ձոր, դեմ առնում Ափունց ֆարե բանդին: Չինհագի տարածքը՝ ինչպես արծաթափայլ ու արեւահավաք մի հսկայական սինի...

-Միրտոյ չի՞ ցավում,-լուրջունը խախտում է Միշան,-երբ հիմա նայում ես էս անտեր-անտիրական սմայությանը,-ե, առանց պատասխանի սպասելու, շարունակում-իմը, ոչ թե ցավում, այլ ոռնում է այն շան պես, որի ձագերը կենդանի-կենդանի թաղել են...

Դառը խոսքեր՝ միջնակարգ-մասնագիտական կրթությանը նախկին գյուղատնտեսի ու խաղողագործական բրիգադավարի շորթերին: Նրա օրոք ու անմիջական ղեկավարությանը վաթսուներկու թվականներին Չինհագի տարածքում 50 հեկտարի վրա հիմնադրեցին այն այգիները, որ հիմա չկան: Այդ տեղամասը տարեկան 1000 տոննա խաղող էր տալիս, Էն էլ ի՞նչ խաղող: Տասը տարի առաջ ցաքատը դրին վզին, մորթեցին, ինչպես կասեր Միշան, պատճառաբանելով՝ դաշտամասի այգիները հերիք են, Չինհագը դարձնենք արոտավայր: Գյուղամերձ է, թող գյուղի տավարը, գոմից էլնելուն պես, անմիջապես հայտնվի հանդում... Եվ ի՞նչ. Անցած տասը տարում բերդաշենցիները կորցրին ոչ ավել, ոչ պակաս՝ 10.000 տոննա խաղող: Դաշտամասի այգիների, որ գյուղից 6-7 կիլոմետր հեռվում են, պատերազմի ժամանակ կետր

թուրքի կոխան դարձավ, մնացածը սեփականաշնորհեցին, տունը՝ մի քանի արխ: Չինհագինը հողի երեսից ավլեցին, պատճառներից մեկն էլ՝ անջրդի են: Չոզնեց նույնիսկ «խաղողի արքա» Չահաւի զգուշացումը. «Չինհագին ձեռ չտաք, նրան ջուր պետք չէ, ընդերքը՝ ջրամբար, Գուզե ծմակի զիլզիլան գովն էլ հետը...»: Չոզուլեցին խորհրդից, ոչ էլ Չինհագի անտեսական առավելություններից, որ քթի տակ էր: Տնից դուրս եկ ու անմիջապես հայտնվի պզում, աչքի առաջ ու սրտի մոտ: Դե, հիմա թոքեղ տաղով զնա մինչեւ Դավլարու տեղ՝ հետիտուն կամ էշով: Մի զնալ-զալ, էդ արանքում՝ օրը պրծնում է...

-Է...Է...Է...,- վրա բերեց Միշան,- էս ինչ աշխարհ է, չեմ հասկանում... Պատկերացնո՛ւ՛մ ես՝ մենք ոչնչացրինք մեր իսկ ձեռքերով արարածը եւ դրանով ոչնչացրինք ինքներս մեզ... ախր այստեղ իմ իսկ քառասուն տարվա անցյալն էր, որից բացարձակապես ոչ մի հետք չմնաց: Երեսակայիդ, մարդ՝ առանց անցյալի: Ես հիմա հենց այդ մարդն եմ...

Միշան լռեց՝ մռայլ ու մոլոր հայացքը նետած անտրոշ հեռուներին: Դեմքից աղուն կաթում էր, տեսն էլ՝ կողոպտվածի տեսք: Հսկառակ մեր տրամադրության՝ աշնան անամալ, արեւոտ ու պայծառ օր:

Ձեռք մեկնես, կհասցնես շոյել տավարի տափանած սիրուն այն հողերի, որ թեթեւակի թեթեւությամբ բլուրներից իջնում են դեպի Չինհագի աղբյուրը: Աղբյուրից վեր լեն ու բոլ սարայն է՝ մերկ պատերով: Տանիքի շիֆերն ու փայտամածը քանդել-տարել են, ի՞նչ իմանաս՝ ովքեր: Մացառը կոխել էր սարայի շրջակայքը: Մոշ ու փշի արանքներում՝ քանդված ու կոտորատված հեռասյունների, մետաղալարերի խճճված կոյտեր՝ աճյուններ շիրիմներից հանված: Սարայի տակ՝ բուբուրթի, ծծմբի, դուստի մնացորդներ, տակավին պահած իրենց հոտերով, որ թվում է՝ քամի լինի, փչի մեր կողմը, խոտու կգային մեր ռունգերն այդ ծծմբի, բուբուրթի ու դուստի միախառն հոտերից...

-Ես հիմա հաճախ եմ երազներ տեսնում,-դողում է Միշայի ձայնը,-թեպետ արթմնի էլ եմ երազների մեջ... Հերթով գալիս անց են կենում իմ նախկին խաղողագործ հեկտարականները՝ Միրզաբեկանց Մուրադը, Դերցորանց Աշուրը, որ հիմա չկան, Սուպուրանց Սիրանը, Բյազունց Ժեյան, Ուղունց Աշուրն ու Արուաշն իրենց կանանցով: Ո՞ր մեկը թվեմ, որ հիմա տուն են ընկել եւ նոր-նոր են զգում, որ իրենց մեջ ցավ կար: Մեկը մրմռացող ձեռքերից է բողբոջում, մյուսը՝ տմբրած ծնկներից, մեկերը՝ լյարդից, թեպետ չգիտե՞նք անտերը մարմնի որ մասում է: Էդ ամենը որտեղի՞ց ի հայտ եկավ: պարզ չէ՝ պարասպությունի՞ց, անգործությունի՞ց, մարմնի

եանսի՛ց... Ասեա եղ նրանք չեն՝ տեղովոյ մեկ կրակ, ուժ ու եռանդ: Կիսն ամուսնուց էր պիտոյ, ամուսինը՝ կնոջից: Տեսնեիր նրանց, տեսնեիր, իբր չեն տեսել, մանավանդ աշնանը՝ խաղողաբուսին, որ նման էր տունախոնքության: Նրանք հրավառվում էին իրենց բերք ու բարիբեց: Դա ինչ խաղողաբուս էր, ինչ բերքահասկաբ, որ չէր սվարտվում մինչեւ հոկտեմբերի վերջի ցրտերն ընկնելը... Գնաց էղ ամենը, գնաց, դարձավ անցյալ ու հուշ, պատկերավոր լեզվով՝ անցյալ կորուսյալ...

Ես ե՛ր լսում, ե՛ր չեմ լսում նրան: Չգիտեմ՝ երազի մեջ եմ, թե արթմնի, թեպէտ անամայ, արեւոտ ու պայծառ օր է, որ արդեն բոքրվում, իր ծվեններն է թողնում երբեմնի այգիների զահմանների մացառուտներին, մացառուտներ, որ գրոհում են տավարի տափանած հողերի վրա, սպառնալով իրենց մագիլների մեջ առնել նրանց...

Դե ինչ, սիրելի Սանչո, սա էլ էսպես, կիսիր իմ մորմոքները: Առայժմ...

Մնամ բո՛ւ Դուն-Կիխոտ

Նամակ իններորդ

Ողջու՛յն, սիրելի Սանչո,

Այս անգամ նամակս հուշի մի պատասխիկ է, որ նպատակ ունի մեզ մի պահ վերադարձնելու մեր հեռավոր պատանեկության օրերը, սակայն, խնդրում եմ, դրանում բեզ չփնտրես... Ես նկատի չունեմ բեզ, թեպէտ կարող է նման մի բան կատարված լինի նաեւ բեզ հետ...

Մեր մանկության ու պատանեկության տարիներին ինչ խենթություններ ասես, որ չենք կատարել: Հիմա էլ, տարիներ անց, հիշելով՝ շառագունում եմք՝ նրբանկատորեն խուսափելով վեր-հիշել կամ հիշեցնել որեւէ մի անվայելուչ արարք:

Միրո հարցում ոչ մի խենթություն ամոթայի չեմ գտնում: Ահա թե ինչու՝ ամեն անգամ իմ մանկության ամենամոտիկ ընկերոջը հանդիպելիս՝ հիշում եմ նրա առաջին սերը: Մեր գրոյցի ընթացքում այդ մասին ոչինչ չեմ ակնարկում, թեպէտ անցյալից զավեշտական բաներ ենք վերհիշում, փոխադարձ հրճվանքով իրար պատմում գվարճայի շատ դեպքեր: Բայց նրա առաջին սիրո մասին պատմությունն ինձ համազաստ չի տալիս, ձեռքերս բոք են գալիս, հագիվ եմ գալում այդ մասին որեւէ մեկին գրելու գայթակղությունս:

Նա ոտից մինչեւ գլուխ սիրահարված էր մեր համադասարանցի պացիկ, գեղեցիկ, թխադեմ ու թխածամ մի աղջկա: Ինչպէս բո-

լոր գեղեցիկ աղջիկները, նա էլ նույնպէս շատ վատ էր սովորում: Նրա սիրուց խենթացած ընկերս, որ առաջադեմ աշակերտի համբավ ունէր, արդնաց գլորվեց անառաջադեմների գիրկը: Տղան չէր համարձակվում առերես իր սերը խոստովանել աղջկան: Ստիպված սիրուց կրակված նամակներ էր գրում, դնում նրա որեւէ գրքի մեջ, որ տանը, դաս սովորելիս երբ գիրքը բացի, նամակն ընկնի ձեռքն ու կարդա, իր խնդրանքով պատասխան էլ գրի՝ «Այո» կամ «Ոչ»: Սակայն աղջիկը գիրք էր բացում, ո՛ր... Բանը հասավ նրան, որ ինքս հանձն ասու այդ նամակներն անձամբ տանել աղջկան: Աղջիկը կարդում էր դրանք, բոքի տակ ժպտում էր միայն ու ոչինչ չէր ասում: Բայց ես պատասխան պիտի տանեի ընկերոջս: Նա անհամբեր սպասում էր: Ստիպված այդ պատասխանն ինքս էի հորհնում. «Թող սպասի, ինչ կա շուտպելու, դեռ սովորում եմք»:

Բայց գոնե նկատեցիր, որ սիրում է ինձ, թե՛ ոչ, հարցնում է մի անասելի տատապանքով:

Կսիրի, ամեն անգամ մի սցապիսի հուսատրական պատասխան էի տալիս:

Մի օր էլ ինձ՝ ութերորդ դասարանցուս, ընկերս ուղարկեց աղջկա մոր մոտ՝ ինամախոսության: Մայրը, որ մի շատ պատկառելի կին էր, հումորի մի հսկայական պաշար փեշի մեջ, բարեհամբույր ընդունեց ինձ որպէս իր աղջկա ընկերոջ: Բայց երբ իմացավ իմ առաքելության նպատակը, նրբանկատորեն ժպտաց, բեքշաբար շոյեց գլուխս, աթոռ բաշեց սեղանի մոտ, նստեցրեց, ինքը գնաց խոհանոց: Քիչ հետո սեղանի վրա հայտնվեց թեյ, մոշի մուրաբա, խաղող, տանձ ու կարմիր-կարմիր մի քանի խնձոր: Փառանձեմ մորաբոյրը նստեց իմ դեմ-դիմաց ես, սրդեն ոչ առաջվա ջերմությանը, ստիպեց գործի անցնել: Ես միանգամայն բնական համարելով հանդիսավոր այդ ընդունելությունը, հիշեցի, որ ինամախոսները մինչեւ դրական պատասխան չեն ստանում, իրենց մատուցված բարիքներին ձեռք չեն տալիս...

Ես սպասում էի այդ աստվածային պատասխանին: Իսկ մորաբոյրն անընդհատ հորդորում էր, որ թեյը խմեմ, սառչում է, խաղող, տանձ ու խնձոր համտես անեմ, մանավանդ խնձոր, որից, որքան գիտեմ, որպէս նախանշան են ուղարկում փեսացուին: Աղջիկը, ինչպէս սովորաբար լինում է նման դեպքում, տնից չէր փախել, նստել էր պատի մոտ դրված մահճակալին, ինամքով հարդարված տեղաշորի վրա, չարանճի աչքերն էր խաղացնում վրաս: Վերջապէս մայրը, տեղից ելնելով, մոտեցավ ինձ, ձեռքի սպով տոնից փաղաբշելով, կարծես երեխայի տեղ դնելով, ասաց.

«Բոռանա՛ւ... մեծանա՛ւ եք... բայց դեռ ժամանակ շատ կա... Մի շուտպեք, ամեն ինչ իր ժամանակն ունի: Սովորեք, առայժմ դեռ սո-

վորում եւ:

Դա, ըստ երեւոյթին, մի յորովի պատասխան էր, բայց կոնկրետ ոչ մի կարգին «այո» էր, ոչ էլ մի կարգին «ոչ»:

Ես վեր կացա, ուզում էի դուրս գալ: Մորաբոյր Փառանձեւը զոռով երկու կարմիր ինձոր խոթեց գրպանս, ճանապարհ դրեց՝ մեջքիս թմբամփազնելով: Փողոցում, գրպանիս ինձորները շոշափելով, մտածեցի՝ ինչու՞ հասկապես երկուսը: Դրանում երկիմաստ ինչ-որ բան զգալով՝ խեղճացա, որքան գիտեմ՝ մեկը պիտի դներ որպէս նախանշան փեսացոյին...

Առաջելոյթանս սրոյունները չգոհացրին ընկերոջս, ընդհակառակը... Խնձորներից մեկը, որ շմբռնեցով ուտում էի, մյուսը մեկնեցի նրան: Վերցրեց, բայց չկերավ, դեն նետեց, որ գլորվելով, փոշուովելով ու իր կարմիր գոյնը զցած, գնաց, կորավ այգու ցանկապատի մի ճեղքում:

Ես այլևս չեմ կարող համբերել, ես... ինքնասպանոյթուն կգործեմ, դառնացած վրա բերեց, գնդակի պէս պոկվեց տեղից ու նետվեց սուն:

Մնացի շվարած: Քիչ անց նայեմ գնդակի թափով դուրս թռավ տնից, առանց ուշադրոյթուն դարձնելու ինձ վրա, ձեռքի մեկը գրպանում, ուր ինչ-որ բան էր թաքցրել, ճանապարհ ընկավ դեպի Հարթա խորթ: Անեն անգամ, դասերից հետո, մենք այնտեղ էինք գնում թափառելու, երազելու, մեր երազանքները պահ տալու այդ երանելի շաղասարին:

Հանկարծ մի բան ջերի գլուխը՝ մտածեցի ու անմիջապէս հետեւեցի նրան: Ես մի այնպիսի արագոյթանք էր սլանում, ասես հողմ է, կամ հողմի բերան ընկած փուչիկ: Տեղ հասավ, արբատեղի կաղնու տակ, մատուռի առաջ ծնկի եկավ: Ես տեսա, թե ինչպէս բաց դանակն ստի մեջ ձեռքը վեր ցցեց եւ ուր որ է պիտի վայր իջեցներ ուղիղ բաց կրծքին: Տեղ հասա շնչասպառ ու շնչահեղձ կանգ առա: Ձեռքը վայր չէր իջնում, ու ես էլ ոչինչ չէի ձեռնարկում: Քիչ անց դանակը վայր զնգաց մատուռի քարերի մեջ: Ես հանգիստ շունչ առա: Իսկ նա վարից վեր, խեղճացած, ողորմելիորեն նայեց ինձ ու ասաց.

«Բա դու ընկեր ես... դանակն ինչու՞ չէիր ձեռքիցս խլում...»

Ես հեռացա ու անխոս նստեցի մի քարի: Մայրում էի նրան, ու նա իմ խոցող հայացքից խուսափելով, շուռ եկավ դեպի մայրամուտ, որի շառագունած պատասառի վրա խամրում էին սռաչին սիրո առասպելները:

Դե ինչ, սիրելի Սանչո, մնամ պատանոյթան ջերմոյթանք

Ըն՝ Դու-Կիստ

Նստնակ տատներորդ

Ողջու՛յն, սիրելի Սանչո,

Այս անգամ բեզ շատ մի տխուր լուր պիտի հաղորդեմ, մահացավ Բոնդուր Գիրիշը, աշխարհից հեռացավ մի ամբողջ շեղութուն: Գնում էի թաղման թափորի մեջ ու լսում կողքիս քայլող մարդկանց հազիվ լսելի շշուկները, որ խորը ցավ ու տխրասանք էին արտահայտում. «Մարդ էր, ժողովրդական մարդ, եւ ի՞նչ վարպետ էր, տեղը թափուր մնաց»: Ես առանձնահասուկ վերաբերմունք ունեի նրա նկատմամբ: Քայլում էի թափորի հետ եւ հիշողութանս մեջ վերակենդանացում մի ամբողջ կյանք, որ արդեն անցյալ դարձավ, փակվեց մի լավ գրքի վերջին էջը: Եվ այսպէս...

... Պատանոյթան ուսուցիչ Հահեն Արշակիչն ասում էր.

«Վարդիթեր, մի կանգնիր...»

Վարդիթերը տեղից ելնում էր կառ-կարմիր կարած, որովհետեւ դասին լավ չէր պատրաստվել, եւ սիրտը ճնճողակի պատի պէս էր խփում: Ելնում էր, եւ որպէսզի լիքը-լիքը մարմինը անհարմար վիճակ չընկներ նստարանի նեղվածքում, դուրս էր գալիս, կանգնում մի կողմ:

«Վարդիթեր, Գիոզենեսն ո՞վ է...

... Լույթուն: Ոչ դասարան, ոչ դաս, ոչ ուսուցիչ:

«Այ աղջիկ, վերջերս բեզ ի՞նչ է պատահել:

Աղջիկը հումորով էր, եւ գիտեր, որ ուսուցիչն էլ գուրկ չէր դրանից, տեղը լինէր՝ կասեր՝ ընկեր Սողոմոնյան, գլուխս քամի է մտել, ուսուցիչն էլ կկռահէր՝ ինչ «բամի»... «Բամին» Բոնդուր Գիրիշն էր: Հետո ինչ, թե Վարդիթերի մայր Աննան ասել էր.

«Կատ սղա չի, ամա...մի քիչ Պլլը-Պոդի է: Տատներորդն ես ավարտում՝ ուշգը-միտղ դասերիդ պահիր:

Գիոզենես, Գիոզենես... Գիտեր, սիր, գիտեր՝ ով է: Ինչու՞ է մոռացել: Գիրիշն ասել է՝ Վարդիթեր, Էգոց կգաս պահեստ, ձեր գինին-օղին ստանաս...

Գիրիշը ե՛ր կոլտնտեսութան պահեստապետն էր. ե՛ր տակառագործը: /«Բոնդուր» մականունն այստեղից էր կալել նրան/:

Նստիր, Վարդիթեր: Գիոզենեսից՝ բեզ մի նկատողություն: Հաջորդ անգամ դասը նորմալ սովորած կգաս:

Դասերից հետո Վարդիթերը գնաց պահեստ: Կանգնել էր բաց դռների արանքում, նայում էր լիքը-լիքը տակառների անեզրոյթանը: Գինու-օղու հոտը բռնել էր շուրջըրորը: Բայց Գիրիշը չկար: Անհարմար զգալուց՝ ուզում էր ետ դառնալ, մեկ էլ պահեստի հեռավոր խորքից՝

«Կու՛կու՛...»

Չայնի վրա գնաց, կիսամթախ մեջ դեմ առավ մի դատարկ տա-
կանի: Մեկը գլուխը դուրս հանեց տակաւից ու կրկին...

Կու՛կու՛...

Վարդիթերը ետ ընկրկեց ու հանկարծ հիշեց դասին չհիշածը:

Արա, Գիոգենեն՛ն ես... Գե, դուրս արի:

Գիոյի ետեւից կարմիր խնձոր ուղարկող չի եղել, աներեսի
պես ինքն է դուռը բացել, թե՛

-Տեսնում եմ՝ դուք իմ ճանապարհը բացողը չեք...

Նշանածին այցի գնալուց բարձրանում էր հարեւան Սիրասենց
տանիքը, կամե կծից չամիչը հանում, լցնում գրպանները, որ տա
Վարդիթերին:

Կեր, որ հիշողությունդ տեղը մնա՝ Գիոգենեսին չնոռանաս:

Լավ էլ երգում էր: Սայաթ-Նովայից եւ նույնիսկ աշուղ Ալեակե-
րից, որ էն ժամանակ դեռ «թուրք» չէր: Չայնը պահեստում ո՛նց էր
հնչում՝ ակուստիկան լավ էր: Երգում էր տակաւ նորոգելիս, գի-
նին բամբակու ժամանակ, երգի հնչյուններն ստես պարում էին գի-
նու շիթերի հետ՝ տակաւից-տակաւ լցվելիս: Այդ ամենն ու՛ր
մնաց... Անցյալի արեւոտ օրերի մեջ: Տարիները ձյուն դրին Գիոյի
բուններին, անհոգությունը չվեց հավելի պես, ընտանիք կազմելուց
հոգսը հիմնավորապես նստեց նրա ուտերին: Սկսված Շարժումն
էլ պակասը տեղը դրեց:

... Արցախն աղեկոծվել էր: Հանրահավաքներին եկավ Ստեփա-
նակերտ՝ հրապարակում, փետրվարյան բքի մեջ, ժողովուրդը ծո-
վացել էր: Խարոյկ վառեց, խորոված արեց ու տվեց մարդկանց՝
ում պատահեք, որքան որ հերիքեք: Թթի օղի էլ էր բերել, հյուրասի-
րեց, որ չմոռնան, դիմանան, մինչեւ տեսնեն՝ էլ ամենն ինչով է վեր-
ջանալու: Ալեկոծվող ամբոխի միջից «Լենին, պարտիա, Գորբա-
չով» եւ «մի-ս-ցու՛մ» կարգախոսները թնդում էին օդում: Ամբոխի
միջից ինքն էլ բռունցքը վեր ցցեց, առաջին կարգախոսը մի տե-
սակ սրտովը չէր, ստես՝ բնագոյով, թե ինչով, գգում էր, որ դրանից
արյան հոտ է փչում, իր շուրթերը միայն «մի-ս-ցու՛մ» էին գոչում:

Արյունն, իրոք, հեղվեց: Նախ՝ գրահամեցեւաներով օսծնը, ու-
սի թեւի տակ, մտավ գյուղ, 15 հոգու գերեվարեց, այդ թվում՝ մո-
րաբրոջ տղային /որ կոլանտեսության նախագահն էր/ եւ գյուղ-
խորհրդի նախագահին: Տարան Աղդամում տանջահար արին,
ապա ֆերմայից մի գիշերում երեք հարյուր ընտիր կթան չբացալ:
Հետո՝ ավելի վատ, թուրքերն ուղղակի հարձակվեցին գյուղի վրա:
Երեք անգամ լավ ջարդ կերան անթաղ դիակներ թողնելով՝ ետ
գնացին, սկսեցին Աղդամից գրադահար անել գյուղը: Ավերվեց
հորեղբոր տունը՝ հորեղբոր որդին փլատակների տակ մնաց:
Գյուղամիջում պայթած արկին էլ զոհ գնաց աներձագ Վահանը...

Գիոյի նապաստարան չէր գնում, գնում էր պոստ՝ Էրկան բար,
Ջրաբարի ձոր, Գալալու տեղ: Գիշերը պահ մտած չեչոտ ժայռա-
բեկորի ետեւ, ուղեքը ձյան մեջ, ուղքն ու միտքը ներքեւում՝ թուրքե-
րի կողմը, շուրթերին՝ երգի տեղ՝ ուշունց: Չնեղանաս, Վարդիթեր,
էլ էն տեղը չի... Բերանս պիտի հարանցնեմ: Ու կցում էր՝ ես բո Գոր-
բաչով կ'նոջը, բո հոր... Ալեակերն էլ թուրք է, աշուղ, բայց թուրք է...
Ու տրամադրությունը եղած պահին մի Սայաթ էր մնացել իր հա-
մար՝ նրանից էր երգում:

Նետյի գունդը, թուրքի ձեռից հրո ճարակ եղած մեր այգիների,
հանդ ու անդաստանի միջով, Մարգիլլուի վրայով թշնամուն բռեց
մինչեւ Ույ Թափա, թուրքը սարել էր Միր-Բաշիրի վրա՝ սասցին՝
բոլ ա, զինադադար ա...

Տարեցներին պահակակետերից ետ ուղարկեց տուն, ու Գի-
րիշը դարձավ իր պահեստին ու արհեստանոցին: Մտավ արհես-
տանոց, այժ անց պատից կախ գործիչներին, օճորքի վրա սարդի
հյուսած մանդիլներին, գլուխն օրորեց, հետո գնաց պահեստ, 500
դեկալիտրանոց թափուր տակառների շարամիջով գնաց, գայթեց,
չընկներու համար ձեռքը հենեց տակառին՝ ձեռքի թափից տակառը
ձեն հանեց՝ արձագանքը գլորվեց մինչեւ դուռը: Ելավ պահեստից,
նստեց մուտքի մոտ ընկած թթեւու բնին: Գործերը կուտակվել են,
ինչի՛ց սկսի: Ուժերը կհերիքե՛ն, տեսնես:

Աշունը տերուտիրական էր Սվարանց ձորում: Խաղողն այժի էր
ընկել, թուզը՝ հասել: Կոլանտեսության հինգ հարյուր հեկտար այ-
գիներից տասը հեկտար է մնում գյուղամերձ Ջինհազի տարած-
քում, տասնհինգ-հասն օրից բերքը պիտի հավաքեին: «Բոնդորը»
շտապում էր: Տակառներից գլորում էր դազգահի մոտ, նորոգում,
հրում մի կողմ: Երբ մուրճով խփեց առաջին պատրաստ տակառի
հասակամասին, ավտոպարկի կողմից հնչեց լցավորող Բագրա-
սի ձայնը:

Դնզոցդ անու՛շ, Բոնդոր Գիոյի՛շ...

Աննկատելի արհեստանոց մտավ գյուղապետ դարձած նախա-
գահը:

Բարի օր...

Բարով տեսանք, Միգայել Միմոնիչ:

Քսանինն ու կես տարի նախագահ եղած հոր՝ Միմոնի հետ
բանակիցուկես տարի աշխատել էր Գիոյի՛շը: Թախիծ իջավ դեմ-
քին՝ ընկերոջ անտեղի կորուստը հիշելուց:

Գյուղապետն ստաց.

Բուտերին առայժմ ձեռք չտաս, փոքրերը նորոգիր, որ հասց-
նես, մինչեւ տեսնենք...

Այսինքն՝ հարաբերական նորոգում...

Միմոնիչը համապարտ ժայռաց վարպետի ակնարկի վրա, շուտ եկավ, գնաց:

Օրն իրիկնացել՝ բանթողի ժամն էր արդեն: Էդօրվանը հերիք է: Գոզնոցը հանեց, գործիչները հավաքեց, փաթաթեց գոզնոցի մեջ, դրեց մի կողմ, շորերը թափ տվեց, փակեց արևեստամոցն ու քայլերն ուղղեց մոտակա թգենու կողմը: Մի բանի թուզ ու մի նուտ պրկեց, դրեց պայուսակի մեջ: Վարդիթերի համար...

Իսկ Վարդիթերը, սիրելի Սանչո, այրիացավ: Այդ սիրելի կնոջն այլևս չեմ պատկերացնում առանց Բոնդուր Գիրիշի: Ի՞նչ կարող ես անել՝ մնում է հաշտվել անդառնալի կորստի հետ ու մխիթարվել նրանով, որ նրա հիշատակը դեռ երկար կապրի համագյուղացիների հիշողության մեջ:

Մնամ՝ **Բո՛ Գուն-Կիխոտ**

Նամակ տասնամեկերորդ

Սիրելի Սանչո, որջոյն:

Վերջերս քիչ ես գրում, ի՞նչ է եղել, հայտնիք՝ իմանա՞մ, հո քեզ հետ բան չի՞ պատահել... Ինչե՞տ, այս անգամ նամակս մի քիչ նամակ չի, այլ ցավի մի բեկոր, որ այս էլ ահա բանի տարի խրված է մնում մարմինիդ մեջ եւ անընդհատ զգացնել է տալիս: Սա մաքառում է՝ ցավի ու սփոփանքի սահմաններում:

Եվ այսպես...

Հարաթվա մեջ ամեն մի կիրակի է մնում, որ Նորիկը հանգստանա: Բայց ստիպված է գրկել իրեն նաեւ այդ միակ հնարավորությունից. սիրտ է, չի դիմանում, ցավից կծկվում է, երբ տեսնում է, թե ինչպես է կինը՝ Լենան, սեւ հագած, այս էլ բանի՞ տարի՝ սգահան չեղած, գիրկը թարմ ծաղիկներով լի, գնում գերեզմանոց: Ամեն անգամ հետեւից նայելիս՝ կսկծում է ինքն իրեն.

«Գնում ես, հա, գնում, Աստծո ամեն կիրակի, սը՛ թանկ արարած, որ Էդբան գնում ես, ինչո՞ւ՝ գոնե մեկին ե՛տ չես բերում...»

Նորիկը, ինչպես ինքը կասեր, իրիսկման լինելու համար, աչքերում՝ լճացած արցունք, վրձուկը՝ կոկորդում, կմտնի գոմ, մինչեւ Լենան իրեն կարգի կբերի գերեզմանոց գնալու: Էշն սուսջ կանի, կգնա փայտի, էշի վրայի խորջինում՝ կացին ու պարան, մի կանիստր ջուր, մի քիչ ուտելիք՝ հանդում մի բան բերանը դնելու համար...

Վագոն ձորի ծմակում գեճը չի կտրի, կացնով կտա ոտի վրա չորացած ու հին կոճղի գլխին: Թե կոճղը դեռ պինդ լինի, համառի, Նորից կգարկի ու ամեն խփոցի հետ տնքա, իրեն էլ թվա, թե կոճղն է ցավից տնքում իր անկման պահին...

Մինչեւ կեսօր կոճղը կոճղի հետեւից կհանի, դուրս կտա բացատ, կկիտի, որ իրիկնադեմին բեռնի էշին ու բերի տուն: Քստի ու քստինքում, քստինքի կաթիլները շեկ ու թավ բեղերի մեջ, խոնավ ու թաց վերնաշապիկը հոգնությունից մրմնացող լանջին կպած՝ մտքովն էլ չի անցնի՝ հանի շապիկը, գցի մի բոլով, արետտի: Կնտի կաղնու շվաբում, նստելիս մի «վա՛յ» կանի այնպես, որ կթվա, թե այդ «վայի» մեջ լստիուն տվող ցավին տեղյակ կաղնին կարձագանքի թախծոտ խշշոցով...

Նորհրդավոր մի լռություն՝ իջած բացատի վրա ու ծործոր ըստվերներ՝ ուրցի բուրմունքով բռնկված: Բերդաշենցի Ուրութանց՝ Նորիկն ինքն իրեն կտա ու կաննի, հուշի բարակ թելի ծայրն առած՝ կգնա ու՛ր, կգնա ու կանգ կառնի այնտեղ, երբ թուրք օմժնը ռուսների հետ լցված տանկ ու ԲՏԻ-ի մեջ, դրդոցով զայիս էր գյուղի վրա: Առաջինը նկատել էր իր կինը՝ Լենան, երբ հորթ ու ոչխարի հետեւից բարձրացել էր Փոքր նահատակի սարը: Հեփիեւ վերադարձել էր գյուղ, ոտքի հանել մարդկանց: Տղաներին՝ Նելսոնին, Վիլսոնին, Մարտիկին, Կոմիտասին ու մյուսներին տարել անտառի թավուտները ու պատվիրել՝ մինչեւ «երիժ, երիժ» չկանչի՝ դուրս չգան...

Գյուղից տասնհինգ հոգու բշեցին-տարան, տանջահար արին սողաճների ու շահբուլաղների բանտերում: Տղաները դուրս եկան անտառի թավուտներից, հավաքվեցին, խել-խելի տվին ու որոշեցին՝ ժամանակն է արդեն, օրհասական ժամը, զինվել է պետք: Կոիվն սկսվեց, ու ինքն իր «ԿՈՒԶ»-ով գեւեք ու զինամթերք է տանում դիրքերը: Մի օր էլ մեքենան պայթեց ականի վրա: Էդ ո՞նց եղավ, որ իր կործանված մեքենայի բեկորներում ողջ մնաց: Գու՛ցե Աստված խնայել էր իրեն, որպեսզի հետագայում ավելի ծանր ու դաժան փորձությունների ենթարկեր... Եվ փորձությունները հաջորդեցին իրար: Տունը սուգ ու շիվան ընկավ, տասնչորսամյա Վարսիկ սոջիկը գրադի գոհ դարձավ 1992թ. օգոստոսի 7-ին: Թրվոուն, ծիծաղկոտ ու երազկոտ սոջկա մահը ծնկի բերեց իրեն:

Հետո եկավ երկրորդ դժբախտությունը. որդին, տանկի նշանառու՝ օպերատոր Վիլսոնը մասնակցելով Ավիալ, Գյուլստիլու, Մուդանլու, Կուրոպատկինո, Ամիրանլար գյուղերում տեղակայված թշնամական հեռակետերի ոչնչացմանը, 1992թ. դեկտեմբերի 6-ին գոհվեց Մարտունու շրջանի հյուսիսարեւելյան հատվածի սահմանային բարձունքի համար մղված անհավասար մարտում: Հաջորդ գոհերը դարձան կնոջ՝ Լենայի եղբայրները: Ազգային հերոս Վոլիս Մուսայելյանն ընկավ Խոջաղուի, Կարեն Մուսայելյանը՝ Բահմանկուի գրավման համար մղված մարտերում:

Գաժան հարվածներ էին, ահավոր ու անխնայ: Դիմանալ էր

Նամակ տասներկուերորդ

Ողջուն սիրելի Սանչո:

Իմ այս նամակը, որ նախատոնական ու ամանօրյա բնույթ կունենա, չգիտեմ ինչից սկսեմ եւ ինչով ավարտեմ, անելիք շատ կա: Ուղիս մեկը՝ հին ու անցնող տարվա վերջին հոգեւարք սայրող կիսաօրվա մեջ, մյուսը մեկնել եմ նոր տարվա սպասվող օրվան, հայանի չե՛ ինչքան եմ այսպես շքամ մնալու: Ի՞նչ եմ անելու, ի՞նչ է լինելու, ինչպե՛ս եմ դիմավորելու ամանորը, բանը բան ցույց կա: Տարվա տասներկու ամիսների թվով՝ սա իմ տասներկուերորդ նամակն է, որոնցից, կարծեմ, պատասխանել ես երեւի երկուսին, թե երեքին: Ծույլի մեկը: Հասակի խնդիր է, թե՛... սատշում ես: Էհ, ինչ ուզում ես՝ արա, ինչպես ուզում ես՝ վարվիր, ես իմ Գուն-Կի-խոտյան ձին եմ բշկու... երեւի դու էլ բռնանշները կախ, սանչո-յասիպ ավանակը...

Հիմա, այս պահին, 2006 թվականի նախաշեմին եմ, հաշված ժամեր են մնում մինչեւ կրա մուսքը մեր կյանք: Հուսանք՝ ուսքը բարի կլինի, շառից-շլթաղից հեռու: Հինը, ինչ ասեմ՝ եկավ, իր սրածթողածով գնում է հավերժության գիրկը: Նրանից գոհ եմ թերեւս մի բանով, որ մաքրվել եմ պարտքերից: Եկամտուններս՝ խաղողը, հացահատիկը /միրգն ու բանջարեղենը չհաշված/ ուներս թեթեւացրին հոգսերի բեռից, թե տարվա բափ ու բռնիքից հեռու, ինչ է նշանակում ունենալ թեթեւ ուներ, խաղաղված հոգի ու լիաթոք շնչող, թրթռուն սիրտ: Գե, մի բնօրհանիր ու մի բամսիրի, թե՛ դու այդպիսի պահեր չես ունենում, թե՛ դու ոչ պարտք ես տալիս, ոչ էլ պարտք ես մնում...

Ինչեմ: Մի կողմ թողնենք մեր այս անհաշա ու ընդմիշտ հաշա մտերմությունը՝ անցնենք բան ու գործի: Ասել են, չե՛, թե ի սկզբանե է բանը: Ասենք՝ բո բանը մի քիչ ուրիշ է, իմը՝ մի քիչ այլ: Նախ, ինչպե՛ս ես դիմավորելու ամանորը: Չգիտեմ՝ բո գամբոյողը կհերիքի՞ տոնական սեղանիս... ախր ամեն ինչ պիտի առնես: Մի քիչ դեսից դենից ուղարկում եմ... Իմ չե՛ս նեղանա: Իմ ամեն ինչը տնական է, ոչնչի փող չեմ տա, հոգ չե, թե չունեմ, ունենամ էլ՝ չեմ տա, որովհետեւ դրա կարիքը չկա: Գյուղացին աննպաստակ փող չի խաղջի, կպահի, կկուտակի, ինչն էլ չիմանալով՝ ինչի համար: Գե, սպրեղ կա, մեռնել կա... վերջին օրվա համար: Նորիկը բեզ օրինակ, գիտես էլի՞ իմ հարեանը: Քսան տուննա հացահատիկ ամբարեց, հինգ տուննա խաղող, չհանձնեց, բերեց ճմռեց, լցրեց մի ամբողջ ցիստոնն, բեռզավոզի չե, ջրի: Պահեց-պահպանեց, մինչեւ անտառից մի թափք բոթով հանեց, բերեց-թափեց ու վերջերս Էն ճմռածից օղի թորեց. երեքհարյուր լիտր: Պատկերացնում ես, Էդ ամ

պետք, դիմանալ՝ գոնե հանուն Լենայի փրկության: Իսկ Լենան... տղամարդուց պակաս չգտնվեց:

Պատերազմն ավարտվեց: Արյամը նվաճված հաղթանակը սփոփանք էր բերում բեկված հոգիներին: Թ-վաց՝ Աստված իրեն ու Լենային պատճառածը քիչ չէր համարի, ուրիշ գոհ չի պահանջի: Բայց, արդյո՞ք, Տերն այդպես էր մտածում... Վերջին դժբախտությունը վրա հասավ 1996թ. դեկտեմբերի 27-ին: Ականազերծման գոհ գնաց կենդանի մնացած միակ որդին՝ Նելսոնը: Հատ չեղա՞վ, Աստված, թե դու լինելիր իմ տեղը՝ ո՞նց կդիմանայիր... Գե ես՝ մի կերպ, դու արի ու դիմացիր Լենայի փոխարեն: Ամա կդիմանայիր, հա՛, Տեր իմ, չէի՞ր դիմանա, հաստատա՛ չէիր դիմանա՞ր...

Ո՞վ մնաց, ու՞մ թողիր ինձ, Տեր իմ, ինչն էր իրեն կնոխամոխաստի Նորիկը: -Հա, ինչպեցիր Նելլիս՝ միակ աղջկաս իր չորս զավակներով: Պապան բեզ մատաղ, Նելլի, դուրբան լինի բո Սիրունին, Նելսոնին, Հակոյին, Նորայրին: Գե, արի, տես դրանց ու փորձիր չդիմանալ, ցավդ ներս մի առ ու մի բանիր գիշեր ու ցերեկ: Լեզուս պապանձվեր՝ չստեի Էսքան անասունն ու՞մ համար եմ պահում, Էսքան կովեր, խոզեր, ոչխարներ, բաղեր, հավ ու ճիվ... Էդ հենց նրա համար, որ ժամանակ չունենամ ցավին տրվելու, որ Լենան էլ ժամանակ չունենա, դժվար սայրուստի այս անձիր ծիրի մեջ մոռանա մորմոհն իր կորուսաների...

Հրեն Սիրուն աղջիկ-թոռս գերագանց է սովորում: Նեսոս գնաց առաջին դասարան, Հակոս եկող տարի կզնա, երեք տարեկան Նորայրիկս հետեւիցս այնպես է պապա կանչում, որ իմ տեղ Բերդաշենի Բերդաստորը լիներ՝ հազար տեղից ճաք կատար... Էն օրն էլ նախիրը հանդ տանելիս մեր Վանյան, որ իր երկու տղաներին է գոհ տվել, ասաց.

-Բո բաժինը շա՛տ եղավ, Նորիկ Հարությունյան, շատ ու շատ եղավ... Աստված պահի թոռներդ, սփոփանք լինեն...

Բա ինչ, սփոփանք լինեն: Ի՞նչ անենք, թե կոներս հոգնել են, ցավից նվնվում են, քիչ է մնում ուսերիցս թափվեն... Բա Լենան ո՞նց է անում, օրվա բանջարս ժամից հազիվ չորս ժամ է բնում: Բա նրա կոներն ուսերից չե՞ն թափվում: Դոչաղ է, զալում, ոչ մի տղամարդ չի կարող չափվել նրա հետ:

... Իսկ դու՝ անբուժելի ցավ, մխիթարվե՛ս դու, որ վիրավոր գազանիկի պես չե՛ս լռելու:

Այո, չի լռելու, սիրելի Սանչո, չի՛ լռելու...

Մնամ բո՛ւ **Գուն-Կիխոտ**

բողջը պիտի խմի սառ տարին, մինչեւ նորը կթորի: Էդ տնաշենը ոտքը զգելու տեղ չունի, բակը լիքը՝ հավ ու ճիւղ, բաղ ու հնդկահավ, ոչխար ու այծ, իրենց ամիլկ գառ-ուլերով, խոզ ու կով՝ սիրուն-սիրուն խոճկոր ու հորթերով: Մի տեսնեմ՝ նոր տարվան երեւի մի հավ կնորթի: Լենան Նորիկի մորթած հավի կրծքամսի սպիտակ մի շերտ ետ կզցի ինձ համար, մնացածը կդնի ամուսնու առջեւ: Նորիկը նոր քաշած օրուց մի լիքը բաժակ կառնի կոշտ ու կոպիտ մատների արանքը, կբարձրացնի, հայացքը՝ դեպի վեր, երկնայինին, հագիվ իր համար լսելի կշշնջա. «Էն խոխոցը հիշատակի...»: Խոսքի շարունակությունը փղձուկի նման կմնա կոկորդուս, ասցերում արցունքի ցող կհայտնվի, սիրտը կկսկծա՝ Էս էլ քանի տարի, մեր ազատամարտի զոհեր, ջահել-ջիվան որդիների համար... չէ՛ որ մեր ամեն մի ուրախության հետ նաեւ արցունք է խառն...»

Սանչո ջան, օրն իրիկնանում է: Հին տարվա վերջին օրը հոգեվարքի մեջ է եւ իր բրբրված հանդերձների ծվեներն է թողնում Գուգե ծմակի կաղնուտի գանգուրներին: Որ որ է՝ Արտաշը հանդից կգա՝ Էջին այց ու ահյակ հակ արած փայտ, մեջը մի խոտեւ չոր խոտ, ինքը վրեն արբայավայել նստած, տավարն առջելից, կգա ու մեր տան մոտով անցնելիս, իրիկնամուժի մեջ Էջի ոտքը մի պահ ետ կզցի՝ «թոբբո՛ւ, անտեր, մի կանգ առ» եւ «հրո՛ւ» կանի, որ կնշանակի՝ «բարեւ» կամ որպիսությունս հարցնելու պես մի բան: Իրիկնամուտի մեջ գլուխը՝ հակած Էջի ծոծրակին, որ կքվա՛ ոչ թե ինձ հետ է խոսում, այլ՝ Էջի: Եվ ես շատ պարզ կհասկանամ, թե ինչ է ուզում հասկացնել: Այսինքն՝ իրիկունն անցիր մեզ մոտ, կնստենք, կգրուցենք: Արա, ես չեմ ձերը, բա բո բաջի Աննան ի՞նչ կասի, բո բաջողի Արայիկը, Մարինեն, խոխոցը: Հետո, գլուխը այդպես՝ դեպի անդեզու արարածի ծոծրակը հակած, «չո» կասի հորեղբորս փեսա Արտաշը, իմ տան ցանկապատի ու Գուգե ծմակի եզրով անցնող ճամփի իրիկնամուժի մեջ կանհետանա տեսադաշտից:

Հե՛ հե՛ Դոն-Կիխոտ, ներքեններից, մեր այգու վրա մթնող օրվա միջով կկանչի Լենան, Չինան գանգել է, խնդրել, որ գա՛ր կապվես իր հետ... Հա, լավ՝ ստում եմ պատասխանի պես մի բան, որին, հավանաբար, Լենան չսպասի՝ իրենն սսել էր, վերջ, համոզված, որ ես էլ իմն եմ սսել: Չինան գանգել էր, որ կապվեմ հետը եւ ի՞նչ... Իբր չգիտեմ ինչի համար, պարզ չի՛, Էդ ե՛րբ չեմ նոր տարին դիմավորել բոջս հարկի տակ, Էս էլ տասներեկերորդ անգամ, առանց սպասելու, առանց պայմանավորվածության ու հրավերի՝ հետը պիտի լինեմ, իր օջախում, իր թուփ ու ծուպով, իր որբեայրի հարսի՝ Սվետայի, մեր ազատամարտի զոհ զարմիկիս՝ Արտակի կնոջ, նրա որբ երեխաների հետ, որի երկվորյակներ Կարենն ու Արենն արդեն համալսարանականներ են եւ, երեւի, քաղաքից

եկած կլինեն ամանորի առթիվ: Բա Կարինեն, Էն թուխձամ՝ ու թխաց միամորիկը, որ ուրի վրա է թիգա անում, միայն, թե պարի, անվերջ, անհոգ, առանց հոգնելու: Ինչպես ջինեմ նրանց հետ, երբ գալու է բոջս աղջիկը՝ որբեայրի Արեւիկը, Էն անձնագոհ Հովիկի կինը՝ իր գույգ աղջիկներ Անուշով ու Սուրբիկով: Գալու է Արարատը՝ Աստծո ողորմածությամբ, ողջ մնացած զարմիկ ազատամարտիկս՝ իր չորս տղաներով, ու նրբանկատ, ամեն ինչ իր տեղը բերող ու դնող Կատյայի հետ: Նրանք գալու են, այո, գալու են հավաքվեն Քանթոց Գիրիշի ու Չինայի հարկի տակ, դիմավորելու նոր տարին, որախոսալու, Էս էլ քանի երրորդ անգամ իրենց ուրախությունը, ցնծությունն արցունքի հետ խառն: Այո, բա էլ ո՞նց, Էդ է մեր ճակատագիրը... Ստալեյու ենք լայն ու բաց, լիքը սեղանի շուրջ, ուտել-խմելու ենք՝ ոչ ուտել-խմելու պես, բաժակ ենք բարձրացնելու մեր որբ մեծացածների առողջության ու հաջողությունների համար, որոնց որբությունն այնքան էլ որբություն չնստեց նրանց վրա՝ այդ համերաշխ ու միաձույլ ընտանիքի դիմակայության շնորհիվ...

Սիրելի Սանչո,
Էհ, ինչ սսեմ՝ Էս ենք, Էս մենք ենք ու մեր խալիսը, մենք ենք, մեր գյուղն ու մեր եզերքը՝ սահմանափակ, հոխորտացող թուրքի նշանառության տակ... քայց, ինչպես ստում են՝ հայոց արեւելից կողմանց դարպասն ենք: Դե, չեմ կարծում նստե, թե դու չես պատկերացնում՝ ով ենք, ինչ ենք այս եզերքին կառած նվիրյալներս, այս հողին պահ տված զոհերի պահապանները, ոխտավորները, եւ հասկանում ես, թե ինչ խորհուրդ ունի ամեն կիրակի ու տունի նախօրյակին նրանց շիրիմներին ոխտագնացության ու սգահան լինելու մեր երթը...

Սանչո ջան,
Ախպերս, մանկությունս, պատանությունս եւ էլի ով գիտե՛ ինչս... չնեղանաս, թե որ սսեմ՝ ես հիմա նման եմ Էն եզանը, որը զարնան իր հերկը, ամռան կալ ու կաղսելն ու աշնան վարուցանելն սվարտել եւ հիմա եկել է կապվել ձմռան իր ախոռին: Խոտը կա, ծղոտ ու կորս կա, թող ինչքան բեփր տալիս է՝ խժռի ու թըր...ի:/ Իմիջիայրոց, բեզ չի՛ թվում, թե մի քիչ զավզակացել եմ.../: Էդ նրանից է, որ մի անգամ վեր չկացար, չեկար Էս անտեր-անտիրական, Էս տեր ու տիրական եզերքի համն ու հոտն առնելու, Էս խալիսի ցավն ու ուրախությունը ներս առնելու, նրանց արտունջ-մրմունջ-հոգսերին հակ լինելու, հետո գնայիր, տրվելի մեծ ու փոքր նահատակների զիլ-զիլ գեփյոռներին, անձայր-անձիր երկինքների տակ այս եզերքին իջած դեկտեմբերյան եղյամի միջով քայլելի, սարսռայիր, երբ քամին իր սսուն համբույրը ծեփի ճակատիդ, դադրած-բեզարած, թեփուոված, հովի պես մեղմացած-բնջացած

Էն Աերվանտեար

գայիր, նստելիր իմ օջախում, մի բանի բաժակ թթօղի հուսպ տայիր, խումհար լեզուդ բացվեր, ու ես տեսնեի, թե ինչքան ես գավզավա-
կության մեջ գերազանցում ինձ... Էհ, ինչ ստեղծ, սառողին էլ լսող է
պետե՞ք, եղած-հեղածից չի՞նչելու բաներից եմ խոսում, մեկ է՝ սպե-
լորդ է գայլի գլխին խրատ կարդալը: Հիմա ինձ միայն մի բան է
անհասկանալի: Էս դեկտեմբերը չորային է, խիստ ու ցրտա-
շունչ, բայց՝ չոր: Այ թե՛ մի ձյուն գար, փափուկ-փափուկ, Էն ձյան
նման: «Ձյուն է գալիս փաթիլ-փաթիլ, հետն էլ անձրեւ կաթիլ-կա-
թիլ, Էդ միջոցին մի պառավ կին հորթն է փնտրում դաշտի միջին»...
Այ, հենց այդպիսի մի ձյուն գար ու նստեր մեր խալիխի վարուցան-
քին, կորուսյալ անցյալի չկորուսյալ մեր մանկության ընկերոջ՝
գյուղատնտես Միշայի՝ Ջինհագի տարածքում հիմնադրած խաղո-
ղի երբեմնի այգիների այսօրվա ամայի հողերի տավարի տափա-
նած արտի վրա, գար ու փափուկ-փափուկ նստեր, ճերմակ սավա-
նի նման ծածկեր Բոնդոր Գրիշայի տակավին թարմ շիրմաթում-
բը, լցվեր այրիացած Վարդիթերի ամանորյա սրտունջների, մոր-
մոհների, խռովքի մեջ, որ նոր տարին կդիմավորի կամ... չի դիմա-
վորի առանց Բոնդոր Գրիշի:

Ափսո՛ս, հիմա Էն ձյունն ու ձյունը չկա, որ մնաց մեր մանկու-
թյան մեջ: Էն ձյունն ու ձյունը գար ու երկար նստեր Էս խալիխի տա-
նիքներին, ծածկեր բակ ու սամուտք, որ Սուպուրանց Միրանը, Ու-
դունց Աշոտն ու Պայծառը, Թմասանց Թ-սոհին, Բյագունց Ժեյան,
Միրգաջանանց Մուրադն ու Գոհարը, Հրաչիկը, Վառունց Սեփին ու
Լիդան, Միրգաբեգանց Աշոտը, մեր Արտաշը, Աննան, որ կատաղի
հեկտարականներ էին, կոլտնտեսության մոլի հարսաբաշներ, հի-
մա դադրած-բեզարած նստեին իրենց տաք ու սպառնով օջախնե-
րի շուրջ, մտովի գնային-սուզվեին անցած օրերի երանությունում
եւ վրահաս Նիրվանայում մոռանային, թե իրենց մարմիններում
յարդի, երկկամի, շղերի եւ էլի ինչ իմանաս ինչերի մեջ ցավ է մնա-
ցել Էն լարված, անցյալ-կորուսյալ ժամանակների բեռան ծանրու-
թյունից... Այո, ձյուն գար, Սանչո, որ Ամանորը Ամանորի նմանվի
եւ Սուրբ ծնունդը՝ ծննդի: Եվ հիմա, Սանչո ջան, թույլ տուր հենց
այդ բաղձանքով էլ, ինչպես նաև ամենաբարի մաղթանքներով
ջերմագին շնորհավորել քո Ամանորն ու սուրբ ծնունդը:

Դեհ, Էսքանը, մեկել էրք եմ գրելու, չգիտեմ, հավանաբար՝ չեմ
գրելու, որ... վեր կենաս ու մի անգամ գաս:

Մնամ քո՝ **Դոն-Կիխոտ**

«Դոն-Կիխոտն» ով է գրել, հարցնում է Ուրուջանց Նորիկն ու
աչքերը խորամանկ կկոցում: Խիստ ու շեկ բեղերից կախվում է հու-
մորի մի խոշոր կաթիլ ու թվում է՝ կաթի հողին, հողը կճաքի: Աչքե-
րում սրողեր են պեծի՞ն տալիս ինչպես հեռավոր մի ժամանակ, երբ
հոտաղ էինք, եզներն արձակել, աշնան մթնժուռի տակ կրակ արել
ու, շուրջը նստած, ճիպտով բշխորում էինք չհանգած խանձողնե-
րը:

-Հարցնում եմ. «Դոն-Կիխոտն» ո՞վ է գրել:

-Էդ ինչի՞ հանկարծ...

-Մոռացել եմ հեղինակի անունը: Անա շան որդին գրել է, հա...

Գրող մարդ ես, գուցե հիշեցնե՛ս ով է գրել:

Էդ «գրողի» մեջ ծաղր կար, ծայրերը սուր-սուր նետեր ունեին,
որոնցով ամեն անգամ փորձում էր «խոցել» ինձ, բայց դրանք ես
միշտ օդում էի բռնում ու Նորիկը ճապարում էր, երբ նշանակետին
չէր խփում...

Մեկը լինե՞ր, ասե՛ր՝ բառասուն տարվա վարորդ ես, քո ինչ գործն
է, թե «Դոն-Կիխոտն» ով է գրել, բան ու գործ չունե՛ր: Հա է, միջնա-
կարգը գերազանց էիր ավարտել, մաթեմատիկայի առարկանե-
րից ուսուցիչներին նեղն էիր զգում, գրավորներդ տալիս էիր աղ-
ջիկներին արտագրելու: «Ինտելեկտ» ես խաղում, որ ի՞նչ... գնա-
լիր, պրոֆեսոր դառնայիր, դոկտոր: Ո՞վ էր խանգարում:

-Ձե, իսկապես, կատակ չեմ անում, օրո՞ւ բաժակը թեթեակի սե-
ղանին խփելով՝ դառնում է կնոջ կողմը՝ Լենային, աղջի, վարժուհի,
գուցե դու՞՛ ստես...

-Արա, Նորիկ, խի՞ չես թողնում Էդ մարդը հաց ուտի:

-Էս մարդը՝ ոչ ուտո՞ղ է, ոչ՝ խմո՞ղ: Ձեռք չի բռնում է՛, ձե՛ռք...

-Բա Էն ու՞մ ձեռքն էր բռնող մեջ աղունի վեց փթանոց երեսուն
հակերը մաշիւր նիտալիս...

Լենան՝ ո՞նց էլ ասաց՝ կացնի պես կտրեց: Նորիկը կարկամեց:
Բերանը բաց նայում էր կնոջն ու խոսք չէր գտնում ասելու: Իսկ ես
հիշեցի, թե էլեկտրադաշում՝ սղունը բեռնաթափելիս, զարմանքի
մի հայացք ասեցնելով վրայիցս, Խունարն ինչ փափասց Նորիկի
ականջի տակ, որ իբր ջլեմ:

-Ուզում ես ասել, թե Էդպես էլ կարող ես, այսինքն՝ գրողի էլ ես
բանեցնում: Նորիկը թարս նայեց Խունարին ու թե.

-Լեզվիդ թեթ ստա ու ձեղացդ խող տուր: Դու՛՛ աղա, ես՛՛ աղա,
քա մեր աղունը հու՛՛ աղե: -Քիչ հեռո՞ւ, էլեկտրադաշի աղմուկի մեջ,
մե՞նք այլես իրար չէինք լսում, ու... երե՛քս էլ այրափոշու մեջ էինք...

-Վերջը՝ չիմացանք էլի, թե «Դոն Կիխոտն» ով է գրել, Նորիկը

ձեռքն ամսով օրո՞ւ բաժակը:

-Ի՞նչ ես «Գոն-Կիխոտի» պոչից բռնել՝ բան ունեւ ասելու, ասա, կարճ կապեց Լենան:

-Դե որ Էդպէս է, չնեղանա՛ք, մենք բոլորս էլ Գոն-Կիխոտ ենք, հասկացա՞րք...

-Բոլորս՝ չգիտեմ, ասում եմ, ամա դու իսկական Գոն-Կիխոտ ես...

-Ախպեր, ջիւնի՞ կծում ես...

-Չէ, կծելու բան չես, հենց Էնպէս, Էլի, մի թելթել խայծում եմ...

-Որ՝ ի՞նչ...

-Որ երեք հեկտար աշնանացան չանես, փող խարջես, սայարկա ամենա վարի համար, հնձի ժամանակ էլ՝ հնձավարձ տաս, կոմբայնը տանես արտովդ շուռ աճես ու վերջում... մի բռն կուտ էլ ջրե՛րես տուն:

-Հա՛... Էդպէ՛ս: Բա Էն երեսուն հակերը, որ տնօրով բունկերն էինք աճում, քո աջի թայթո՞ւ էր եկել:

-Էն անցյալ տարվանն էր...

-Դե, ես մեղավո՞ր եմ, որ Էն վերին կյապուտից էս տարի կաթ չկաթեց...

-Թոյթ էլ չկաթեց... Ինձ թափչի էիր դարձրել, վեր հանել ծառերը, թե՛ էս տալին թխիր, սպասիր, շալի մեջ չի, Էն մի տալն էլ մոռացար... Շալի տունն էլ չէիր բռնում. աղայի նման ձեռքերդ կանթել էիր կոնֆերիդ, ասես Սոնա տատի գործած տնօրովուր ջվալ էիր՝ ցորնով լիքը...

-Լեզվիդ թեթ ասա...

-Լեզուս՝ կատու չի... Հինգ տակառ թթից հինգ գրամ օղի էլ չբաշեցիր, թե դուրս չի գալիս, տեղեն արթակ՝ Փաստ, ջուր էլի... մթնոլորտից է, թե ինչ, վերջին տարիներին արտը չի բաշվում...

Գլուխը հակ արեց կրծքին, կուրուկուփ եղավ ու բան չի ասում: Ձեռքի կոշտ ափով շոյում էր բաժակի լանջը, զգացի, որ լարվում է, թեման կփոխի ու նախահարձակ կլինի:

-Արա, բնակալներիս ձվերն ես հաշվում, էլ չես ասում, թե էս ժողովուրդն ինչու է ծարավից տոչորվում: Գրիր է, գրիր: Ես ասում եմ, ես՝ սկանում: Հետո ետ են դառնում, թե՛ Նորիկը փիս մարդ է. ես՝ շան տղա, որ ծունն ա՛՛ջ եմ կոխում... Արա, ջրացանցը հնացել է, փտել՝ փոխիր: Նաստը խարս՝ք է՝ սարբիր: Թե չէ՝ ամսվա վերջում բլիս չոքում ես՝ ջրի վարձը տուր: Էն օրն էլ տարա հնձավարձը մոցրի, չեկը վերցրի, բայց կոմբայնը անչեկը տարալ: Բա էս պետության բյուջեն մի բռն կոպե՛կ պիտի մտնի, թե չէ, այ Գոն-Կիխոտ...

-Ես ո՞վ եմ, որ... շրջվարչակազմի ղեկավար եմ, թե... վարչա-

պէս:

-Գրեա՛ կկարդան, չի կարող, որ մի բան չանեն: Էն անգամ վարչապետը մեզ մոտ էր, մեր հոգս ու ցավից խոսեցինք, խոստացալ... աչքիս լավ մարդ է երևում. Տեսնե՛նք:

-Ինձ հայտնի է, որ ջրամատնության ղեկավարին ուղարկել է տեղում ուսումնասիրելու խնդիրն ու միջոցներ ձեռնարկելու:

-Հա է, ամա վրահատու պիտի կենա...

-Որ ուղարկել է, ուրեմն... Կարծում ես վարչապետն ուրիշ բան ու գործ չունի... պիտի գա ձեր լոբի՞ն ջրի: Սաղ օրը գյուղամիջի նստարանն եք մաշում, բամբասում՝ պարսպոթյունից չի՞...

-Ու՛մ ես նկատի առնում, Նորիկի՛ն: Բա էս շինիմասի մա՛րդ եմ: Ներակ Նորիկի՛ն...

-Ա կոժ՝ քեզ ասիմ, ա կոյա՛ տու սկաց...

-Արա, ես ի՞նչ կյամ, դու նաղեր ես անում...

... Եկել էի մանկության համ ու բոյր առնելու Նորիկից, մինչդեռ «ճենճերամոտ» էր գալիս նրանից: Էլ Էն չի, փշփշոտ է դարձել: Արցախյան գոյամարտում երեք զավակների կորուստն ավերել է հոգին: Գեռ, փառք Աստծո, որ ինքն էլ ողջ է մնացել իր ԿԱՄԱԶ-ով ականի վրա պայթելուց հետո, երբ զինամթերք էր տանում դիրքերը: Հրաշք էր. ԿԱՄԱԶ-ից բան չէր մնացել: Նախիրն իր հերթին արտոնի տանելիս զգուշությամբ է բայում Բերդաշենի համդամանտերով, ինչպես ձին՝ սառույցի վրայով: Հանկարծ ջիւնի թե անտերից դեռ մնում է... Նյարդային է դարձել, դյուրագրգիռ: Ամեն մանրուք ափերից հանում է իրեն: Երբեմն տեղի-անտեղի դիտողություն կանի թռռներին, նույնիսկ հացի ժամանակ.

-Հակո՛, չանցյալդ կարգին բռնիր: Նեսո՛, վեր կաց սեղանից գնա, ձեռքերդ չես լվացել: Վա՛յ աստուծ, ախչի Նորայրին ինչի՞ թխեցիր...

Հիմա նստել ենք դեմ-դիմաց, սեղանի շուրջ: Ուրախությունից սիրտը բացվել, անգամ կատակներ է անում, երբեմն՝ կծում: Տասից մեկին եմ պատասխանում՝ խնայելով իրեն: Լիներ, սլնայե՛ս լիներ, լիներ առաջվանը՝ մի լավ ձեռքովս տայի...

-Արա, էդ արտաղից մի կաթ կուլ տուր, որ հաց ուտեցնի, միս-մորթի բռնես:

-Բա չե՛մ տեսնում՝ Էդքան ուտել-խմելուց կրծքիդ տախտակները միս-մորթու մեջ չեն երեսում...

-Լեզուդ լեզու չի է՛, ելմար օձ է, օձ... Դե որ չես խմում ու ոչ էլ ուտում ես, վեր կաց գնանք Վազուն ձորի ծնակուտում մի մաշին փայտ ունեն, նիտանք, բերենք:

-Հերվա նմա՞ն... Էն որ իմ ցույց տված ճամփով չբեցիր, կողբողեմ տվիր, մեքենան տարար, դեմ արիլ խանդակի: Քափ ու բր-

տինքում կորանք, մինչև... Հիմա չեմ կարող, եկա, տեսա ու գնում եմ:

-Բա մեկ էլ ե՞րբ ես գալու:

-Չգիտեմ, թե որ չեկա, Սերվանտեսին եմ ուղարկելու...

-Էդ ո՞վ է:

-Իբր չգիտես, թե՞ ինձ էիր ձեռ առնու՛մ... «Գ-ոն-Կիխոտ»...

-Հա՛...հա՛...հա՛, բարձր ու լիաթոք ծիծաղում է Ուրուբանց Նորիկը: Էդ ծիծաղը հետզհետե նմանվում է Էն առաջվա ծիծաղին, որ... մանկության բույր ուներ:

-Բա դու չե՞ս գալու... Էն Սերվանտեսի հետ...

-Ե՛ս... ես երեւի գամ Էն ժամանակ, երբ գարին մի-մի ընկույզի չափ դառնա...

Նորիկի ծիծաղն արդեն արցունքոտվում էր...

Ձմռան օր

Վերջապես եկավ վաղուց սպասված այդ ձյունը, եկավ նոյեմբերյան ու դեկտեմբերյան ցրտաշունչ, չոր, սարսեցուցիչ օրերի միջով, սառեւ երկար ճանապարհի հարթելով, եկավ ու տեղաց բակի թթենու, սաղահասակի, լվացքի պարանի, ձմռան՝ դեռ չմաշառած փայտի անկոյտը կոյտերի վրա, թեփոտեց հավաքունն ու հավերի ջրամանը, շան բնի տանիքը, որի տակ թագնել էր Չուլբարտը՝ առջևի թաթերն առաջ մեկնած, դունչը՝ դրանց վրա, հայացքը՝ բաց դռնակից ակնապիշ նետած դրսին, ուրկից ստողանման, խոշոր փայթիլներ են խցկվում ներս ու նստում շան ակնակապիճների վրա:

Տունը, որ ամբողջովին ձյունածածկ է, ընկղմվել է մի հոգեպարար անդորրի մեջ, ձյան թաքմ ու միաժամանակ սառն շնչառությամբ, ակամայից տրված ձյան մաքրությանն ու անաղարտությամբ: Ներսում, սպակեպատ պատշգամբում, որ վաղուց դարձել էր նախատեսյակ, հաճելի տաք է: Գրքում բամբակի ձեռքերի դրանից ծխնեղույզն ամբողջովին դուրս է բաշում վառարանի ծուխը: Սենյակում՝ ոչ մի մուխ, շնչելը՝ հեշտ ու հանգիստ: Վառարանում կրակն այնքան հանգիստ է, որ թվում է՝ չի այրում, եթե դրա հակառակը չմատներ վառարանի փոքրիկ օդանցքից երեսացող բոցի պրլպրոցը: Սենյակի կողապատին պահ արած բազմոցի թիկն է տվել տանտերը, յոթանասունը հագիվ անց, թխավուն, անկնճիռ, խաղաղ դեմքով, մի այնպիսի ծուլությամբ, որ հաստուկ է ընդհանրապես ձմռան օրվա մեջ առանձնակի հոգս ու մտահոգություն չունեցող մարդուն: Դիմացի պատը կիսով չափ ծածկում է ընկույզափայտից, սրճագույն, խոշոր ու ծանր պահարանը, դարակները՝

ներսից հայելապատ, որոնցում արտացոլված սպասեղենը երեսում է կրկինակի քանակությամբ եւ դրանից սովելի հարուստ է թվում նայողի աչքին: Պահարանի վրա, պատին դիմադր, սետերից մեծադիր երկու շրջանակ, արանճերում ամռանից մնացած ու հիմա խամրած մի ծաղկեփունջ: Հրջանակներում՝ տանտիրոջ երեւի 25-30 տարեկան ավագ որդու եւ փեսայի դիմանկարները, ազատամարտի հագուստով, հպարտ կեցվածքով, այնպես կենդանի, որ թվում է խոսեցնես, հետո կխոսեն:

Տանտիրոջ հայացքը երբեմն դառնում է նկարներին եւ, հիմա այնպես անճիգ, որից կարելի է ենթադրել, որ նա իր կորուստների ցամ ու կակիծը վաղուց անթեղել է հոգու հեռավոր մի խորշում, բայց տակավին տաք մոխրի մեջ երբեմն ցոլացող կայծերն առերես չի անում, մանավանդ, երբ ներկա են լինում տանեցիները: Պատշգամբի երկայնքով, վերից վար առկախ ցերեկային ճերմակ ու թափանցիկ վարագույրների միջով պարզ երեսում է տեղացող ձյունը, որ կարծես կրկնակի վարագույր է դրսի կողմից, ուրկից չի կտրում տանտերն իր հայացքը: Դեմքին՝ անվորով հոգու մի երանություն, որ վերջապես բերել է վաղուց սպասված այդ ձյունը եւ, հավանաբար, երկար կնտի աշնանավար իր, եւ ոչ միայն իր, այլև մյուսների վարուցանի վրա ու այգիներում, կներծծվի հողի ու վազի կոշտացած երակների մեջ:

Գուռը հանկարծակի բացվեց ու փակվեց: Ներս մտած կինը, գլխաշորին, ինչպես ցանցկեն վարագույրի մի կտոր՝ ձյան բարակ շերտ: Սա թափով ու ջղային տեսքով մտնեցավ, ցրտից կատաղած ափերը պարզեց վառարանի բովին:

-Ու, մրսե՛լ ես, տանտերը դարձավ կնոջն առանց դիրքը փոխելու:

-Չէ հա, հավասա բուրի է թխում, դու էդ բազմոցը պինդ պահիր, էդ դիվանը տակիցը չփախչի, Դիվանագետ:

-Դե ինչ կա որ, աշխատիր խառն է, դիվանագետներ էլ են պետեք, տանտերը հումորով էր, կատակին տվեց:

-Հա՛, բա չես ասի, Բանթոնի արտաքին գործերի նախարարներ շատ են տվել, -խոսքի տակ ջննաց կինը:

-Բանթոնց հանգիստ թող, դու Էն սաս, խոզի լախը տվիր: Էն տավարը դեռ միտք չունի: Ախր ժամանակն է, իմ հաշվով՝ Էսօր, էգուց, գուցե նույնիսկ եւ գիշեր, ախր շատ է ծանրացած, շա՛տ:

-Էդ բո ստելով չի, Էն որ աշխարհ պիտի գա, գալու է, դու դիվանը պինդ պահիր:

Ամուսինը լախ-լախ ծիծաղեց, ուսերի ցնցումից ցնցվեց նաեւ բազմոցը, սպա շունչ քաշեց, հանգստացավ, շուրթերին մեղմ մի ժպիտ՝ դարձավ կնոջը:

Էն ագրորը ջնորթե՛նք:

Սիրտդ էլ ի՞նչ է ուզում, հեզնեց, ետ բաշվեց վառարանից՝ բովին տված ափերն իրար շփելով, հոնգերը կիսած, ասես ունբամիջից աղուն պիտի կայծեր, տասր հավ ու մի ագրոր, էդ ո՛նց կլինի...

Դե, ինձ համար չես ասում, էն խոխոցը...

Կինը մաքի մեջ ընկավ, մտահոգ նայեց ամուսնուն, մինչեւ վերջինս նորից կատակի տվեց:

Պահես՝ ինչ անես, հրե՛ն թոշնագրիսը գալիս է: Աստված չանի՛ չգար: Ողջ Թ-ուրբիսն սրբում է...

Դե հորս, հորս, ծոր տվեց կինը մի այնպիսի բաղձանքով, որ եթե էդ թոշնագրիսն իր ուզածով լիներ, ամբողջ Թ-ուրբիսն կարբեր երկրի երեսից: Այա ուշքի գալով:

Էն փայտը ջնաշառեցիր, հիմա ո՛նց պիտի անես, նեղվեց կինն ու վարագույրների գլանցքի միջով մի հայացք նետեց անվերջ ու մարմանդ տեղացող ձյանը: Գոնե հերվա չորը խնայիր, որ էդ գեճի հետ բռնացնեն...

Կինը դուրս եկավ, երեսի գնաց հարեանի տուն: Տիրոջ բարով-խելքով տված գործերն արել-թողել էր՝ հավերին կուտ տվել ու ներս արել, շան լափով լիքը լազանը դրել առջեւ ու գնացել գոմ, մաքրել, աղբը դուրս տարել-թափել, մերումին կերակրել, ծանրած տավարի տակ մի կիպ հարդ ցրել, մտածելով, թե հանկարծ ծնի, հորթը խոնավ ու ցուրտ հասակին ջնսա, մրսի մի բան պատահի:

Տանտերը պառկած էր նախկին դիրքում, աչքերը՝ կիսախուփ, ոչ ննջելու պես, դեմքի արտահայտությունից կարելի է կռահել, որ մտքերի հետեւն ընկած գնացել էր՝ ով իմանա, թե ուր:

Դ-սա՛, շեղբեց տան անդրորը, առանց աչքերը բանալու ու, կարելի էր կռահել, որ այդ «դա»-ի տակ շատ բան կար: Չմոռն այդ օրվա պարսպության մեջ ինքը պարսպ չէր: Այդ «դա»-ն երեսի անցած տարվա արած-թողածի հանրագումար էր եւ, հավանաբար, այս ձմռան ձյունները վերկենալուն պես, գարնան բացվելուն՝ նոր անելիքների նախահաշվարկ: Անցած տարվա բերք-խաղողը՝ ավելի բան երեսուն տոննա, փակեց ծախսեր ու պարսպեր, տակը մնաց երեք միլիոն պուպու դրամ կամ վեց հազար կանաչ դոլար, որ երեք ընտանիքի՝ որբնայրի մնացած աղջկա, հարսի, իրենց հինգ երեխաներով, պատերազմից աստծո բարեհաճությամբ կենդանի մնացած կրտսեր որդու, իր կնոջ ու չորս երեխաներով հանդերձ, եկամուտն էր, որ բոլորի ընդհանուր համաձայնությամբ դրին որդու ձեռքը, թե գնա՝ Երեսանից մի «Գագել» սո ու բեր, ինչ է, թե թուպով-ծուպով բաղաբ գնալիս՝ առեստրի նպատակով,

ջնսան «երթուղային տաբսի-գագելի» հույսին, բանի որ նույն վուդերով կարելի է առնել էն բենգինը, որով սեփական հայաթից, սեփական մեքենայով, առոբ-փառոբ գնան բաղաբ ու վերադառնան: Խելքի մոտ հաշվարկ էր, հոգ չէ, թե մաքրված-լաւուված պիտի գնան նոր բերքի տակ, որ նախատեսվում է անցյալ տարվանից ավելին եւ, թե հաջողություն ու սաղություն եղավ, լեն ու բոլ կեղծիքի իրենց երեք ընտանիքին՝ դժվար սպրուստի անձիր-ծիրի մեջ չեն մնա:

Դ-սա՛, այս անգամ աչքերը բացելով՝ նայեց առաստաղին, կարծես այդ «դա»-ի պարունակությունն այնտեղից է կախված: Մինչդեռ տնից դուրս էր, այնտեղ՝ հանդ ու չոլում. գութանն անցել էր այգու շարամիջերով, վագերի տակը փխրեցվելու մնաց: Բայց այ թե ջրի հերթը իրենը լիներ, գնար այս լափուն տվող ձյան հետ խառն ջրեր այգին, կարգին բան կատացվեր, այգին կուշտ ու կուռ կլիանար ու չէր վախենա ամռան տապ ու երաշտից: Ամա թե շառը՝ եկավ, բարին հետը: Աջնան վարուցանքի վրա նստող այս ձյունից արտը հո վեր կկենա: Տորեն չէր արել, խանութները՝ լիքը պյուր, գարի ցանեց, տավարի, խոզի, հավուճիվի կորս: Հիմա ի՞նչ է մոռն, հա, հի-միկվանից դեղերի հոգս անել եւ դրանք բերել տալ անպայման Երեսանից: Այնտեղ չեն խարդախում, Ստեփանակերտում անում են ու դրա սրսկումների արպունքն այն չէ, փորձել է ու փորձով համոզվել: Այնտեղ, այնտեղ ի՞նչ, հա, հիշեց, դիզվառելիքի, հնձավարձի հոգս անել, հիմնկվանից իր ու կնոջ թոշակները հետ գցել մինչեւ մայիս, իր կարծիքով՝ այդ ծախսերը կծածկի:

Գոմից տավարի բառա՛չ եկավ, թե՛ իրեն թվաց, բնագրական մի կանչ՝ աղերսի պես ու թափով ելավ բազմոցից, գոմի խալաթն ուսերին առնելով, շտապեց այնտեղ: Տավարը նստած էր, կողքին հորթի նման մի բան, որ դեռես հորթ չէր, ապուշ, անուղեղ, շվարած, չոված՝ դեռես թույլ ոտքերի վրա, որ կարծես ոտքեր չեն, այլ ծուռուտուտ հենակներ:

Տավարը վերկացրեց, տակի աղտեղությունները սրբեց, մաքրեց ու տարավ դուրս թափեց՝ մտածելով, որ լավ է՝ կովը չի կերել, ախր պատահում է չէ՛, ուտում են ու սատկում: Վերադարձավ գոմ ու հորթի դեռ ճրճիս գոլիսը գգոշությամբ ափերի մեջ առնելով, դունչը մոտեցրեց մոր պտուկներին, մրմար արեց, ինչպես ինքը կատեր: Հորթը երկար չէր հասկանում, թե ինչ պիտի անի, բայց, սհա պտուկն առավ ու բերանում հաճելի մի համ զգաց, հետո գնաց-գնաց ու փորից հետզհետե նկատելի դարձավ, որ այնտեղ է հոտում մայրական կենարար հյուրը:

Տանտերը գննեց հորթի պոչատակը, հետո այնպես ցածրա-
ձայն, իր ու կովի համար լսելի՝ աչքը հանեմ /կարծես երեխայի
հետ էր/ Էս քո սեռից չէ, իմ ուզածը քո սեռից պիտի լիներ, դժգոհա-
ցու, իսկ դու ցույլի ես ծնել, հերիք չէ, դանակն էլ, սեռ ճակատագրի
պես, վզին, որ ի՞նչ, մեծամարտուց մորթե՛մ: Չէ, ես արյուն չեմ անի,
կենձանա, կծախեմ ուրիշի, թող ինչ ուզենա՝ անի, միայն թե իմ աչ-
քից հեռու...

Կովը լիզում էր մորն ընտելացող հորթի փայնբոտ ու նվաղկոտ
լանջը, վիզը, սկանջատակերը, պոչն ու պոչատակը, ես դրանից
ասես հորթը գույն էր գցում, մի տեսակ շող ու փայլ էր առնում ես
սողուն իսկապես որ հորթի տեսք: Երբ ամեն ինչ գրեթե կարգի էր
զգել, տանտերը դուրս եկավ գոմից ու դուռը ետևից ամուր փա-
կեց: Այդ պահին բակից լսվեց աբաղաղի մի զիլ ձկլթոց ու անմիջա-
պես մարեց:

Երբ տանտերը բակ մտավ, կինը, դանակը մի ափի մեջ,
բռունցքներով աբղորի թետերը ձյան մեջ ամուր խրելով՝ դեռ պա-
հում էր, որ ջթարտա, չարնոտի իրեն:

-Այ կնիկ, էս ի՞նչ ես արել:

-Քո ուզածը, պատասխանեց կինը, վեր կացավ ծնկած տեղից,
դանակը թողած աբղորի վրա, կրկնեց, քո ուզածը... Էն խոխոցը... Էն
տրեյունկ հորթի, էս մարմանդ իջնող ձյան ոտքերի տակ, էն թռչնա-
գրիպի դեմ, որ Թուրքիայից դուրս չգա...

Տանտերը ծիծաղեց լախ-լախ, իսկ կինը.

-Էն տրեյունկը իմ սեռի՞ց է, թե՞ քո...

-Իմ, կարճ կապեց ամուսինը:

-Լավ չէ, լավ չէ, իմ սեռից լիներ, ուրիշ բան...

-Հա, ես էլ էդ էի ուզում, ամա ի՞նչ կարող ես անել: Էն որ աշ-
խարհ պիտի գար, ոչ ինքը գիտեր որ սեռից է լինելու, ոչ էլ մենք
կարող էինք գուշակել: Երկնայինի կամոք էր:

-Անունը ի՞նչ դնենք...

-Տլիկ Ամրամ, պատասխանեց կինը ժպտալով:

Աբղորն առան ու ներս գնացին: Դրսում, արյամբ ներկված ձյան
վրա մնաց մորթվածի դրոշմը, ես կմնա այնքան, մինչևն ձյունը
կհալի...

ՊԱՏԵՐԱԶՍԸ ԵՎ ՄԱՐԴԻԿ

Ֆելիսը

Երբ գրում եմ՝ չեմ փոխում հերոսներիս անունները, կարող են
վկայել իրենց: Նրանք միանգամայն իրական մարդիկ են, որոնց
հետ շփվում են, սպրում ու շնչում: Իսկ ես գրում եմ հասկապես
նրանց մասին, որոնց սիրում եմ, ու եթե գրածներիս մեջ երբեմն
անխուսափելիորեն թերություններ են բացահայտվում, բոլորո-
վին էլ չեմ անհանգստանում, թե կարող է վիրավորվեն: Հաճելի է,
էրբ մարդ ներկայացվում է այնպես, ինչպես կա: Հակառակ դեպ-
քում՝ դիմացինը հիմար չէ, թափանցում է կեղծիքի մեջ ես... առն-
վազն հոգու մի թափում անկյունում չի համակրում բեզ: Բայց իմ
այս վերջին միտքը չի վերաբերում Ֆելիսին: Իրար սողել ու մաղել
ենք, թե՛վր տվել բամբու, տաշտում մնացել է մաքուր այլուր...

Երբ տավարը բշեյու իր հերթն է գալիս՝ ասես Ելմար օձ է փա-
թաթվում վզին.

-Հոգնել եմ, սսում է, չգիտես է՞ ո՞նց եմ հոգնել...

Բայց էլի տավարը բշում է: Թուխ դեմքը մտահոգ, կաշվե լայնեզ-
րը գլխին, հագին նույն թերմաշ վերաբերում, մի ձեռքում՝ մահակ,
մյուսում՝ սրայուսակի մեջ օրվա ուտելիքը: Չգուց ես, որ քայլելիս
ռետինե սապոգները սեղմում են ոտքերը: Ինչ անի, թե սեղմում
են, քա որ, ստուված չարած, հանկարծ անձրեւ եկավ...

Մայրս եմ հետեից՝ մինչևն ինքն ու նախիրն անհետանում են
իմ աչքից, նայում եմ ու մտնում. Կարծում եմ՝ ես չեմ հոգնել, Ֆե-
լիս, ինձ համար էլ դժվար է: Ծեղր-ծեղին վեր կաց, մտիր գոմ ու
տավարի տակը մաքրիր, բափ ու բոտինի մեջ կորած աղբը տար
ու թափիր, ետ դառ ու կովերի կրծերը լվա, կթիր ու դեռ այդքանից
հետո, եթե տավարը բշեյու իմ հերթն է՝ նույն Ելմարը փաթաթվում
է նաև ինձ...

Ֆելիսը նախրի մեջ երկու երինջ ունի, մեկը՝ սեռ, մյուսը՝ կար-
միր: Սեռը մի տարով փոքր է: Էդ կարմիրն էլ մի ջոկ անասուն է, մի
բաշած պատկեր, հանգիստ, խելոք: Նախրից կշոկվի ու իր համար
առանձին կարածի, որ մյուսները հարու չաան, չխանգարեն: Երե-
կոյան տուն դառնալիս, բավական է հեռվից մի անգամ կանչես՝
«Եկ, Նարինջ», ես կամաց, առանց իր երիշից ընկնելու, կգա ու
կիսառնվի նախիրին: Ֆելիսի համբերությունը հաստում է.

-Էդ անտերը ե՞րբ է ծանրելու... աչքս ջոր կարեց: Չէ, է, չէ, ծա-
խելու եմ, հոգիս ազատեմ...

-Որը՞, հարցնում եմ:

-Կարմիրը է, կարմիրը:

Ծիծաղում եմ, ինչն էլ է ծիծաղում ու նրա ծիծաղը, որ միշտ աչքերից էր սկսվում, ասես պայթում է որպես իմ ու իր անասունի դեմ մի անաղայար բողբոջ:

-Քեզ ի՞նչ կա է... բռնու՞մք ծնել են ու կթում ես: Իսկ ես տակ եմ մաքրում, պահում, պաշտում՝ անարդյունք:

- Ինն ամիս էլ ո՞նց ես դիմացել մորդ...,- շաղիներ կուլ եմ տալիս ու շարունակում,-համբերիր, Ֆելիս, համբերիր, շուտով Նարինջը բողով կգա, կծանրի, ինն ամիս հետո էլ՝ կծնի, կկթես ու լազաթը կիմանաս...

-Մի տարի՞ էլ պիտի սպասեմ...,- ծոր է տալիս,- ափսոս չէ՞ր Էն ժամանակները. խանութից կեֆիր, սմետանա Էինք առնում, կեֆիրը՝ բան, ամետանան՝ բաասուն կոպեկով, փչ ու միջ ուտում Էինք, կշտանում, թերատ բանկան նետում աղբարկդ, չէինք էլ սփստում...

-Հենց էլ չափսասալն էր է, որ հիմա էս օրին ենք,- ընդհատում եմ ու շեղ նայում իրեն:

Լռում է, մի պահ մտածում ու թե.

-Հա էլի, էլ մի ասա՛...

Երեկոյան տուն է դառնում նախիրն առաջն արած, մի կապուկ խոտ էլ կռնատակին, հոգնած, դադրած: Նայում է ինձ, երկար տնտղում, ասես առաջին անգամ է տեսնում, սպա նախօրոք մտածածն է արտաբերում.

-Ինչ ուզում ես՝ ասա, էս տավար պահելն իմ ու բո գործը չի, մեզ չի սազում... Աստված ո՞նց է հանդուրժում, երբ ինձ ու բեզ նմանը մահակ է վերցնում ու տավար տանում արոտի... Բա որ հանկարծ աշակերտներիցս մեկը տեսնի ինձ տավարի հետենն ընկած՝ ի՞նչ կմտածի...

-Թե իսկից գլխին աշակերտ է՝ ոչ մի վատ բան...,-ասում եմ ու շարունակում իր տոնով,- երբ Բորիս Բաղրյանը... ճանաչո՞ւմ ես, չէ՞, պատահում ենք՝ ինչն անտառից փայտը շալակին գալիս է, ես տավարն եմ հանդ տանում:

-Վասա՛...

-Չա՛ն: Գիտե՛ս ինչ ենք անում: Մի պահ նայում ենք իրար, դառն ժպտում, ինքը՝ շալակի տակից, ես՝ ձեռքիս մահակ ու նախիրն առջես: Ասում է՝ իմ կրակը բեզ է այրում, բոնը՝ ինձ... Էդպե՛ս:

Ֆելիսը կարեկցանքով նայում է ինձ ու կապուկը կռնատակին հեռանում:

Նախիրը բշեղու իմ հերթն է: Գիշերն անձրև էր եկել ու դադարել էր լուսադեմին, բայց երկինքը դեռ սեռակնած էր, չէր բացառված, թե նորից չի տեղալու ու... հանդում բաղնիք չեմ անելու: Ապահո-

վության համար հետս անձրեանց վերցրի: Ֆելիսը երինջներին բերեց, խառնեց նախիրին ու թե.

-Աչքդ կարմիրի վրա պահիր, մի տես էդ անտերը միտքը հո չի փոխում...

-Կարմիրը բո ջգրու միտքը չի էլ փոխելու,-կասակում եմ,-փոխի էլ ի՞նչ օգուտ՝ մեր նախիրում ցուլ չկա...

-Զգիտեմ, մի կերպ արա... ուրիշ նախիրների հետ խառնիր...

-Արա, ես բեզ համար ցուլերի կանտորի դիրեկտոր՝ եմ, -ասում եմ՝ իբր բարկացած:

-Հա՛..., հա՛..., հա՛,- ծիծաղում է այնքան բարձր ու սրտաբուխ, որ աչքերը ջրակալվում են, ծիծաղի մեջ էլ ավելացնելով,-տավարը բշի՛ր... դու ինձ համար ամեն ինչ ես:

Հանդը խոնավ էր ու թաց, խոտերը՝ շաղոտ: Չորալանջն ի վեր ցրվել էր նախիրը, փնջոցով արածում էր, խոտ էր արածում ու հետն էլ ցող ըմպում այնպես, որ կեսօրին անասունը ջրելու կարիք չի լինի: Չորի մյուս լանջին փավել էր Բարսեղի նախիրը: Հանկարծ նրա ցուլը պրկվեց տեղից, բղավոցով եկավ, հասեց ձորն ու գնաց դեպի Ֆելիսի կարմիրը:

-Էդ ո՞ր, ցուլիկդ,-կանչեց Բարսեղը,- հետեիցդ հրավե՛ր են ու դարկել,-սպա դառնալով դեպի ինձ՝ ասաց,- Պարի օ՛ր...

Չեռքս օդի մեջ կախում եմ իբրեւ պատասխան եւ ուշադիր հետևում ցուլիկին, թե ինչ պիտի անի: Մոտեցավ, հոտ քաշեց երինջի պոչատակից, դունջը ցցեց վեր...Գործն ավարտեց, սկսեց կողքին հանգիստ արածել եւ մի այնպիսի բավականությամբ էր արածում, որ...

-Գործդ տեսա՛ր, ցուլիկը... մորթե՛մ բեզ, դե եկ,-ասաց Բարսեղն ու կրկին դարձավ իմ կողմը: Ախպեր, էդ երինջի տիրոջը կասես Էգուց մաղարիչն ուղարկի...

Երբ երեկոյան նախիրը մտավ մեր փողոցը, Ֆելիսը սպասում էր Էլեկարական լամպի տակ, մեջքը հենած սյունին: Սպասում էր այնպես, ասես սիրտն ինչ որ բան էր գուշակել: Մոտենում եմ, խորհրդավոր ժպտում:

-Հը, չի՛նի, թե հոգնել ես:

-ԶԷ,-ասում եմ,- էլ իր հերթին, բայց Էգուց կես լիար...

-Ի՞նչ..., -ծառս է լինում՝ հասկացավ,-չեմ հավատում, չի՛ կարող պատահել...

-Արա, էլ կես լիարն ինձ համար չեմ է ասում, Էն ցուլի տիրոջ...

-Արա, հա է, հա, բայց հավաստալս չի՛ գալիս, թե կարմիրը...

-Էսօր ամսի բանի՛սն է,-հարցնում եմ:

-Մայիսի իննը:

-Դե ուրեմն մի՛նչես եկող տարվա մարտի ինն էլ սպասիր, թե էդ

օրը չծնեց՝ անունս փոխելու եմ:

Ֆելիսյա տաք ամիս նորախոսքամբ դրեց կարմիրի մեջքին, որ մոտեցել էր տիրոջը, սեռուկն էլ ետեհից, ձեռքն անասունի լանջով գնաց, պոզերի արանքով իջավ ճակատն ի վար, խանդադաստանքով շոյեց աչքերն ու «հո» արեց՝ գնացին տուն:

Ֆելիսյա պրոֆանտիստունաբանի առաջին փոխանօրենն է: Որպեսզի աշխատանքից ջրացակայի, գործը չսուծի՝ խնդրեց իր հերթը հարմարեցնեն շաբաթ, կիրակի օրերին:

Երինջը ծանրեց, կուրծք լցվում էր ու պրկվում: Բայց մի օր, երբ էլի նախիրը բռնու իմ հերթն էր ու տարել էի հանդ, կարմիրն առավոտից բիչ արածեց ու նստեց: Անհանգիստ մոտեցա, ոտքով հրեցի հետույքին, վեր կացավ: Քեփ չունեի, անախջապես նկատեցի, որ «ոտել» էր: Անելիքս գիտեի, գործի անցա՝ կարգի ընկավ: Տունդարձին Ֆելիսյան հարցրի.

-Երեկ երեկոյան կարմիրին ի՞նչ էիր տվել...

-Բա՞ն էր պատահել, անհանգստացավ:

-Ուտել էր...

-Բա ի՞նչ արիր...

-Ի՞նչ պիտի անեի, փայտի մի կտոր վերցրի, բերանը բաց արի, դրի երկու ծնոտի արանքում, պինդ կապեցի ու սկսեցի դես ու դեն բռնել: Թակում եմ ու արագ բռնում, թակում եմ ու բռնում այնքան, մինչև կարգի ընկավ:

-Վաս՞, կապեց, փորին հո չե՞ս խփել, հանկարծ չվիժի...

-Բացառված է ... հետույքին էի խփում: Բայց դու էն ասա՝ երեկ երեկոյան ի՞նչ էիր տվել նրան:

-Ճակնդեղ...

-Ինչքա՞ն...

-Մի դույլ, ասաց վախվորած:

-Տնաշեն, սպանելու՞ ես: Էլ չտաս, թե տաս էլ՝ մեկ-երկու հատ:

-Լավ, խոստացավ հանգիստ ու թե, բո կարծիքով ե՞րբ կծնի:

Նայեցի երինջի կրծին ու հատկապես պտուկներին, որոնք դեռ չէին պրկվել ու ցցվել: Մտածեցի՝ երեսի մի շաբաթ էլ տեսի: Միտքս թաքցրի, ասելով՝ իբր բարկացած.

-Ի՞նչ է, ես բեզ համար տատներ եմ...

-Արա պա հուվր՝ս, ծոր տվեց ու գնաց:

Կարմիրը ծնեց: Լավ կով դուրս եկավ, լավ էլ կարթ է տալիս: Հիմա իր հերթին Ֆելիսյա նախիրն արոտի տանելիս, կաշվե պայուսակում մի բանկա մածուն էլ է տանում, պանիր էլ: Անձրեոտ այս աշնանն էլի նույն կաշվե լայնեզրն է գլխին, հագին՝ աշնանային նույն կաշվե վերարկուն, ոտները ռետինե նույն սապոգներում, թեպետ նեղ են գալիս, սեղմում են: Ի՞նչ կարող է անել՝ անձրեոտ օր,

ցեխ, համար՝ շաղոս: Տունդարձին դիմավորում եմ, բազմանշանակ ժայտալով հարցնում.

-Հը, էլ ո՞նց ես...

-Ասում եմ՝ սեռուկը ծախեմ...

-Էլի՞, ընկեր մտավորական, հեզնում եմ, մեր սոցիալական վիճակը խորհուրդ չի տալիս... Ուրիշ էլ չունենե՞ք՝ տավարը պիտի պահե՞նք:

-Արա, ինչ ուզում ես՝ ասա, մեկ է, մսիակը անկում է օդում, սա մեր փեշակը չի է՛, մեր փեշակը չի՛...

ԳՃվար սպրոստ

Գարնան վերջին, երբ դադարել էին հորդառատ անձրեւները եւ թվում էր՝ հունիսն անասնայ ու արեոտ կլինի, խոտը հարելիս թոռայաց չի անի՝ հնձածը փոտեցնի, Կիման մի էլ առավ: Հյու պղ կենդանին բարձրատուն էր, սեռուկ, երիշը՝ սեղը: Ըստույանի փախստականներից մի ընտանիք, որ մեզ մոտ էր սպրոստ, մի էլ ունեի: Տեղը, որպես մեր լավության փոխհատուցում, փայտ էր բերում մեզ համար: Գժրախոտարար, էլը զառամած էր, չլինացավ, սասկեց, փախանը ընկած էր մեր ներքնահարկի մի անկյունում: Կիմային կատակով ասացի.

-Մեր տանը մի փալան կա՝ բեզ տամ, էշն ինձ էլ պետք լինի՝ չմերժես...

Ըեղ նայեց՝ խորամանկ ժպիտն աչքերում: Հոսմոր ուներ ու տակ մնացող չէր: Անախջապես վրա բերեց.

-Ի՞նչ փալան, ի՞նչ փստան, էլը գլխիդ դուրբան: Ֆելիսյա բահ-բահ ծիծաղեց ու ծիծաղից սեռուկ աչքերը կորան կոպերի տակ, ասաց.

-Կիմա, տավարը բիչ էր, էշն էլ ավելացրիր...

-Էշի դադիրը հետո կիմանաս, կարճ կապեց, մի այնպիսի ենթատեքստով, որ կնշանակի, թե պղ «դադիրը» գալու է հենց բո ստաջ... Ես, որ Կիմային բավականին ուսումնասիրել էի՝ գիտեի, որ նրա հաշվարկները հեռուն գնացող հաշվարկներ էին... Ֆելիսյա շարունակում էր խայթել.

-Էլը բերի, էլը ոտի, բա էշատերն ի՞նչ կուտի...

-Էշատերն էլ բո բերածն է ոտելու..., տակ չէր մնում, Ֆելիսյան էլ չէր վիրավորվում, հեզնանքը չեզոքացնում էր իր զարմանալի, վարակիչ ծիծաղով: Անասնատերերը տազնապի մեջ էին. տարին նահանջ է, խոտը պակաս, ով հասցրեց եղածից մի բան գցել կտուրը՝ անասունը ձմեռահան կանել: Վայր եկել, տարել էր նրան, ով հապաղեց ու, բանի վերահաս ամառը հողի երեսից չէր խանձել եղա-

ծր՝ ժամանակից շուտ կծղած ու կարճ մնացած խոսքը, ձևերը նրա հերն էլ կանխի՞, անասունի հերն էլ: Կիման տենդի մեջ էր. բասի ու քրտինքի մեջ կորած դես ու դեն էր ընկնում: Վերջապես Քարաշենից մի ափ խոտհարք պոկեց՝ մեկ երրորդի պայմանով: Ուրիշ ելք չունեի: Գերանդին արեց ու գործի անցավ: Հնձում էր ու հնձածից ամեն երեկո մի էշաբեռ էլ բերում տուն: Երբեքին կարգով էր անում, որ հանկարծ գլխի ջրնկեն:

Թե հաջողվի այդպես շարունակել՝ երեցից ոչ թե մեկը, երկուսը կմնա իրեն:

Տունդարձին հարցնում եմ.

-Հը, ո՞նց ես... խոտհարքում մի բան կա, թե՛...

-Ի՞նչ բան է... սաղ օրը կածուկ եմ ջոկում, -սասում է, ձեռքի ափերը պարզում դեպի ինձ: Ափերում՝ կարմրուկներ են, մատներն ուռած, փքոտած: Ֆելիսը հերթական գնդակն էր արձակում.

-Էդ որ օրական մի էշաբեռ բերում ես... տասիասիրոջն ի՞նչ է մնալու:

-Արա, մի գնա բանիդ՝... հալս բո հալից չի՛:

Ֆելիսը փթ ու բերան փակում է ձեռքի ափով, անցնում թիկունքս՝ հազիվ գուպելով փաթկոցը:

-Արա, բամակ մի մտիր է... Էզոց տավարը բշեղու հերթու է, նախիրն իմ փոխարեն բշիր, ես ես խոտի հոգսը բաշեմ, պրծնեմ:

-Կբշեմ, բա ո՞նց, խնդում է Ֆելիսն իմ թիկունքում, -մի էշաբեռ էլ ինձ համար բերես՝ խի չեմ բշի՛:

Խոսքը՝ խորումի մեջ, անձրեա եկավ: Թոն կաթեց Կիմայի հոգս ու տենդի վրա:

Չանձրոյթը նստեց նրա պարսպոթյան մեջ, ախոռին կասյած էշի կախ ականջների վրա, որ թափուր մնացած զինքն էր թափ տալիս: Եվ պարսպոթյան բերած ձանդարոյթի՞ց, թե՛ ինչից, Կիման հերստովեց, ինքն իրեն ուտում էր ներսից, թնթորում, թքում էր եղանակի՞, թե՛ ինչ որ մեկի վրա, որ իր հերթին նախիրը պահ տալիս լակուտ-մկուտի, տանում են հանդում դալ անում, իրիկունը սոված բերում տուն: Չէ է՛, չէ՛, ինչ երկու կով չի՛, նախիրից հանեմ, տամ վարձու պահողի: Օրական տասը լիտր չե՛մ կթում, մեկը ծախեմ՝ վարձը կփակի: Բայց հիմա ո՞վ ուրիշի տավարը կպահի... կետի ժամանակ պոչը ցցի, շամբուտի մեջ տա, կորչի կամ գողանան: Դե եկ, տակից դուրս եկ: Չէ, պահող կճարվի, փողն ո՞ւմ տաս՝ չպահի: Եվ ամեն վիճակից ելնող Կիման գտավ էդ վարձու պահողին, անասունը պահ տվեց նրա խոճին:

Երկինքն աչք էր բացում թե չէ, Կիման խոտհարք էր շտապում, արեւի ծիկրակին խոտի խորումներն է պրանում, որ արեւ ու բամուն տա, չորանա, շուտ տուն գցի՝ պրծնի: Խոտի նամահոտը տալիս էր

բթին, դեմքը թթվում էր տհաճ մազից. Էս ի՞նչ դասավ է՛... Ափսո՛ւ: Նայում էր երկինքին, արեւին՝ կկոցած աչքերով, ի՞նչ արիր՝ արիր, անտեր, բամակ էլ բաց չանես... Խոսքը բերեց, տուն գցեց: Տափաւիրոջն ինչ էր մնացել՝ չմնացա: Բողոք չկար, ուրեմն՝ հաշիվը մաքուր էր... Երեկոյան, պիջակն ուտելը գցած, ճիպտան ափերի մեջ ու ձեռքերը՝ բամակին, դուրս եկավ տավարին ընդառաջ: Ասացի.

-Խոտից պրծա՛ր...

-Հա, ախայեր, պրծա, ամա ջանս էլ հետը պրծավ: Կիման իր ջանի դադիրն իմացողը չի, իր հոգին էլ կհանի, էշի հոգին էլ, միայն թե ապուռ ունենա, բոլ-բոլ տա կովերին, երբ իրիկունը հանդից գան, տանի գու, կասյի, ձեռաց սարքած եռոտանին դնի տակն ու վրան նստի՝ մեջքին ցավ չտա, ծնկներն էլ հանգիստ մնան, կթի հա կթի, կթելիս էլ ժպտա իր մտածածի վրա, որով Ֆելիսին հանդիպելիս ծնկի բերի.

-Ֆելիս, կաթն ինչի՞ց է եղբան սպիտակ...

Ֆելիսը պատասխան չունենա՛ր... Ֆելիսը Ֆելիս չէր լինի, թե չկռահեր ու տեղն տեղը չմեխեր.

-Էդ նրանից է, որ թրիքը շատ է սե...

-Օձի խայթ ունես... Էն որ Մալիբեկլուի բարավներում կա, Կիման կըլթ-կըլթ կծի՞մաղի, գլուխն օրորելով կգնա, էշն ստաջին, պարանն ու կացինը փալանի վրա հանգույց արած: Ֆելիսը հետեից կկանչի.

-Էդ հիմա էլ ո՞ր ես բշում...

Գնում եմ փայտի, որ... ձնանը մրսես՝ մի խոտն էլ բեզ տամ...

Կիման հիմա էլ ձնան փայտի հոգս ու տենդի մեջ է, դժվար սպրուտախ իր ծիրն է բաշում չգիտես ում կտուրը գցած խոսք ու կատակի միջոցով: Օրական երկու էշաբեռ էր բերում, թափում ուլ իմանա ում շիլ աչքի մեջ, որ իր տունդարձին նոր էր ճարմ, ճարուկալսած կուպերի տակից պլշում. Բերում եմ, բա ի՞նչ, դու մինչեւ կեսօր ճարի ու պլշիր բերածիս վրա, սատս բո հոր մեջքով եմ բերում: Բան ու գործդ ե՛ս եմ, թե՛ ուրիշ հոգս չունես: Փայտը դարսելիս՝ մեկը մտածկուտ պահում է ձեռքում, կարծես չիմանալով՝ էդ էլ դարսի՛, թե՛ խոթի էդ շիլ աչքի բիբի մեջ...

-Գննե՛ք բեզ մի բիջ խնայիր... մազդ երեսիդ չորացել է, -սրտնեղում է կինը:

-Ես...ինձ՝ ի՞նչ, բե՛զ պիտի խնայեմ, որ ձեռքից ընկնեմ՝ մի գթալ ջոր տաս, դառնում է վերջինիս՝ նստր բեխերից մի պատաս ժպիտ կախելով:

Հորթերի համար խոտ չունեի: Ամեն օր մի կռնատակ բերում էի, չէր հերիքում. շալակով բերած խոտով հորթ պահե՛լ կլինի: Դիմեցի Կիմային մի խեղճ ու կրակ խնայանքով.

-Էշը տուր, զնամ մի քիչ խոտի:
 -Էշը... Ի՞նչ էշ, հա՛, կռագու: Էլ էշ չստես, իմը՝ կռագ է: Չսպրոպ կա անեմ, եկ տար...
 Խոտը բերելիս Ֆելիսը հանդիպեց ինձ ու թե.
 -Տեսնես, որ ես էլ խնդրեմ, Կիման էշը մի օրով էլ ինձ չի՞ տա...
 -Կոսա, -սասմ եմ ու կծում,- խե չի տա, հոյի հո չի: Ամա դու էշի «դադիրն» իմացողը չես, տանես Էնֆան բարձես, որ...
 -Որ ինչ...
 -Ինչ իմանամ. Ամանար է Էլի, Էնպես անենք, որ վաղվա համար երեսասուեղ ունենանք...
 -Փառք Կիմային, ո՛չ փառք քե՛զ...արա, լավ է Էշատերը դու չես, ինքն էլ ինձ կծեց ու զնաց:
 Բեռը թափեցի, էշը տարա Կիմային: Երբ դարպասից ներս մտա՝ նստած էր բակի թթենու տակ դրված նստարանին, ձեռքը դրած փորին, անտրամադիր, դեմքը՝ թեթևակի գունատ: Մոտեցա:
 -Ի՞նչ է եղել, -հարցրի.
 -Ինչ սսեմ, ախպեր, այդպես էր դիմում ինձ, - Էս վիրահատած տեղս ցավում է, վախենամ, թե գոռի տակ եմ գցել...
 Ես չգիտեի, կարծում էի՝ պի՛նդ ոսկոր է, ոչինչ քար չի անի: Ինքն էլ արած-թողածով, բանուգործով էդ տպավորությունն էր թողնում: Ով կմտածեր...
 -Գնա բժշկի, -ասացի, - թող մի սառուղեն:
 -Չէ՛, ծոր տվեց, կզնամ Երեանն՝ Էն պրոֆեսորի մոտ, որ ինձ վիրահատել էր...
 Մարդուն ճանաչելու համար՝ պիտի նրա շեմից ներս մտնես: Հարեանն ենք, քայց առաջին անգամ է: Լավ տուն ու տեղ ունի: Ամեն ինչ՝ տեղը-տեղին, սաք-սաք, խոտը՝ ծածկի տակ, մի սմտում մթերած փայտը՝ երեկվանից մնացածի հետ, որ երկու ձմեռ էլ կիերիքի, դարսած լայն ու երկար պատշգամբի տակ, պոմերի արանքում, մինչև առաստաղ: Մայրում ես ու հիանում. ախտապաղ կզա, թե ձեռ տաս ու թերատես՝ ինչքան էլ երկար ու խիստ լինի ձմեռը:
 Գնաց Երեանն, գրեթե մի ամիս մնաց ու վերադարձավ: Եկատվում էր, որ պրոֆեսորը հոգ էր տարել, անելիքն արել էր: Ինքն էլ, երեկի, ձեռքը բարի տակ չէր պահել... Եկավ, տեսավ տավարը լղարել էր. փողը տվել էր, անասունը՝ թողել վարձով պահողի խիղճ ու խղճմտանքին: Արդյունքը՝ խնդրեմ: Էֆսին անմիջապես անասունը ետ բաշեց, բերավ, նորից խառնեց նախիրին ու Էդ օրն էլ նախիրը տարավ հանդ: Ասացինք.
 -Մենք կտանենք, դու դեռ տանը մի քանի օր մնա, հետո...
 -Չէ՛, կողին ընկամ, -խառնում եմ ու պարտավոր եմ բշել...
 Մախիրը երկու օր տարավ արոտի, երկու կով ունի, երկու օր էլ

տարավ՝ կարգ է: Ֆելիսի հերթն է, հետո՝ իմ: Ինքն անասունի ու ձնանն հոգսերը հոգացել էր, հիմա կարող է հանգիստ մնալ: Ես ու Ֆելիսը ոչ խոտ ունենք, ոչ փայտ: Մեր օրն ի՞նչ է լինելու՝ չգիտենք, սառած՝ չգիտենք: Բայց մեկ է՝ մի բան պիտի անենք: Կիման անհանգստանում էր, ասես վիզը մեր հոգսի տակ պիտի դնեիր:
 -Ի՞նչ եք լովել: Էսօր-Էգուց ծրրկրթն ընկնելու է:
 -Կիմա, -ես ու Ֆելիսը՝ միասին, ասես նախօրոք պայմանավորվել էինք,-էշը տաս՝ զնանք փայտի:
 Մեկ ինձ էր նայում, մեկ՝ Ֆելիսին, սկզբում՝ սպառած, սպա՛ աչքերում հայտնվեց խորամանկ ժպիտը, տնտղեց մեզ ինչպես միա-միաների ու հանկարծ բարձր ծիծաղեց.
 -Է՛, ախպերներ՛րս, կռագ-էշս ծախել եմ...
 Ապշել-նայում էինք, սառած-մնացած, խոսք չունեինք սսելու... հանկարծ վրա բերեց.
 -Ի՞նչ եք մաթ մնացել... ես հո ձեր խելքին չեմ. էշը պահեմ՝ ձնանն ի՞նչ անեմ, անտեղի խո՛տ տամ... Գարնանը նորը կառնեմ, Էս ժամանակ՝ խնդրեմ:
 -Ասաց ու զնաց՝ թողնելով մեզ մեր դժվար սպրոտսի անձիր ծիրի մեջ...

Քարափ

Ֆելիսին սասում եմ՝ մի բան պատմեմ, չծիծաղես ես, դեռ խոսքս չսկսած՝ ծիծաղում է ու... սառը ջուր մաղում վրաս: Մեկնվել է բարափի գլխի կանաչ գորգի վրա, փափիկ ու թխավուն թաթերն առել գլխատակ, հայացքը հառել լուրթ ու անեզր երկնքին՝ ծիծաղում է ու ծիծաղը վերջ չունի: Թե ինչի վրա՝ չես հասկանում: Բերանից ծիծաղը թափվում է բլրթ-բլրթոցով, ինչպես օրվա վերջին տաբացած տափաշշի ջուրը՝ բարափի բացատում սրելից շիկացած շիկաբարի վրա: Վերջին բլրթոցին դիմում է ինձ՝ առանց իմ կողմը նայելու.
 -Դե պատմիր...
 -Բայց ինչի՞ վրա էիր ծիծաղում, -հարցնում եմ, հայացքս չկարելով Մախրեկլուի ավերակներից, որ բարափի գլխից երեսում են ինչպես սփիղ մեջ:
 -Ասե՛մ ինչի վրա, -ժառու եղավ տեղից ու շտկվեց փափուկ նստակին, -քո երեկվա հորինած թուրքերեն բառակի.
 Մախրապյու ինդի յոխորոյ,
 Գաչկրնկար յաման չոխորոյ,
 Բիր թաիր էլա, Հեյդար պթա,
 Ալիսիզդան գեղիր վաթան...
 -Բառյակն ավարտեց, կրկին բռնկվեց մի անգուսպ ծիծաղով,

եւո ընկրկեց ու երեխայի պես թափազվեց կանաչի վրա. վայ ամա՛ն, վա՛յ ամա՛ն...

Վերջապես հանգստացավ, ուղղվեց տեղում ու, դեռ ծիծաղի կայծերը ցոլացող աչքերում, հայացքը սպասողական հասեց վրաս: Սայում էր այնպես, ինչպես երեկ, երբ նույն ֆարափի վրա, մահակն առել էի կրծքիս՝ իբրև սագ, ու ինձ թորֆ աշուղի տեղ դրած՝ էլ քայլակն էի հորինում, աշուղական հանգով էլ երգում, իսկ ինքն էլ ծիծաղում էր փորից բռնած ու նրա ծիծաղից թնդում էր ֆարափը:

-Այնուամենայնիվ՝ Էն «բանը» պատմելու ե՛ս, թե՛ չէ: Գու միշտ էլ պատմելու մի հետաքրքիր բան ես ունենեմ...

-Մտքովս երբեք չէր անցնի, խոսքս կտուրն եմ գցում, թե ես ու դու էս ֆարափում անասուն կարածացնենք...

Ճեղիֆը դրան չէր սպասում, գիտեմ, կռահում եմ ինձ հառած իր սպասողական հայացքից: Բայց սպասելիքը մաքի մի անկյունում պինդ մեխելով, որ չնոռանա, հաստատ որոշեց, թե դրան դեռ կվերադառնա՝ սասց:

-Իմ մտքով էլ չէր անցնի... Սրանք խելք չունեին, նկատի ուներ Մալիբեկյուի թորֆերին, խելքն իր հերթին, նամուս էլ չունեին, ստեխն՝ էս հայերից ի՞նչ ենք ուզում, ի՞նչ ենք տվել, որ չենք կարողանում առնել... Էն է՛ ձեններս կարենք, վեր ընկնենք ու սպրենք:

-Լավ է՛ ձենները չկորեցին...

-Ի՞նչ ես ուզում ասել...

-Հեչ: Բացատրելու բան չի... Եվ մինչ այդ «անբացատրելին» ինձնից կկորզեր, հայացքն ընկավ ֆարափից ներքե, խոտով լըված բացատին, ուր նախիրն էր արածում՝ գրեթե գոռաց:

-Կե՛տը... կե՛տը... կետը բռնել է տավարին:

Ճեղիֆը խուճապի մեջ ընկավ, վեր ցատկեց, գրեթե պոկվելով՝ մահակն առավ, գլորվեց նեղ կածանով: Նախիրը կետեց՝ Ճեղիֆը հետևից: Քարափի գլխին մնացի մեն-մենակ, այդպես էլ կմնամ մինչեւ կեսօրանց, մինչեւ տավարը կենտուկաթուկ տալով, կգա դեպի ֆարափ: Քարափի բարձունքից Մալիբեկյուի ավերակներում հայացքով փնտրում եմ գյուղական ակունքի ավերակը. Ահա այն, դպրոցի նույնպես ավերակված շենքից մի հարյուր մետրի վրա: Այնտեղ է տեղի ունեցել «Էն բանը», ինչի մասին պիտի պատմեի Ճեղիֆին...

... Բաբվից մի խումբ գրողներ էին եկել Ստեփանակերտ: Գետորգը ձեռ ու ոտ էր ընկել. Ի՞նչ աներ, պաշտոնի բերումով (գրողների բաժանմունքի ֆարառուղար էր) պիտի հյուրանոցում նրանց տեղավորեր, նախաճաշ, ճաշ ու ընթրիք տար, հանդիպում կազմակերպեր ընթերցողների հետ: Մտածում էր՝ ու՛ր տաներ: Հարմար

գտավ Մարտակերտը: Բայց հյուրերը թրֆական բողարկված ֆաղափարությամբ հրաժարվեցին. Իբր հայ ընթերցողին ի՞նչ ունեն ստելու... իրենց չգիտեն, չեն ընթերցել, լավ կլիներ՝ մի աղբրեջանական գուղ: Կանգ առան Մալիբեկյուի վրա, ակնարկելով՝ տեղացի մի երկու գրողների հետ, ինտերնացիոնալ կազմով գնան: Գնացին: Ակումբը լեփ-լեցուն էր: Հյուրերը հերթով ելույթ էին ունենում, երկար ու բարակ խոսում դեսից-դենից, վերջում՝ մի երկու բանաստեղծություն կարդում: Գետորգը թորֆերեն լավ գիտեր՝ լսում էր նրանց ու հետզհետե մռայլվում, ինչ-որ բանից դժգոհ ու խոցված՝ ներսում եռեփ էր գալիս: Ես ու Գուրգենը քիչ բան էինք հասկանում ու բնագրով էինք միայն կռահում, թե դրանց ելույթներից ինչ հոտ էր փչում... Սրանք իրենց ազգայնական հեռագնա արամապրություններն էին արտահայտում՝ երբեմն կատակներով, բանի որ մեր ներկայությունն ինչ-որ կերպ զսպում էր նրանց. «Մենք եկել ենք մեր սունը, մեր հողը, որի վրա «այթաղան-բաբաղան» մեր նախնիներն են սպրել, ամփոփված են մեր պապերի սուրբ գերեզմանները: Եկանք, սեռանք, որ լավ եք սպրում, գյուղը շենացել է, փողոցներում խլրում են երեխաները, այնքան շատ, ես դեռ էլի պիտի շատանան, գյուղն էլ այնքան պիտի ծավալվի, որ գնա խառնվի մեր երբայր հայերի Ստեփանակերտի հետ: Մեր Շուշին էլ վերելից պիտի ծավալվի, իջնի ու խառնվի... Մի խոսքով՝ բոլորս պիտի խառնվենք. ի՞նչ հայ, ի՞նչ ռուս, ի՞նչ... Դակլիճը հասկանում էր ու որոտընդոտ ծափահարում, աղեկոծված ելում էր տեղից...

Հանդիպումից հետո ճաշկերույթ էր, ճոխ սեղան: Ի՞նչ բաժակաճաշեր էին հնչում: Կերան, խմեցին՝ խժեղով այնքան, մինչեւ կատարները տաբացրին, սպա սկսեցին համբույրներ տեղալ իրար, երգել, տեղացի երեւելիները ձայնակցում էին փոխնիփոխ, իրար տալով ու իրարից առնելով, բայց հակառակ երգի սուսարեզում իրենց ազգային ընդունակության՝ երգում էին չափազանց անշնորհ: Մտածում էի՝ այ թե Գետորգը մի դրանց տեղը դներ իր երգերով ու հրաշալի ձայնով ես... հուրախություն մեզ՝ սկսեց, Էն էլ ո՞նց սկզբում՝ Սայաթ-Նովայից, հետո անցավ իրենց աշուղ Ալեսկերին: Շշեցրեց: Մինչ այդ՝ մեզ համարյա մոռացել էին, ո՞վ էր սեղանի շուրջ մեր տեղն իմացողը: Կենացներ էր, որ թափվում էին Գետորգի գլխին, մանավանդ՝ Ալեսկերից այնպես էր երգում, ինչպես ոչ ոք իրենցից, նույնիսկ Բաբվի... Քաղցր-մեղր կենացներ էին, շինծու-լպրծուն, թոյնով էլ համեմված: Գետորգն ավարտեց մեկ-գրո հաշվով, Գուրգենը սկսեց: Բայց սա երգում էր նրանց ծամանակակից աշուղների նշնիմներից՝ բնագրերին խառնելով իր սեփականը: Այդ խումբար ոչխարները, գինարբուժի մեջ գլխի չէին ընկնում, տեբստից բան չէին հասկանում, միայն հնայվում էին

հրաշալի ձայնով, մի մեղեդուց-մյուսին նուրբ անցումներով: Ամեն մի երգ Գուրգենն ավարտում էր հետեյալ կարկաստանով.

*Տեսնե՛ղ եյիս, բեսուն թոբյում,
Տեսնե՛ղ եյիս, բեսուն թոբյում,
Այ հույ-հույ՛, վա՛յ հույ-հույ՛...*

Հյուրերից մեկը, որ մեր լեզվից մի բանի բառ գիտեր, թուրքա-կան առողջամտությամբ հայերեն ասաց.

-Գուրգեն մուսլիմ, սաղ գլխի ընկա, սմա էդ Հույ-հույից բան չհասկացա,-լռեց, սպասում էր՝ սղո մի ժպիտ շուրթերից կախ:

-Ոչինչ, Սաբիր, էդ հույ-հույն էլ հետո կհասկանաս,-կարճ կապեց Գուրգենն ու նշանակալից նայեց իմ կողմը, դրանով էլ Սաբիրի ուշադրությունը հրավիրեց վրաս ու սա մոլուսց.

-Իսկ դուք չե՞ք երգում, ինձ էր հարցնում, ու Գետրգը՝ ելի վարպետ, թե.

-Ասոված հեռու տանի պա երգածից... Ինքն իր մեջ է երգում, ինչպես զիշերվա մեջ իջնող լալ կարկուտ...

«Հյուրերը» գնացին: Եկել էին մեր կրծքին նստել՝ միրու՛ք էին բանդում... Տարիներ են անցել և... հիմա բարսափի գլխից Մալիբեկյանի ավերակներին նայելիս, մտածում եմ՝ հայ հարսայ, հա՛յ, հայ հարսայ: Ինչ էին ցանում, ինչ հնձեցին...

Արևը թեփվեց դեպի կեսօրանց, ողողեց բարսափը ճակատամա-սի կողմից, որ ստես սալաշնորի վարպետի շարած պատ է՝ դուրս պրծնող ու ցից-ցից ֆադերով, կախված անդունդի վրա այնպես, որ թվում է՝ ահա կայրկվեն ու կթափվեն ձորը: Ներքե, բացատի աշա-կողմյան թավուսում մի գով զեփյուռ խաղաց, ապա դուրս եկավ, ու նրա շնչից ծեկահաս խոտն արտի նման թեփվեց, մեղմ ու անշշուկ ալիքվեց: Ֆելիքը նախիրը բոլուկ արած բերում էր ու, երբ տավարն արդեն խրվել էր բացատի լաված խոտի մեջ, կետից հե-տո սկսել ազահությամբ ու փնչոցով արածել՝ մահակը ետ տարավ ու բերեց Վաղիմի նարնջագույն ու պուլը կուճուր կովի հետույքին: Կովը, որ միշտ առաջինն էր կեսով ընկնում, ցավից մյուլ եկավ ու խրկվեց բոլուկի մեջ, իսկ ինքը կռացավ, մի բուռ խոտ ճեպեց, մեկ-նեց իր կարմիրին, իբր անասունը դրան էր սպասում: Կարմիրն ուշ-ադրություն չդարձրեց ու տերը, խոտի փունջը դեն գցելով՝ բռնեց դիրքը՝ թաց արահետի տուտը: Եկավ, նստեց մոտս՝ կանաչի վրա, հոգնած, քրտնաթոր, ձեռքերը՝ ծնկներից կախ, նայեց ներքե, դեպի նախիրը՝ վա՛յ արեց, ու թե բարսափը լեզու ունենար, կստեր՝ ջա՛ն:

-Էն կովին ինչո՞ւ խփեցիր,-հարցնում եմ ու ձեռքս դնում ուսին:

-Հաս էլ լավ արի: Տիրոջ խաղաղթին է՝ խլրտու...

-Ի միջի սայոց,- շրջվեց դեպի ինձ,-բե՞զ չի՞ թվում, թե սմեն մի անասունի մեջ իր տիրոջից մի բան կա...

-Չարմանալի հայտնություն...

-Չէ՛, լուրջ, մի՛ ծիծաղիր, այ, օրինակ, Վաղիմի կովն իր նման սարսաղ է. ձանձ է տրզում, կարծում է կես է, ազին ցցում է, խնդ-կի տալիս ու հետեից ֆաշում ամբողջ նախիրը: Կիմայի կովն էլ իր նման թեթեւան է, միշտ ֆայում է նախրի առջեից, կլա մի ֆիչ էլ նրանից կարված, ստես շտասարում է՝ փայտի է գնում կամ խոտի: Արու կովը փրնթ իր տերն է՝ կողանց ֆայող: Պոզին խվում ես, որ նախրի հետ զնա՛ւ եզր է ձգում, ֆիչ է մնում կամուրջն անցնելիս՝ ընկնի գետն ու բե՞զ խաղջի տակ գցի...

-Բա բռնը, է՛, բռնը,-խայթում եմ:

-Իմն էլ ինչ ստեմ, խի՞՜ չեմ սաի. Իմն էլ իմ կապրիզներն ունի...

Հա, հիմա դառնամ բո՛ Նաղաշին: Չէ, Նաղաշը բե՞զ չի ֆաշել... , բա Ֆելիքը տակ կմա՛ւ, Նաղաշը խելո՞ք է, հանգիստ ու խոնարհ, մի հանդարտ ծով, մի անգամ Նաղաշ ես ասում, էնպես է նայում, ստես հայացքը խելով շաղախած, մի լեզու է մնում, որ հետո խոսի...

-Էդ հո ես եմ ու ես,-կատակին եմ տալիս:

-Գու՛, նայում է խեթ, շուրթերը ետ են գնում, աչքերը նետեր են արձակում,-արա, գիտե՛ս բո՛ մեջ ինչեր կան... կամ դու, կամ ես ֆարսիք. մինչեւ բեզից մի կայծքար եմ պոկում, հոգիս բողազս է հանում... Հա, լավ հիշեցի, բա էն բանի մասին ե՛րբ ես պատմելու:

-Էն բանի մասին էլ վաղը, Ֆելիքս, վաղը...,- ասում եմ ու վեր կե-նում, ուսապարկն ու մահակը առած՝ իջնում բարսափից, ինքն էլ իմ հետեից, լբելով իրիկնամուտ գնացող արեւի ոսկեգույն ցուլերի մեջ ինքն իր հետ մտորող բարսափը...

Ֆելիքը, դժվար սարուստի Կիման ու... ես

Անահանգիստ զիշեր է, բունը լբել է ինձ ու նետել տազնապների գիրկը: Այդպես է լինում միշտ, երբ նախիրն արուտի տանելու իմ հերթն է գալիս: Առավոտյան տավարը պիտի բշեմ, բայց դեպի ու՛ր ես ո՛ր կողմի վրա, ինքս էլ չգիտեմ: Մալիբեկյանի բարսափները նա-խիրն այնպես է հնձել, կարծես այնտեղ իսկի խոտ էլ չի եղել: Մտածեցի՝ նախիրը կանցկացնեմ բարսափներից այն կողմ, դեպի Փրմբու տարածքները: Երեկ Կիման էլ ասաց.

-Միայն այնտեղ, եթե հանդապահ ժորիկի հետ կարողանաս լեզու գտնել,-լռեց, մի պահ մտածեց ու թե,- հետո կես լիսը վերց-րու... սմա խոտ եմ ասում է՛, ըիը, մինչեւ էտտեղ,-ձեռքով ցույց տվեց ծնկները:

Գետը չհասած՝ փողբերը չեն բշտում, մտածեցի, փակեցի աչ-քերս՝ փորձելով բնել: Հնչեց առաջին աբորականչը: Ուրեմն՝ զիշեր-վա ժամը ուղիղ երեք անց կես է: Հաստատ: Եթե մինչեւ յոթը գտնե

մի երկու ժամ չհնձեմ՝ վայ իմ օրին: Սակայն բունն այդտեղ է մոտ չի գալիս աչքիս: Ըստ տավարն ո՛վ վզիս կապեց, ո՛վ: Ախր ինձնից ի՛նչ անասուն պահող: Ըն գլխից պետք է պահամ լինեի, սովորեի, ընտելանայի... Վաթսուն տարեկանում վարսավիր կամ մսագործ չե՛ն դառնում:

...Հանույանից բռնագաղթվածները, տուն ու տեղ, եղած-չեղած թողած, հասցրին միայն մի-մի ուսապարկ ուտելիք վերցնել, մեկել՝ մի-մի ճիպոտ՝ անասունը մինչև Ստեփանակերտ բշկու համար: Ճանապարհին տավարը գնալով նվաղում էր, ջրի գնով մեկ-մեկ ծախում էին... Ի՛նչ անեին: Մերոնք Խնձրխտանի տակ ջրու կով առան, երեքը՝ հորթերով, մեկը՝ անհորթ: ճանապարհին սատկել էր: Եվ ընդամենը ի՛նչ տվինք, ութ հազար ռուբլի՝ հին փողով: Հարեաններն շշմել էին, սրանք ինչի՞ վրա են էս գույումին, էս փախափախին... Մեր հոգում ե՛ս՝ տագնապ կար, ե՛ս ահ, ե՛ս... հոյս, թե գուցե ամեն ինչ կարգի կընկնի: Գյուղից մերոնք՝ բոլոր ու խնամոնք, իրենց հարս ու թոռներով, հրետակոծությունից փախան ու եկան մեր տուն: Գարձանք երեսուն շունչ էս հիմա մտածում եմ, թե ո՛նց կլինեիր մեր ճարը, եթե էդ կթանը չունենայինք...

...Երբ առաջին անգամ նախիրը հանդ էի բշում, հագիս մի հին շավվար կար, նույնքան էլ հեռանալ մի գույգ կոշիկ, բայց փողկապով էի ու գլխիս էլ լայնեզր գլխարկ, ուսապարկիս մեջ՝ մի ֆիշ ուտելիք ու մի տափաշիչ ջուր: Ֆելիքսն ու Կիման կծու կիսածախտով նայեցին ինձ: Հետո Ֆելիքսը մոտեցավ, ձեռքը խոթեց աջ գրպանս, կիսահանեց գիրքը, կիսաթեփված կարդաց՝ Բլոկ, էս խոթեց, դարձավ ձախիս, կիսաչափ հանեց մի ուրիշը՝ Պաստեռնակ ու բարձր ծիծաղեց:

-Հա՛, հա՛, հա... Արա, էս մեծամեծերին ո՛նց էս տանելու հետո, տավարն էլ առաջդ արած:

-Արա, Ֆելիքս, հյա մի գաղստուկին նայիր, մեջ մտավ Կիման, էդ էժի սրճն ինչի՞ համար է...

-Էս էլ նրա համար, տակ չմնացի, որ ձեզնից որի տավարը կես անի, զգեմ վզով ու մի բուխից պինդ կապեմ, չկորչի...

-Իրիկունն էլ տված բերե՛ս, հա՛, վրա տվեց Ֆելիքսը:

-Էդ արդեն կարեառ չի, սասացի, միայն թե չկորչի ու խարջի տակ գցի...

-Է՛, հե՛՛, քեզնից տավարած չի ելնի, եզրափակեց Կիման ու Ֆելիքսի հետ, գլուխներն օրորելով, գնացին տուն, իսկ էս նախիրը տարա հանդ:

Հունիսյան օրն արեստ էր ու տափ: Մայիքեկյուռի քարափներն արեւի հրից արդեն շիկանում էին: Քարաձեղեփերում ուրցի զգլխիչ բոլոր կար, քարածերայերից կախված վայրի ծիրանի կաթուկ՝

մանրահաստ, դեղին ու պեպեմտ: Նախիրն արել էի կանաչախիտ քացառը, նստել քարափի գլխի մի ցից քարի, որ անասունն աչքի առաջ ունենամ, եւ Պաստեռնակ ու Բլոկ էի կարդում: Արեւի տապից, թե քարափներում բռնկված ուրցի բուրմունքից՝ նինջը վրա տվեց ու տանում էր նիրվանայի հիասթանչ աշխարհը, երբ ինչ-որ տագնապահար կանչից վեր թռա, անմիջապես աչք անեցի քացառներին՝ տավար չկար:

-Այ տավարա՛ծ, հե՛՛յ, տավարը մտել է արտը՝... ա՛յ էս բու...

Հայեղյանի շարունակությունը դառնությամբ կուլ տալով, ուսապարկն առած, մահակը բարձր տալով, վագեցի կանչի վրա: Ու երբ տեղ հասա, դիմացս կանգնած էր իմ վաղեմի ծանոթներից մեկը՝ Ժորիկը, Պարմետաբազի գործվածքային արտադրության նախկինում անուն հանած ենթավարպետը, որ հիմա հանդապահ է, նայեց մի տեսակ մեղավոր ու կոտոր ընկած: Ասես հանցանքն ինքն էր գործել:

-Էդ դու ե՛ս... դե լավ, ինչ եղել է, եղել է, սասաց, շուռ եկավ, գնաց նախիրը դուրս արեց արտից:

Երեկոյան, սունդարձին անասնատերերը եկան նախիրն ընդունալ: Ֆելիքսն ու Կիման, իբրև փորձառու աչքով, անտղեցին նախիրը, մի անթափուց գոհունակությամբ նայեցին իրար, աչքով արին, որ կնշանակեր՝ ոչինչ, տավարն արածել է... որտեղի՞ց հմանային, թե նախիրն ի՛նչ օյն է դրել արտի գլխին: Կիման, Ֆելիքսի հետ ուրբ էս զցեց, սպասելով, որ «օտարները» գնան, դարձավ ինձ:

-Տնաշեն, մի կռնատակ էլ խոս բերեիր հորթերի համար...

-Խոսն ի՛նչ է անում, մեջ ընկավ Ֆելիքսը, երեսի մի կռնատակ ուսանավոր է բերել...

-Դե, որ եղպես է, հեզնեց Կիման՝ ոչ այն է Ֆելիքսին, ոչ այն է՝ ինձ, թող տանի տա՛ հորթերն ուտեն...

...Այդ օրից անցել է ոչ ավելի, քան երեք տարի՝ դժվար ապրուստի մեր անձիր ծիրի մեջ... Եվ հիմա, երբ վերհիշում եմ, թե ինչեր անցան մեր գլխով՝ սիրտս ակտանայից կույ՝ է գալիս, ինչպես Մալիքեկյուռի քարափներում նախիրը պահելու ժամանակ, երբ երկնքում հանկարծ հայտնվում էր թշնամու ահապիտու ռմբակոծիչը, ճերմակ հետագիծ թողնելով՝ շեղակի իջնում բաղաբի վրա, ռմբեր թափում ով իմանա՛ ո՞ր թաղում, անմիջապես ճողուրեկով անհետանում լեռներից անդին: Մանավանդ ահավոր էին գիշերային հրետակոծությունները: Սկուռի խոնավ անկյունում կույ եկած (իբր մեր տեղն ապահով էր) մտածում էի՝ ո՞ր ընկավ արկը: Եվ այդ ամենից հետո, երբ մտնում էի գոմ ու տեսնում, թե Նաղաշը, Նարիճն ու Խորման ինչպես են նայում դռան կողմը՝ սկզբում թախծոտ, ապա խելացի մի հայացքով, ստում էի՝ փառք աստծո...

... Անհանգիստ գիշեր է: Աստված հեռու տանի դեկտեմբերյան այս գիշերից, որ փոխանակ փակի աչքերդ, բուն բերի, թեկուզ մի քիչ մոռացության տա ամեն ինչ, հոգիդ թեթեալանա, ընդհակառակը՝ հոգսերի մի գորաբանակով գրոհում է վրադ, խռովում հոգիդ, տանջալից անբնության մասնում: Երեկ էլ Կիման՝ երրորդ անգամ երեսարան էր տալիս ինձ ու Ֆելիսիան:

-Էդ ինչի՞ վրա եք, չեմ հասկանում... հունիս չի, հուլիս չի ես ոչ էլ՝ օգոստոս: Դեկտեմբեր է... փայտ չունեմ, խոտ չունեմ, մեկ էլ տեսա՞ք՝ բնից արթնացա՞ք ես հայտնվեցի՞ք բուք ու բորանի բերանում...

-Է՛, լավ է՛, նեղսրտեց Ֆելիսյա, դու էլ հոգիներս հանեցիր... Մի վախենա՛ դուռդ չենք գալու...

-Արա, դրա համար չեմ ասում, է՛, անկեղծ նեղացավ Կիման, դուռս ձեզ փեշքեշ... Կրթված եք, գրագետ, ասա՛ լուրջ մարդիկ չե՛ք, լու՛րջ...

Հետ դառնամ, ասեմ՝ Կիման սխալ է, չէ, ճիշտ է, հազար անգամ ճիշտ, ի՞նչ իրավունք ունենք վիրավորվելու... Անատունի ի՞նչ հոգն է, թե մեքենա չկա, սայլարկա չի ճարվում, ճարածն էլ՝ կրակի գին ու մենք էլ ես զգած փող չունենք, որ խոտ սռնենք ու բերենք... Ծերր-ծերին հազիվ ենք հասցնում: Հետո՞ ի՞նչ, ձյունը դնի՞ մտորում բան պիտի լինի, որ էդ անկեզուն քառաջի ու մղկա...

Ֆելիսյան ինձ ասում է... բայց կարծես ոչ թե ինձ, այլ ինքն իրեն կամ հենց այնպես մի անհայտ մեկի:

-Ա՛յ թե մինչեւ հունվար էսպես տա՞ք ու արեւ անի, տավարը հանդում յուր տանենք, մինչեւ տեսնենք՝ ինչ ենք անում:

Եվ հիմա, ես խոր գիշերվա մեջ, որ աչքս խուփ չի գալիս՝ ինքս ինձ տալիս եմ ամնում, վիճում, կռվում ինքս ինձ ու Ֆելիսյան հետ: Բա որ տա՞ք ու արեւոտ չեղա՞վ... Մի ամիս ես ու Ֆելիսյա նախիրն արոտի էինք տանում միասին, բաց էինք թողնում բարափներում լքված խոտի մեջ, նստում թեղու շվաբում ես, իր ինտելեկտն ինձ ցուցադրելու նպատակով, Ֆելիսյա «Շահնամե» էր արտասանում, անկեղծ սասած՝ շմեցնում, հիացնում ինձ: Հետո կեսօրին ուսապարկերից հանում էինք տնից բերած ուտելիքն ու օղու շիշը, սուփրա զգում, ուտում-խամում, հռհռում, ասես բռունգոտում ու մեր այդ հռհռոցի վրա Կարմիր կովը նայում էր մեզ մի այնպիսի հայացքով, ասես ուզում էր հարցնել:

-Էդ ինչի՞ վրա եք...

Դե հիմա եկ ու պատասխան տուր... Քոլերն ընկած ձեռքեկ էինք բաղում, խնջուղ էինք բանդում՝ քիհիրը պորտներին հարելով, մանուշակ էինք բաղում ու նարգիզ, փնջում, իրիկունը բերում, տալիս երեխաներին, որ ուրախանան, հրճվեն, մենք էլ իրենց հետ ինչպես երեխա: Չէ, մեզ նմաններին տավարած չեն ասի, կասեն՝

արանք բանաստեղծներ են... Հլա որ տեսնեին անից նախիրն ինչպես ենք դալ ու դուրբող արած պահում, որ հանկարծ մեկն ու մեկը չընկվի, աչք գողանա, հեռանա ու անհետանա: Օրական հարյուր անգամ համրում էինք ու հարյուր անգամ էլ սխալվում՝ էս ինչի՞՞ քանակը ճիշտ դուրս եկավ, էս ո՞րն է, որ չկա: Նորից ենք հաշվում ու նորից սխալվում այնքան, մինչեւ բարափի գլխին հանկարծակի հայտնված Բարսեղի ծիծաղն է հնչում ու ծիծաղի միջից էլ.

-Արա, քիչ հաշվե՞ք է՛, քի՛չ, բանակը տեղն է, անհոգ եղե՞ք, նախիրն ի՞նչ եք դալ արել, ցրե՛ք, թողե՛ք էդ անկեզուններն արածեն՝ մե՛ղք են...

Նայում էինք իրար՝ ես ու Ֆելիսյա ու երեւի նույն բանն էինք մտածում, թե ինչու՞ Բարսեղն էլ չի ասում՝ վարժաբեղներ եք է՛, վարժաբեղներ...

Վերջին ագրոականչ: Կուպերս արդեն իրենք իրենց փակվում են, երեւի բնեւ ու էդ մաքի վրա էլ գնացի... Կիսաբուն էի, թե կիսարթուն, չիմացա, հավանաբար, երազի մեջ հնչեց ինչ-որ տազնապախով կանչ:

-Ա՛յ տավարած, հե՛յ, տավարը մտել է արար՝...

Վեր թռա, լուսամուտից դուրս նայեցի... Չյուն է իջնում. բախտս բերեց՝ նախիրը չեմ բշի, բայց...

Շորերս հագա, դուրս եկա բակ՝ իմ ուտերի, իմ հոգսերի, իմ դրժվար ապրուստի անձիր ծիրի մեջ ընդունելու սուսջին ձյան ճերմակ ու մաքրամաքուր փաթիլները:

Բարսեղը

Մալիբեկյուղի բարափներում հիմա խոտ չկա: Օգոստոսյան արեւն այնպես է հրկիզել բացատները, որ կարծես այնտեղ մայիսյան կանաչի ծիանքի մեջ անասունը չէր խրվում մինչեւ փորատակ: Քթիցը ծուխ է ելնում, երբ տավարը թողնում է բացատը, տալիս շամբուտի մեջ, որ հավաքի թփատակերի խոնավահոտ խաշանն ու տհաճությամբ ծամի. Կիման իր հերթից մի օր սուսջ հարցնում է Ֆելիսյան, որն այդ օրը նախիրը տարել էր արոտի:

-Հանդը ո՞նց է, էգուց տավարը ո՞ր կողմի վրա բշեմ...

-Հանդն ահա սա է, Ֆելիսյա ուրբ խփում է ասֆալտին, ես Կիման գլուխն օրորելով՝ գնում է տուն:

Մալիբեկյուղի բարափները հիմա կորցրել են իրենց հմայքը, ես այդ հմայքը ոչ միայն համատարած կանաչի, բարածերպերին ծաղկող մարենիներով, շիկաբարերի ճեղքերում բուսած խոռն խոտի խնկարայրի մեջ էր, այլ բարափի գլխին գլխաբաց, կեպին ձեռքին հանկարծակի հայտնվող Բարսեղի կանչի մեջ /վերից վար նկատել էր, թե ինչպես բացատում արածող նախիրից անջատվե-

լով՝ ցույցիկը բոսանցով գնաց դեպի ուրիշ նախիր/...

-Հո՛, հո՛, հո՛, ցույցիկո, էդ ու՛ր էլի... Մորթեմ քեզ, հա՛... Մորթեմ միտք Անուշն ուսի...

Բարսեղը Շուրիկի կովերը, ոչխարներն ու այծերն էր արածացնում: Բարսեղը, որ Մարտադայի եղեռնից մազապործ՝ 40-ին մտա հիվանդ, կիսացնոր աղջկա հետ հասել է Ստեփանակերտ: Հանդիպեց Շուրիկին, որը Մալիբեկյուի կիսավեր տներից մեկը նորոգել էր, մտել մեջը, ցանկապատի մեջ առել մի զգալի հողատարածություն, հանդիպակած կիսավեր տունն էլ սարքել, զո՛ւ էս անասուն էր պահում: Բարսեղը տակ տվեց, գլուխ տվեց ու վերջում համաձայնեց հացափոր աշխատել Շուրիկի մոտ: Ինքն ու աղջիկը գոնե ծածկ կունենան գլխներից վեր...

-Հո՛, հոո՛, ցույցիկո, էդ ու՛ր էլի...

Անուշը Շուրիկի համալսարանական ուսանողուհի աղջիկն է, որին Բարսեղը սիրեց՝ ինչպես հարագատ աղջկան:

-Աղջիկ չի է՛, աղջիկ՝ սղա է,-մեկ չէր ստում, երկու չէր ստում, սեսաթ մազերը կարճ կարած, թուխ ու սեռ դեմքով, ջինսե շաղվարդ հագին: Ո՛ւց էր ծեգը-ծեգին մտնում զո՛ւ, մաքրում, աղբը դուրս տանում թափում, դառնում կովերը՝ կթում, որ հասցնի մինչեւ սռափոսյան ժամը ութը: Հետո էլ զուգվում-գարդարվում էր ու թրթռալով գնում դասի: Անուշը տեղովը մեկ հիացմունք է՛ մեկ չի ստում, երկու չի ստում Բարսեղը: Գասից զալիս է տուն, շորերը փոխում, վրան բաշում ջինսը, օրսղն առնում, հո՛ւպ, նստում էջի մեջքին, խնդկի տալով գնում հանդ, որ հորթերի համար խտտ բերի:

-Հո՛, հո-հո՛, ցույցիկո, ետ դառ, անիրավ, մորթելու եմ քեզ է՛, մորթելու, միտք տամ Անուշն ուսի...

Բարսեղի գլխից իջնող նեղ կաճաճով Բարսեղն ասես գլորվում էր դեպի բացատ: Գալիս էր «Պարի օր» ասում, անջրանցիկ թիկնոցը փռում խոտերի վրա, մահակը դնում մի կողմ, գլուխն ափերի մեջ առած՝ պառկում մեջքի վրա, կեպին՝ ծնկաձային:

-Ցույցիկու գնաց դեպի ձեր նախիրը: Գե, ոչինչ, երեւի ձեր կովերը նրա կարիքն ունեն...,- ասում էր մի տեսակ վերացած, հետո աչքերը փակ խորասուզվում ինքն իր մեջ: Անձանոթին կթվար, թե նա բնեց: Նայում էս թուխ դեմքին՝ ոչ մի գառաձայնություն, թեպետ անցել է յոթանասուննիստը:

Այսուկերերին մայիսյան արեւի այրուցներ կան, սրված ու մի ճիչ էլ ճից բթի տակ վերին շուրթը երիզող բարակ ու նոսր բեխեր: Ծոճրակի ոռած երակն այնքան հանգիստ է խփում, որ կարող էս հեշտությամբ համբույրով այդ խփոցները՝ որոշել, թե ինչպես է աշխատում սիրտը: Հնամաշ պիջակի օձիքը ծոճրակի կողմից սեւացել է բրտնափոշու շերտից: Կիսաքաց է նիհար կուրծքը. Շապիկը

Տի կոճկվում՝ մարերը լայնացել են, կոճակ չեն պահում: Չինվորական վարսիքի փողկերն անմիտթորեն խցկել է թեւսինն սասարգնների ճիւղերի մեջ:

Բարսեղը բացում է աչքերը, հայացքը համնում երկնքին: Արտասովոր կապույտ են այդ աչքերը: Մաքուր կապույտ: Ասես չեն տեսել հերկատափի վերածվող Մարտադայն... Ասես չեն կսկծացել Մարտադայի հրդեհների ծուխ ու մրից: Կնոջ դիակը «գրադի» հեղեղի տակ է հուղարկավորել, թաղել Մարտադայի գերեզմանոցում: Երբ թուրքերը ներխուժեցին գյուղ, ես ինքը կիսացնոր աղջկա հետ փախչում էր, ետ չնայեց, որ Դովաի կնոջ պես չբարանա...

Լեւի-լեցուն տունը, ամեն պտղով մոխած այգին, հավ ու ճիւղն ու անասունը, ներքնատան ամբարի տունաներով ցորենն ու գարին, բիրտները լիքը յուղն ու պանիրը մնացին թուրքի: Գինի-օղին կարասների մեջ հորած էր այգում, երեւի չգտնեն: Ամեն ինչ բու-բու ու չու-չու էր: Ինքը բրիգադավար է եղել, Փերմայի վարիչ, վերստուգիչ համաձայնողովի նախագահ: Բոլորն էլ լավ էին սպրում, Մարտադայի բարեբեր ու ջրառատ հողերը պահում էին մարդկանց:

Բարսեղը ձեռքերը հանում է գլխատակից, ուղղվում տեղում, նստում թիկնոցի վրա: Գրպանից հանում է թույունի քակը, ծխախոտ փաթեթում, դնում բարակ շուրթերի արանքում, լուցկի հանում, վառում, ներս բաշում ծուխը, արտաշնչում ես ռոնգերից ելնող դառը ծխի միջից նայում Մալիբեկյուի բարափներին:

Այդ օրը Բարսեղը քեփ չունեք, ճիչ էր ասել՝ քեփ չունեք: Երեսը մազակալած էր, երեւի մի շաքաթ կլինեք, որ չէր թրաշվել: Ոնեւ-միջից աղուն կարծում էր: Մալիբեկյուի բարածերպերից դանդաղ իջնող բաշաթուխայի սառչն ընկած՝ իջավ բացատ, նստեց մի ճից բարի, մահակը դրեց կողքին, հանեց թույունի քակը...

-Շուրիկի մեջքը կոտրվեց... Չգիտե՛ս, չէ՛: Չգիտե՛ս: Շուրիկի Գարիկը գոհվեց մի շաքաթ սառչ...

Ծանր, ճնշող լույություն: Քիչ հեռվում արածող ցույցիկը Բարսեղի տնւոցի վրա գլուխը բարձրացրել՝ նայում էր: Բարսեղը խեղճ-խեղճ նայում էր ցույցիկին ու ոչինչ չէր ստում: Ուրիշ անգամ լինեք, Բարսեղը կասեր՝ արածիր է՛, որ չաղանաս: Հը, ի՛նչ էս նայում, մորթեմ քեզ, հա՛, որ միտք Անուշն ուսի: Բայց հիմա լուռ մնաց: Ու մեկ էլ ձեռքը խփեց ծնկանը:

-Ես էլ ո՛նց հաց կարեմ էդ տանը, հը՛, հայացքը ցույցիկից չկարելով, ասես նրա հետ էր խոսում,- ասաց Բարսեղը: Տղան Ռուսաստանից գրում է, թե՛ փողն ուղարկել, վեր կաց եկ... Գնա՛մ: Ուրքը խփեց գետնին: Էս անտեր հողը թողնեմ՝ գնա՛մ: Մնամ էլ՝ ի՛նչ անեմ... Մարտադայ՝ թուրքի ձեռքի՛ն...

Բաշաթուխայը հասել էր մեզ, տամուկ նստել մեր ուսերին, նա-

խիրը չէր երեսում, բայց փնչոցով արածում էր: Հունն անհանգստացավ, ելավ շարժվեց նախրի կողմը: Բարսեղը կանչեց ետևից.

-Ու՛ր ես գնում, թող հեյվանն արածի, բան չի լինի...

Թանձր մատախուղի մեջ նստած մտածում էր Բարսեղը, եւ տխրությամբ էին լցվել աչքերը: Գիտեր՝ հո անվերջ հացափոր չի մնալու, մեկ է, մի օր պիտի գնա: Թե ուր՝ ինքն էլ չգիտի, բայց... որ գնաց՝ կովերը, ոչխարներն ու այծերն ո՛վ պիտի պահի: Անու՛շը... Խեղճ աղջիկ: Եղբորը կորցնելուց հետո մի տեսակ կուտվել է, էլ էն թափին չէ: Ցուրտ կլինի, անձրեւ կանի, Անուշը մնա ցրտի մե՛ջ, մրսի, հիվանդանա՛: Կուտվեց Հուրիկի մեջքը, կուտվե՛ց:

-Արա, բա մարդ ուրիշի սայրանքն էդպես կպահի՞... արա, բա մերոնք չեն ամաչու՛մ էդ Բարսեղից, հարցնում է Կիման Ֆելիքսին:

-Մարդ է, մա՛րդ, խիղճ ունի, խղճմտանք ունի... Չէ՛, մերոնց նման... տանեն նախիրը սաղ օրը դալ անեն, իրիկունը սոված բերեն տուն...

Անցան օրեր: Օրե՛ր, շաբաթներ: Մերկացել են Մալիքեկվյի բարածերպերի մատենիները, խամրել է Խոռնխոտի խնկարայրը: Քարափի գլխին գլխաբաց, կեպին ձեռքին էլ հանկարծակի չի հայտնվում Բարսեղը, որ գիլ ձայնով կանչի.

-Հո՛, հո՛, հոո՛, ցուլիկո, էդ ո՛ր էլի... Մորթե՛մ քեզ, հա, մորթե՛մ...

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ

Խզում

Մեր տունն անտառամերձ է: Մեր պատշգամբից՝ գյուղն ինչպես սփիղ մեջ, փռված է շրջակա չորս բլուրների գրկում ու բլրալանջերին, որոնցից երեքը լերկ են: Ասենք՝ սիսալ կլիներ դրանք բլուրներ համարել, կարող են նույնիսկ վիրավորվել, սարեր են ու ոչ այնքան փոքր սարեր, որոնցից այդ երեքը՝ Հարթա խույթը, Փոքր նահատակը եւ Մեծ նահատակը մի ժամանակ, ստում են, պատած էին թավուտ անտառներով: Բայց թե այդ երբ էր, պատա էլ չէր հիշում: Այդ անտառները վաղուց բաշվել էին, իրենց փեշերը հավաքել ու հիմա նրանցից մնացել է մի շերտ, տաստիս կապտակա նաչ լաջակի նման, թառ սոված Հեխուն հարթով, որ ամենից բարձր սարն է: Դե այն երեքը սկի էլ լերկ չեն, եթե հաշվենք, որ նրանք էլ պատած են ցախի ոչ խիտ թփուտներով, տեղ-տեղ՝ մոշ ու մացառուտով, որոնցով ոչխարի հոտն անցնելուց հետո տատա ամեն անգամ մի գիրկ բուրդ էր հավաքում:

Մեր տունը հենց Հեխուն հարթի անտառամերձ տունն է, ուր հիմա ոչ ոք չի ապրում, գրնե առայժմ՝ ոչ ոք: Երբ շաբաթ-կիրակի օրերը գալիս են գյուղ, անմիջապես բարձրանում են տան երկրորդ հարկ, կանգնում պատշգամբում, սպա նրա լայնքով ու երկայնքով գնում են ու գալիս, հետո իջնում են այգի, մեկ-մեկ ծառերը շոշափում, մտերմիկ շոյում նրանց, դեռ ու դեռ տնտղում, որ տեսնեմ՝ ո՛նց են զգացել իրենց իմ բացակայության ժամանակ: Իսկ մերոնք՝ իմ հորեղբորանց խալիսն այդ արանքում իրենց բակից նկատում են, որ արդեն եկել են:

Եկել են, այո, եւ ահա մտադիր են իջնել գյուղամեջ, մտքումս կխոսեմ մերոնց հետ, նայելով նրանց տան կողմը: Մեր բակից այնտեղ լավ է երեսում նրանցը, ու ես պարզ կտեսնեմ, թե ինչպես այնտեղ կանգնած հորեղբորս տղան, երեւի կռահելով մտադրությունս, կշտասալի իջնել Միրզաբեկանց բուսան, ուր այս անգամ որոշել է վերջապես թակարդ գցել ինձ:

Քիչ հետո մենք կհանդիպենք երես առ երես ու ես, կանխելով նրա «բարեւ, բարիւն տեսանք», անմիջապես նախահարձակ կլինեմ.

-Ես քեզից նեղացած եմ, Աշո՛տ:

-Ինչո՞ւ:

-Տղաներիդ գյուղից բշում ես բաղաք:

Աշոտն ինձ լավ կհասկանա. շաբաթ-կիրակի գնալ-գալ կա: Տան եղած-չեղածից կտանեն, յուր կզնան մինչեւ մի կարգին գործի

տեր դառնան: Որոշ ժամանակ էլ կատարեն վարձով:

-Որոշ չէ, անորոշ ժամանակով:

-Մտքերս կարդո՞ւմ ես, կհարցնի զարմացած:

-Չէ: Բարձրաձայն էիր մտածում:

-Թեկուզ անորոշ... մի տարի, երկու, երեք: Լսավ՝ հինգ: Վերջապես, կստանան, չէ՞:

Հոնգերը կբարդվեն աչքերի վրա: Աչքերը կփոքրանան-կփոքրանան ու կկորչեն մթանած հոնգերի սովերներում: Կմտնի թես ու կբաշի:

-Գնանք: Երկու օր է, լսել եմ, եկել ես ու չես անցնում:

Աշոտի հետ կմտնենք բակ: Նախիրն արդեն կվերադառնա: Խաղաղ ու կատույա իրիկնաժամ կլինի: Չգիտեմ՝ ինչու, չնայած ամեն անգամ էլ աչքովս եմ տեսնում, էլի ինչ-որ՝ չեմ հավատում, թե գյուղում հիմա նախիր կա եւ պետք է լինի, անհատական կովերի նախիր, որ որեւէ մեկը նորից կարող է կով պահել, գոմ մաքրել, կով կթել, խոտի հոգս անել, ինչ իմանամ, անասուն պահելու հետ կապված հազար ու մի բան: Ես նախիր պահել եմ, կոյունտեսության նախիրը, բայց դա տարիներ առաջ էր: Ես նախիրը բռնատնական թվականներին թողել եմ Իսաղին ծնակի բացատներում եւ հոնի կարմիր մահակս խրել Մոշ աղբյուրի մացառուտի մեջ, վերջին անգամ մի կուշտ ջուր խմել, քանակապես հասակս թողած աղբյուրի հայելում, հեռացել ու էդ հեռանալն էր: Հիմա այդ նախիր վերադարձը մի տեսակ կվերադարձնի ինձ այն հեռավոր ու արդեն հուշ դարձած ժամանակները:

Աշոտը երկաթե դարբասի դուռը բաց կպահի, որ անասունները ներս մտնեն:

-Եկ, նարինջ, ի՞նչ ես մաթ մնացած նայում, չես ճանաչո՞ւմ քաղաքից եկած մեր ախպորը...

Ասող հասին վերեւից կնկատի մեզ ու բակ կիջնի: Մինչ նա կողջագործվի ինձ հետ, նարինջը ներս կմտնի ու կմղվի դեպի մտորը:

-Իսկ դու ի՞նչ ես խղճել, Նաղա՛շ, համեցե՛ք,- Աշոտն այս անգամ էլ երինջին կհրավիրի: Մա էլ ներս կմտնի, որին կհետետեն մի բանի ոչխար:

-Մեկ, երկու, երեք, չորս, հինգ...-կհամրի, դուռը կփակի ու կդառնա մորը...- Անդրոու կին, էս անասուններն աչքիս էսօր մի տեսակ շշկված են երեսում, բան պատահած չլինի՞:

-Ոչինչ էլ չի պատահել, փորձված աչքերով իբր տնտղելով անասուններին,- դարիբ մարդ են տեսել՝ դրանից է,- ու կնայեն իրար, կծիծաղեն:

Հայացքս ցուցադրաբար կզգեմ տան երկրորդ հարկի պատշգամբին: Մայր ու տղա կհասկանան, որ դրանով ուզում եմ իմա-

նալ՝ պետրը տա՞նն է: Աշոտը այնպես հասկացող-հասկացող կժպտա, որ կնշանակի՝ տանն է, մայրը դրականորեն գլխով կանի անխոս եւ մի այնպիսի աղերսանքով կնայի ինձ, որից ես կհասկանամ, որ պետրի հետ իմ հանդիպումն այնքան էլ հեշտ չի ընթանա, որ ծանր խոսքեր, այնուամենայնիվ, կլինեն /ոչ ինձ, ոչ էլ իրենց համար հանելի/ բայց դե փոքրը ես եմ, պետք է տանեմ, համբերեմ, չնայած հորեղբորս կտորն եմ, նրա պես իր ստածին, համառ ու կողհաստ: Վերջիվերջո պիտի հաշտվե՞մք, թե չէ՞: Ապրել կա, մեռնել կա, ուրախություն ու դժբախտություն կա, հո պետրն ինձնից խոռով չպիտի հեռանա այս աշխարհից: Մեր այս լուռ ասել խոսելն իրար հետ ու լուռ հասկանալն իրար կեզրափակի Ասող հասին:

-Դե գնանք, գնանք վերեւ:

-Դուք բարձրացե՛ք, ես ես սալրանքը բեջարեմ, հետո,-կասի Աշոտը ու ոչխարը կբշի գոմ:

-Ես ուզում եմ Աշոտին օգնել,-կասեմ ու կհետետեմ նրան: Ասող հասին մի պահ կկանգնի վարանոտ, սպա կռահելով, որ խորամանկում եմ, ուզում եմ ժամանակ սալ, որ այդ արանքում նախապատրաստի պետրին ու...նա կբարձրանա վերեւ:

Գոմում, մաքուր սպահասակին, որ դեռ առավոտվանից էր փայլեցված, Աշոտի գրկից մեկ-մեկ ընկնող ծղոտի ցողունները կիսամթան մեջ կկայծկլտան անասելի ճերմակությամբ: Մա իր գիրկը կդատարկի ախոռների մեջ, եւ անասուններն այնպես կգրոհեն կերի վրա, որ կարծես հենց նոր չեկան հանդից: Նարինջն իր «աղջկան» Նաղաշին կպոզահարի մի կողմ, իր համար վայելքի արվելի լայն տարածություն գրավելով: «Աղջիկը» ասես մի տեսակ դժգոհ, բայց զիջողաբար՝ կնայի մորը, սպա գործի կանցնի մի այնպիսի փնջոցով, որ ռոնգերից ելնող շունչը կայրի ոչ այն է՝ իր ներսը, ոչ այն է՝ իր դուրսը:

Չեռքս կդնեմ երինջի լանջին ու կզգամ, թե ինչպես է ափիս տակ սարսուռ մաշկը: Աչքերը կխլշեն թշնամաբար, հետո՝ ըստ երեսության, հասկանալով, որ ես կարեկցանքի նման մի բան եմ ուզում դրանով հաղորդել իրեն, հանգիստ կծամի ծղոտի արանքից որսած մի բուռ խնձորածաղիկը, որ նրա բերանից կբուրի ամռան արեւի տակ կծղած, բայց տակավին իր մեջ պահած ժառ բուրմունքով:

Գոմի վերին բունջից, գոտկաչափ բարձր միջնորակից այն կողմ աղերսագին կմրզգա նարինջի Ջանիկ հորթը, երեխայի նման ուղեբոր գետնին կխափի, թե ծիծ է ուզում: Ես կբացեմ փոքրիկ դռնակը, հորթին կարձակեմ ու նա, հրմշտելով ինձ, դուրս կմղվի, կնետվի առաջ, կչոփի առջեւի ծնկների վրա, դնելով կորսա մոր կուրծքն ու կաթով լի պտուկները:

-Էդ օգնում ես,- կհարցնի Աշոտը մի տեսակ ձեռք առնելու նման:
-Մայած՝ ում,- կսպասասխանեն, իբր՝ շհասկանալով, որ հորթը
պիտի արձակելի կիթից հեռու միայն:

-Իսկ ես մտածում էի՝ այսօր քեզ թարմ կայծով հյուրասիրել...
Անա իմեցիր, հա՛...

-Ես միշտ էլ իմ բերանից... կտրել եմ:

-Քո էդ «հումանիզմը» ինձ միշտ էլ դուր չէր գալիս: Գու լավ կա-
նեիր, եթե հետեւեիր հորեղբորդ կնոջը եւ ինքդ ընդունեիր հորեղ-
բորդ առաջին հարվածը...

Բազմանշանակ կնայեմ Աշոտին: Չի դիմանա հայացքիս ու աչ-
քերը կխոնարհի ցած: Իրիկնաժամի մուրթը հետզհետե կխորանա
գյուղում եւ մթան մեջ այլևս անհնարին կդառնա նրա դեմքից
կռակել, թե ինչի մասին է մտածում, մինչ շուրթերը մեծ դժվարու-
թյամբ կարտաքերեն:

-Էն խոխան ես տարի ի՞նչ պիտի անի:

Աղջկա մասին է խոսում, Մաղենի մասին, որ անցյալ տարի
չնդունվեց ինտիստուտ, կոնկուրսով դուրս մնաց: Նեղացավ ինձ-
նից, խիստ նեղացավ եւ հոր պես գրեթե մի տարի հետս չխոսեց:
Քա ես ասրեմ, աշխատեմ քաղաքում ու չօգնեմ աղջկան, որ ըն-
դունալի: Չօգնեմ, հերիք չի, դեռ կոշտ ու կոպիտ վրա բերեմ:

-Թե գիտելիքներ ունի, թող ընդունալի:

-Գիտելիքներով չի,-ասել էր Աշոտը ու բազմանշանակ ծիծաղել:

-Գոնե էս տարի ձեռքդ վրան պահիր, որ անցնի,-մթան մեջ բա-
ռերը հատ-հատ կկայծեն մի այնպիսի տառապանքով, որ եթե էդ
անցնելը ինձնից լինի կախված, հոգիս տամ, ազատվեմ: Բայց էլի
Աշոտը մթան մեջ կսպասի, թե ինչ պիտի ասեմ, կսպասի ձեռքը
սահեցնելով երինջի մեջքով, պոզերի արանքով անցկացնելով
կշռի ճակատն ու աչքերն այնպես, որ անասունը մեծ բավականու-
թյամբ ընդունի այդ փաղաքշանքը:

-Ինձ դրա՞ համար էիր կանչում ձեր տուն,- մթան մեջ բառերս կին-
չեն կրակոցի պես ու ես չեմ իմանա՞ր Աշոտը «կենդանի» մնաց, թե...

-Քա էլ ո՞ր օրվա հարազատներ ենք,- կլավի մի խուլ տնեց ու
միտքս ցավով կդառնա սրտիս:

-Եթե ուժս չի պատում, ուրեմն...հարազատներ չենք:

-Կտրե՞չ չունես, է, կտրե՞՛չ: Քո էդ գործը, բո գրիչը ինք լինել... -Մը-
թան մեջ կեզրասիակի Աշոտը, հոգու մեջ խոր ու խուփ անթեղելով
վիրավորանք: Երեսանց կասի, կխոսի, մտերմություն կիսադա,
բայց ես կհասկանամ, որ մերն այլևս չի ստացվի...

Հարսանիք

Գնում եմ գյուղ՝ Կուսաբերդ: Վահանը հրավիրել է ինձ որդու
հարսանիքին, Վահանը՝ հորեղբորս տղան ու իմ մանկության ըն-
կերը: Գնում եմ հարսանիք ու նվերի մասին չեմ մտածում: Հիմա
նման դեպքերում նվեր չեն տանում: Հարսանգատիրոջ բարեկա-
մուհիներից մեկին նստեցնում են աչքի զարնվող մի տեղում, մա-
տիս ու անար դնում ձեռքին, թե գրիր հրավիրվածի անուն-ազգա-
նունը, դիմացը նշիր մուծած գումարը:

Գնում եմ գյուղ, հարսանիքի: Թե խոսք տան, մի բան կասեմ,
տեղում կմտածեմ, թե ինչ: Նախօրոք միտք չունի որոշել, թե հատ-
կապես՝ ինչ: Համենայն դեպս, երբ բաժակը ձեռքս առնեմ, Վահա-
նը, բազմանշանակ ժայիտը դեմքին, կկանգնի սեղաններից վեր,
տան անմիջապես շեմին, հայացքը խոնարհած, մարմանդ ժայիտը
շուրթերից կախ, կոշտ ու կոպիտ, հագար տեղից ճաշ տված ձեռքե-
րը փորի վրա դարսած, կսպասի, թե ինչ կասեմ: Մայրը՝ Աննան,
մի բիջ առաջ կգա, կկանգնի որդու կողքին: Նրանց թիկունքում
կհայտնվի Սազիկը, Վահանի կինն ու Աննայի հարսը եւ կստացվի
լուսանկարվելու նման մի բան: Հարսնացուն ու փեսացուն, նստած
պատշգամբի դիմաց դրված լեփ-լեցուն սեղանի առաջ, գլխները
կախ, ոչ այն է՝ ամոթխած, ոչ այն է՝ զարմացած, որ այդքան մար-
դիկ են հավաքվել վկա լինելու իրենց կյանքի ամենանշանակալից
իրադարձությանը, ներքին անհանգստությամբ կսպասեն, թե
առանձնապես ինչ պիտի ասեմ ես:

Իմ աչքը կընկնի նրանց սնարին կախված նախշանկար գոր-
զին, որի վրա բանբակով գրված կլինի. «Ռոբերտ եւ Մանար, ձեզ
երջանկություն ենք մատրում»: Ես հենց այդտեղից էլ կսկսեմ: Իմ
խոսելու ընթացքում Ռոբերտն աչքը կզցի իմ աչքին, որ հանկարծ
չփոթվեմ, չսսեմ՝ Օրս, Օրիկ, Ռոբիկ, ինչպես սովորաբար դիմում
էի նրան, այլե՛ւ Ռոբերտ, ուղղակի՝ Ռոբերտ: Նա հայացքով կաղեր-
սի, որ չփոթվեմ, ամոթ է, ինքն արդեն մեծացել է եւ, ինչպես տես-
նում եմ, ամուսնանում է: Տղան բանակից եկել ու ամուսնանում է,
կամուսնանա, մի քանի օր կմնան տանը ու Մանարին, գյուղի ամե-
նից սիրուն աղջկան կառնի ու կտանի Նաչիկ:

Ռոբերտը գիտե, որ ես դրան դեմ եմ, գիտե, որ հայրը՝ Վահա-
նը դեմ է, մայրը՝ Սազիկը նույնպես, տատը՝ Աննան, չի էլ ուզում
լսել այդ մասին:

Անհոգ մնա, Ռոբերտ, ես բաների մասին չեմ խոսի: Երբ բաժա-
կը ձեռքս առնեմ, աչքի պոչով իմաց կտամ, եւ դու կհասկանաս, որ
եսայիսի բաներով չեմ մթազնի բո ուրախությունը... Հարսանիքում
ընդունված չե՛: Մանարի սկանչին էլ շշնջա, որ չեմ ասի, թող սիրտը

վախվորած չթիրոսա կրծքի տակ, ինչպես ճնճողուն էր թփրտում
բո ափի մեջ, երբ մի ժամանակ որսում էիր նրանց: Մանարն էլ դեմ
է բո Նաչիկ գնալուն: Բայց դե, ինչ կարող է անել. խուսերդ ակամեջ-
ներին օղ է արել, ինչպես սղամանդե այն օղերը, որ որպես ընծա
էր տարել մայրդ.

-Չես գա, ուրեմն՝ դու կմնաս, ես՝ կգնամ...

Հառազունել էր Մանարի սիրուն դեմքը, երկար, շիկավուն թար-
թիչները խոնարհել էր, հուզումնաբեկ կասպոյտ աչքերը ծփացել էին
կասպոյտ լճակների պես ու խոսք չէր գտել ասելու: Ձեռքը տարել էր
ուսերն ի վար կրակի պես աղեկոծվող շիկաւեր մագերին՝ իբր հար-
դարելու, որ չմտնի իրեն: Տավի պես մի բան է ծակել սիրտը, որ
գնալու է... Մտածել է, թե ինչ է անելու, երբ հիշի սարեն Հարթը,
Հարթա խոյթը, Մեծ ու Փոքր նահատակները, Ջինհագին աղբյու-
րը, որ գիշերվա մթան բողի տակ կարտասովի իր կարոտից, ինչպես
իր սիրտը՝ այն նորաբաց ու թարմ մանուշակի համար, որ ամեն
գարնան աշխարհ կգա կասպոյտ իր աչքերի երանգներով, սիրտը
հագար տեղից կխոցվի, երբ ամեն անգամ հիշի մոր խոսքերը.

Մանար, բո աչքերը մանուշակի թերթեր են...

Գնում եմ գյուղ: Վահանն սպասարել էր.

Հարսանիքը՝ հարսանիք, բայց դե, եկ մի տես ինչ ես անում, գու-
ցե ի՞նքո համոզես ես տղային, որ չգնա, գուցե լսի քեզ:

Իմ աչքերը այս խոսքերից խոնավացել էին: Թվացել էր, թե սյդ
խոսքերը ոչ թե հաղորդում էին նրա անունից, այլ հենց ինքն էր
ստում դեմս կանգնած, նշանակալից, ազդեցիկ, ես ստում էր այն-
պես, որ բառերն իջնում էին սրտիս՝ ինչպես ձյան առաջին սառն ու
անբիծ փաթիլներն իջնեն խոնավ ու թաց հողի վրա:

Իմ աչքերի դեմ պարզորոշ ընդգծվում են Վահանի հաղթ ուսերն
ու լայն թիկունքը: Չգիտեմ՝ ինչու, թվում է, թե նրանք հիմա ճեղք ու
փլվածք են տվել, ինչպես երբեմնի գոմի հին կտուրը պատերազմի
ժամանակ, երբ հայրը մեկնել էր ճակատ ես... դեռ ինքը մի մատ
երեխա էր: Թվում է՝ ճեղք է տալիս պատը երկհարկանի ու գեղե-
ցիկ մի տան, որ ինքն է որմնադրի իր ձեռքերով կառուցել այն եր-
բեմնի ու փլված գոմի տեղը: Գյուղի ամենից երեւելի տան
պատը...

Որդին որոշել է բաղաբում ապրել: Իսկ հոր կարծիքով նշանա-
կում է՝ լքել իրեն, կնոջը, տատին, տունը, գյուղը:

Մինչդեռ՝ ի՞նչ երանությունն էր մտածում, որ, ահա, նա շուտով
կավարտի ծառայությունն ու կգա: Մախօրյակին վերջին մակնիշի
«Ժիգուլի» մեքենա էր գնել, մտածելով, որ ընտանյո՞ք հանդերձ, մե-
քենայով կգնան գործի ու կգան:

Արտադրության առաջավոր էր, ճանաչված վարպետ: Մախա-

գահն ընդառաջել էր նրան, մեքենան հատկացրել անհերթ: Որդու
վերադարձին ճոխ սեղան էր բացել: Մարդիկ եկել էին աչքալու-
սանքի ու վայելելու յոթը տարվա զինին: Իսկ նախագահը բաժա-
կը բարձրացրել էր ու թե.

-Ո՞ւմ աչքը լույս, մե՞ր, թե...

Նաչիկից եկած մորաբոջ տղան, որ արդեն իր գործը տեսել էր
Ռոբերտի հետ, ընդհատել էր նախագահին.

-Մեր աչքը լույս... Ես Ռոբերտի համար բաղաբում աշխատանքի
տեղ եմ արել... -պրոֆիլակտորիայում:

-Ինչ պրոֆիլակտորիա, ինչ բան... Էն որ ժե՛ծտ են թակում, սար-
բում, արհամարհանքով ասել էր Աննան ու ձեռքն այնպես է վրա բե-
րել, որ նշանակել է, թե այլևս այդ մասին ոչ մի խոսք:

Աննան, որ պատերազմում զոհված ամուսնուց հետո երեք որ-
բեր է պահել, մեծացրել: Աննան, խտտաբարո, ազնիվ վարք ու
բարբո՜ւ, որ ջահել ժամանակ պացիկ էր ու գեղեցիկ, որ այս հասա-
կում էլ տակավին մնացել է նույնը եւ տեսնողին մի այնպիսի
պատկառանք է ներշնչում, ինչպես Տիրամոր պատկերը:

Եվ հիմա ես պարզ տեսնում եմ այն պահը, երբ Աննան մոտե-
նում է շեմից ներս մտնող թեանցուկ զոյգին՝ Ռոբերտի ու Մանա-
րի ճակատն է համբուրում, ապա դառնալով թռռանը՝ որպես
խրատ ու մաղթանք, ասում.

-Ես այս տունը բո մորը հարս եմ բերել ու իմ հարսից լիացել:
Թող բո մայրն էլ բարով խնորով իր հարսից լիանա...

Մագիկն էլ կմոտենա, Աննայի գովական հարսը, Ռոբերտի
մայրն ու Վահանի կինը, կմոտենա, կհամբուրի զոյգին, Մանարի
ճառագած մասներին մի մատանի էլ կհագցնի ու հագիվ կշշնջա.

-Մի բարձի ծերանագ, բայց այնպես կշշնջա, որ կթվա, թե խեղ-
դում է հոգու տվյալսանքը, որպեսզի հանկարծ չպռոթվա.

-Ես հարսանիքն ինձ համար մի երագ կդառնա, երբ դուք գնաք...

Սորախարսն ավերի մեջ կառնի ջահել սկեսրոջ ձեռքը, կտանի
ու կհայի շարթերին այնպես, որ կարծես դրանով կուզելը ասել.

-Մանա, իմ կողմանի հոգուդ մեղք չանես...

Իսկ Վահանը... Դե, Վահանին ինչ, տղամարդ է, չի մատնի հո-
գու խռովքը: Հարսանիք է, իր առաջնեկի ուրախությունը, մարդիկ
հավաքվել են ուսել-խմելու եւ քեֆ անելու համար, հոնքեր հո չի՞
կխտելու: Կշակի մեջքը, ուրախ-ուրախ հրահանգներ կսա, կնայի
սեղանների՝ ինչ է պակաս, ով ինչ պահանջ ունի, կբավարարի,
օգնողներին կհորդորի այնպես անել, որ ամեն ինչ տեղը-տեղին
լինի, որ եթե հարկ լինի անգամ՝ ձեռացնել, թե չի լսել մեծ հորեղ-
բոր խոսքերը.

-Մեր ես Ռոբերտը հանկարծ չկուտրի՛ հոր մեջքը...

Գնում եմ գյուղ: Գիտեմ, առաջինը ընդամաք է գալու մեր մեծ հորեղբոր տղան՝ Աշոտը: Ձեռքս կսեղմի պինդ ու այնպես հուսպ կտա, որ աչքերիցս կայծեր ցայտեն: Հետո, դեմքին մի խորամանկ ժպիտ խաղացնելով կասի.

Ինձ էիր ստում, թե տղաներիդ գյուղից բշուս ես... բա սրան /մասնացույց անելով Վահանին/, ի՞նչ կասես:

Դե, ես ինչ պիտի անեմ, իրեն էլ լավ գիտեմ, Վահանին էլ: Վահանը մնում է Վահան: Միտքս կռահելով՝ Աշոտը խոսքը շուտ կտա ուրիշ կողմ:

Չինհագին աղբյուրը նոր տեսե՞լ ես... Թե չես տեսել, գնա հարսանիքից առաջ այդ ջրից խմիր:

Ակնարկը թափանցիկ կլինի... իսկ ես, իրոք, աղբյուրը նոր տեսել էի եւ Աշոտը կուզեմ, որ անպայման տեսած լինեմ: Վահանը կուրացող աղբյուրը մագրել էր, գետնի տակով մագրելով գնացել էր մինչեւ ակնը, ինչպես ինքը կասեր: Ջրամբարի ձորի քարահանեփց հանել էր կարծր ու պինդ կարմրաֆայր, որից մի այնպիսի գուն էր սարբել աղբյուրի համար, որ տեսնողները շքնել են: Գունի մի թեւի վրա տիեզերանավ է հարթաբանդակել, մյուս թեւի վրա՝ սկաֆանդը՝ կարծես ցանկանալով դրանով՝ աղբյուրին ժամանակակից հնչելություն տալ: Գունից վեր շուք է անում նրա ձեռքով հղկված մի ուրիշ կարմրաֆայր, որի վրա գրել էր. «Ես, որդի Տիրանի, Վահան Գրիգորյանս շինեցի Գունն այս այնպես, որ հավիտյանս հավիտյան չկուրանա աղբյուրս... 1980թ.»:

Երբ թեքվել եմ գունի վրա ու շուրթերս սուզել սառը ջրի մեջ, ինձ թվացել է, թե գունից նավի մեջ ցայտող ջրաշիթերը մեղեդիացած շնչացել են շուրթերիս տակ:

Որ հավիտյանս-հավիտյան չկուրանա աղբյուրս...

Ջրի պարզկա հայելու մեջ արտացոլված մագրերիս ճերմակությունը մատնել է առաջացած տարիքս ես... ինձ այնպես էր թվացել, թե իմ աչքերից ինձ էին նայում իմ ապուսապը, իմ պսուղը, հայրս, որ հիմա չկա, իմ Տիրան հորեղբայրը, որ դարձյալ չկա, մեր մեծ հորեղբայրը, որ դեռ ապրում է, մեր Աննան, Վահանը, Նազիկը, Ռոբերտը, Նանարը... Այո, ես այդ պարզ հայելու մեջ տեսա նրանց, ջրի սառը շիթերի հետ այնպես երկար-երկար ընայեցի, որ ներքծվեմ մեջս ու հավիտյանս-հավիտյան մնամ:

Հետո բարձրացել էի, համբուրել դիմհար քարի վրա «Կիրվածքը», ինչպես Աննան կասեր, երանության մեջ շնչալով:

Գու մեր տոհմի, հողի ու ջրի ամենից լավ ջիղն էս, Վահան...

Մտովի աչքիս առաջն է գալիս Ռոբերտը, իսկ ես իսկ՝ Վահանի տղան է, բայց նա ավելի շատ իր Տիրան պապին է հիշեցնում: Ավելի

լի ճիշտ՝ քանի մեծանա, այնքան ավելի կմոտենա պապին ու այնքան ավելի շատ կհիշեցնի նրան՝ հոնգերը բթարմատից ձգվում են դեպի աջ ու ձախ՝ ծիծեռնակի գույգ թեւերի պես: Իսկ աչքերը...

Հիմա չգիտեմ, թե որ գնամ, ինչ պիտի անեմ կամ ինչո՞ւ հատկապես ես պետք է մի քան անեմ, որ Ռոբերտը չգնա: Կարծես չգիտեմ, որ այդ հարցով մի անգամ չեմ որդու հետ խոսել, փորձել հետ պահել սխալ քայլից: Իսկ որդին ոչ տարել է, ոչ քերել ու թե.

Վա՛հ, էդ գյուղում ապրելը, որ եղբան լավ է, դու ինչի՞՞ ես քաղաքում մնում...

Ոնց էլ բռնեցրել է: Լեզուս կապ էր ընկել: Հիմար էլ չի, թե ասեմ հիմար է: Արժե՞ր, որ հատկապես ես այդ թեմայով խոսեի նրա հետ, երբ իմ օրինակն այնքան էլ վարակիչ չէր: Հետո տեսել էր, որ լավ քան չստացվեց, փորձել էր ելք գտնել, ինձ հանել իմ ընկճված վիճակից:

Գե քո ժամանակներն ուրիշ էին... Վա՛հ, խորամանկ-խորամանկ ժայտացել է աչքի մեկը կկոցելով-գուցե՞ վերադառնա:

Հիմա իմ վերադառնալուց գյուղին ի՞նչ օգուտ: Էն ժամանակ ուրիշ էր. եթե հիմիկվա խելքս լինե՞ր...-ասել եմ միանգամայն անկեղծ եւ, ըստ երեւոյթին, աչքերս տամկացել էին, ու, նա զգացված, հայացքը փախցրել էր ինձնից:

Գնում եմ գյուղ, Կուսաբերդ: Ինչ խոսք, գյուղ եմ գնում հաճելի առիթով՝ հարսանիքի: «Հարսանիքը՝ հարսանիք, բայց դե եկ, մի տես ինչ ես անում» Վահանի ապապարանքը ասես մի տեսակ սառը ջուր է լցնում ուրախությանս վրա, գնայի առանց որեւէ մտահոգության, հոգս ու պարտականության, գնայի ուրախանայի իմ այդ հարսագանների ուրախությամբ, անհոգ ու անկաշկանդ...

Լսել եմ, թե վերջերս էլի հայր ու որդի վիճել են.

Մեքենան հետս տանելու եմ, -ասել է տղան:

Վնա տարար, հա՛...

Մի տասնհինգ հազար էլ կտաս, որ այնտեղ տուն առնեմ:

Վարձով կապրես, -հեզնել է հայրը, -որ իմ ես պապտները չես հավանում, այնտեղ վարձով կապրես: Չմոռանաս Էստեղից մի Ռոբերտ ու Նանար ուղարկել, որ նրանք էլ իմ տանը... անվարձ ապրեն:

Նրանց վեճը՝ վեճ, բայց վերջին խոսքն, ըստ Վահանի, ինձ է պատկանում: Հույս ունի... Ես կգնամ ու մի անգամ էլ կփորձեմ Ռոբերտին ետ պահել իր սխալ քայլից: Տա Աստված, որ գոնե այս անգամ նա ինձ լսի: Կլսի՞, արդյոք, չգիտեմ, բայց հարսանիքը՝ հարսանիք կլինի: Եվ ի՞նչ հարսանիք...



ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՐԱՓ


(Իրապատումներ)

Սրբագրիչ
Համակարգչային
շարվածքը՝
Էջադրումը՝
Կազմի
ձևավորումը՝

Արիս ԳՐԻԳՈՐՅԱՆ
Մարի-Լույս ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Լուսինե ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ
Ալվինա ԱՌԱՏԱՄՅԱՆԻ

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափերը՝ 60x84/16,
ծավալը՝ 5 տպ. մամուլ: Տպագրմանը՝ 300:

Տպագրվել է «ԳԻԶԱԿ ԳՂՅՈՒՄ» իրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25
Ստեփանակերտ 2011



Քարափի վրա վրեժում էր չիւն,
Քլորենը ի վեր ու չորերն ի վար,
Նմ չայել նրա դողանգում էր պիլ
Նմ արչացանձն էր լավում ընդերկար:

Շոգավում էին արվերենը իրար,
Մեծոռում էր կապույտը վերիւն,-
Մեկը ցնում էր այդ կանչի վրա՝
Նրկնի պեժը առած ուսերիւն...

Արմեն Դովհաննիսյան